հեցիր : — Եթէ ժամանեակդ պարապ ան-
ցուցիր : — Եթէ առաւ իրիկուն առանց ա-
զուժքի անցուցիր, պարզապէս շաշխուսութիւ-
նը ծուլութեան համար :

Ա թուն-նիւն ըքէր . Եթէ վերջին զախ-
նանց ու առելու խմելու պաց դրիր, եւ անոք
մահուչափ մոզքի մը մէջ բնիւրի : — Եթէ
ոչնչափ խմեցիր, որ գիշովնալով բնը զինք գ
կորուցուցիր : — Եթէ ու առելու խմելու յափէ
դարս բազմանք ունեցար կամ կերար խմեցիր :

Բ ա ն ի ն ո ւ ն ի ն ը քէր . Եթէ մարմանկան
մէջ բուլ մը հեշտացար ինչ կերպով որ ըլ-
լոյ թուզ ըլլոյ, թէ խոսքով եւ թէ զարծ-
քով : Եթն մէծ ու պատիկ մարմանկան հեշ-
տաց թիւն ու մահուչափ մոզքին տակն է,
ու ասի եւ լու պիտի քննեա խոզնմանը, ու
պիտի յայտնեա խոստագութեան մէջ ամեն
պարագաներով մէկուր :

Ըսկէ զար ամեն մինակ իր տամնաբնն
պարագերն ունի, մանու անոր. Եթէ ամու անա-
ցեալ ես, պէտք է որ նայիր թէ ինչ պար-
ագանակ թիւն կայ ամու անացելոց մէջ : Պար-
ագանակ Եթէ անք կամ տիկին ես, Եթէ սպա-
քնեւ զքեզ :

Ազգի խոհելու հայոց ժամանելուն
Եղբա:

Ամենակարող Աստուած, կը տես-
նեմ ահա խղճի մտաց քնութենէն
և ամեւ՝ որ շատ կերպով քեզի դեմ
մեղանչեր եմ։ Ա՛յ որդիու ըստելու
արժանի չեմ։ Կը խոստախնիմ այս
յանցանիքներս. բայց կը խողընը
միանգամայն խոնարհութեամբ որ
զիս երեսէ չձգ ես։ Դարձուր, Տէր իմ,
աշտըներդ անօրէնութիւններէս։ Տես
սրտիս ցաւն ու հոգւոյս դառնաւ-
թիւնը։ Ոզորմե ինձի մեծ ոզորմու-
թեանդ համեմատ. եւ ընդունէ զիս
գարձեալ բազկացդ մեջ՝ ուսկից հե-
ռացոց զիս մեղքը։ Թող որ դառնամ
նորէն երկնաւոր Հօրդ տունը՝ ցնծու-

թեան ու խաղաղութեան բնակա-
րանը, ուսկից աքսորեցին զիս մեղ-
քերս։ Հաստատութեամբ կ'առաջա-
դրեմ ալ երբեք քեզի դէմ չմեզան-
չելու։ զիմած սիրուդ ամենեւ ինչ չփռշ-
տացրենելու։ Ոհ, որչափ գժբախտ է
հոդի մը, որ զքեզ՝ ամենայն շնորհաց
ազբիւրը կը թողմ, եւ կ'երթայ
պլառոր ջրերով իր ծարաւն անցնելու։
Աստուած իմ, բոլորովին ձեռքդ կը
յանձնեմ ինք զինքս։ Հեռանայ իզմե-
այն ամեն բան՝ որ զիս քեզմէ բաժ-
նեց։ Ով բարեգութ Հայր, որչ-
նէ առաջադրութիւնս. պաշտպանէ
տկարութիւնս, որ սյսու հետեւ, ոչ
աշխարհքիս չար օրինակները, ոչ
մեղքի դրդող առթթները, ոչ նեղու-
թիւն, ոչ մահ եւ ոչ ուրիշ բան
կարենայ զիս քու սերեդ բաժնել.
ով իմ գանձս, սերս ու միսիթ արու-
թիւնս, ամեն։

Աղօ՛ւ առ Հետու Քրիէլ:

Քեզի կ'ապաւինիմ, ով աստուածային Փրկիչ իմ, ու քեզմէ ողորմութիւն եւ Թաղոթթիւն կը խնդրեմ: Դու խաչին վրայ բազկատարած կեցեր ես, որպէս զի քեզի գիմոլները գրկես ու մեղաւոր մարդկութիւնը Հօրդ հետ հաշտեցընես: Ուրեմն գթած աշուրներդ ինձի դարձուր, ով Հովին բարի: Ես ալ մեծագին արեամբդ միրկուած հօմիդ մոլորեալ մեկ ոչխարին եմ: Առ զիս ուսոցդ վրայ ու Հօրդ բնակարանը տար: Բաղուկներդ տարածած՝ ինձի կը սպասես: Ուրեմն ոսուրներուդ կը փաթթուի իմ, որ զիս դանելու համար այնչափ յոդնեցան: Գիտեմ, Փրկիչ իմ, որ զիս չես վանաեր: Անդանի հաւատքով կը հաւատամ որ ինձի համար

մարդոցար, պիրաւորուեցար, խաչա-
փայտին վրայ մեռար : Ուստի որդիւ-
ական վստահութեամբ քեզի կը
դիմեմ : Կնծինայէ գթած աչուրնե-
րովդ, ինչպէս Պետրոսի ու աջակող-
ման աւագակին : Լսեցար, աստմա-
ծային փրկիչ իմ, լսեցուր սրբիս մեջ՝
ան երկնային մխիթմարութեան խօս-
քերը, թէ Ուշեւի, Ռուշւ Անդի և զ
Հուշ + . ամեն :

Եղբար առ Հոգին Ոսկե :

Սուրբ Հոգի, արտասուալից ա-
չուրներս քեզի կը վերցընեմ : Ես
ապերախոս սուրբ տաճարդ աղոթ-
չեցի : Մոքուր չպահեցի այն անմե-
ղութեան հանգերձը՝ որով զար-
դարեցիր զիս մկրտութեան աւագա-
նովը : Ըստ Հեղ ականքներս գոյեցի
փրկաւեա աղղեցութեանցդ . եւ մասիկ

ըրի զգայտեկանութեան, ու անցաւոր
աշխարհի: Աւելի հետեւեցայ ու-
նայնութեանց՝ քան բարի խրառնե-
րուդ: Աւելի համարեցայ աշխարհ-
քիս առերեւոյթ քաղցր բաժակը՝
քան թէ աստուածային միսիթարու-
թիւններդ: Ո՞չ, ցաւով ու գաւնու-
թեամբ կը լեցուի սիրտս՝ երբ զատակը
կը մոածեմ: Կու լամ, թեթեւամսու-
թեանս վրայ: Բայց ցաւոցս դարման
զ անելու համար քեզի կը դիմեմ, ով
աստուածային միսիթարութիւն: Ոի
նայիր անթիւ մեղքերուս, հաստ
ճշմարիտ արցունքներուս: Հանէ զիս
մեղացս անդնդէն: Տուր կամացս՝ զօ-
րութիւն եւ առաջարութեանս՝
հաստատութիւն: ամէն:

Աղջիկ առ 11. Եպոսածանքին :

Սրբուհի Մարիամ, մայր սիրոյ եւ¹
ողորմութեան, պաշտպանութեանդ
կ'ապաւինիմ: Կերկացացուր զիս Որ-
դւոյդ, որ զնուած եմ պատուական
արեամբը: — Քեզի մեծ փառք, մեծ
ու բախութիւն է, իրեն զզջացեալ մե-
ղաւորներ տանիի: Կիմած Մայր,
Չուն ոչ առկայժեալ լապտերը կը
մարես, եւ ոչ ալ ջախճախած եղեգը
կը կոտրես. Հասկա կը զարմանես
մեղքերով վիրաւորուածը: Կը մեր-
ձենաս վշտացած սրտին, ու կը կամքե-
ցինես անոր վրայ մայրական պաշտ-
պանութեանդ զովացոցիւ ձեմը:

Յոցուր որեմն, ով մսիթարիչ
վշտացելոց, յոցուր վրաս ալ բարե-
խոսութեանդ ոյժը, որովէս զի տառ-
ջողքութեանս մեջ հաստատուած,

մինչեւ վերջին շունչս անոր մէջ յա-
րատեւեմ. ամէն:

Զօրաւոր աղօթք զդշման:

Բոլոր սրաւանց կը զզամ ու կը
ցաւիմ ըօտձ մեղքերուս վրայ: Մեղայ
Տէր իմ. վասն զի զու ամենաբարի
ես. եւ սիրուելու արժանի ու մեղքեն
կը գարշիս: Ես ալ ի բոլոր սրաւէ կը
գարշիմ ու կ'առաջազրեմ շնորհ-
քովդ մէյ մ'ալ մեղքի մէջ չիյնալու:
— Յիսուս իմ, դուն զիս սիրելու գ
համար այնչափ չարչարուեցար. ան-
դին արիւնդ թափեցիր ու ինք զինքդ
խաշին վրայ զոհ ըօիր: Խոկ ես ա-
պերախառ՝ խորհրդով, բանիւ գոր-
ծով եւ զգայութիւններով շատ
անգամ զքեզ խաչ հանեցի ու մեռ-
ցոցի: Մեղայ, Տէր իմ Յիսուս, ասկէ
վերջը աւելի կ'ուզեմ մեռնիլ՝ քան
թէ մեզանչել:

Խոսառվանիսմ՝ առ աջի Աստուծոյ
ամենակարողի եւ երանուհի Մարիա-
մա միշտ կուսին. երանելոյն Մի-
քայէլի հրեշտակապետին. երանել-
լոյն Յովհաննու Մկրտչին. սրբոց ա-
ռաքելոցն պետրոսի եւ Պողոսի. եւ
սրբոյ Հօրե մերօյ Գրիգորի Լուսա-
ւորչին եւ ամենայն սրբոց. եւ առ աջի
քո Հայր սուրբ. Քանիցի մերայ խոր-
հրոգով, բանին եւ զործով. մայ ինձ,
մայ ինձ եւ յաւետ մայ ինձ:

ԽՈՍՌՎԱՆՈՒԹԵԿԵՆ ԵՏԵ

ԱԴՈԹՔ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵՎՆ

Օրհնե անձն իմ զԱստուծ, իր
սուրբ անունն ու իր բարերարութիւն-
ները: — Դուն ամենողորմ Աստուծ
զզման արցունքներու ընդունեցար-
ցաւ երա չմերժեցիր: Երբ քեզի զառ-
նալուտեար, հայրական զթութեամբ:

առջեւս ելար. բարերար բազկացզ
մէջ առիրու մեղքերս ֆնչեցիր: Մոլո-
թեանց գերի ընող շղթաներս խոր-
տակեցիր ու նորէն Աստուծոյ որդւոց
ազատութեանը բարձրացոցիր: Մէկ
խօսքով պարզեւեցիր սրտիս այն խա-
զազութիւնը՝ զոր աշխարհք չի կրնար
տալ: — Ոզորմած ես, Տէր. մէծ է
համբերութիւնը՝ որ այնչափ ժամա-
նակ մեղաւ որին դարձին կը սպասես:
Դուն մեղաց համեմատ չես մարտիր
մեղի չես: Որչափ չեռու է, երկինքն
երկրես, այնչափ է ոզորմածիւնը
ընդարձակութիւնն անոնց վրայ՝ որ
քեզի կը դիմեն: Կնապէս որ հայր մը
կը զթայ իր որդւոցը վրայ՝ այնպէս կը
զթաս դուն ալ ստեղծու ածոցդ վրայ:

Ո՞վ անըմբ ոնելիս սէր, մահիր սիրոս,
եւ վասէ անոր մէջ սիրոյդ հորը,
որպէս զի կարևնայ սիրոյդ՝ սիրով
հասուցում ընել: Աշմարտապէս

կ'ուզեմ ուղղել մինչեւ հիմայ գոր-
ծած յանցանքներս : Դուն կը ճանչ-
նաս սիրաս : Օզնէ ուրեմն տկարու-
թեանս : Զօրացուր զիս մեղաց յար-
ձակմանց դէմ : Ամբացուր զիս, որ ան-
ձինս վրայ յաղթանակելով՝ արքա-
յութեանց արժանի ըլլամ : ամէն :

Եղջն+ խոսպովանան+ին ընդունէ-
լու-նշանը համար :

Առառած ային Փրկիչ իմ, զթած
աչուրներովդ եղած խոստովանանքիս
նայէ, ու սրտիս զզջումն ընդունէ :
Եթէ մարդկային տկարութեամբ
սուրբ խորհրդոյս մէջ սխալմունք
մ'ըսի, դուն թափած արեանց մէկ
կաթիլովելեցուր ակամայ պակասու-
թիւններս : Դուն՝ զքեզ խաչ հանող-
ներուն համար երկնաւոր Հօրդ աղա-
շեցիր : Ես ալ զքեզ շատ անգամ

խաչ Հանեցի, սուրբ արիւնդ սորի
տակ առի: Բայց զիմած աշուշներավո
ինձի Նայէ ու ողորմէ: Աստուած իմ,
եթէ լնկերս ինձի գէմ բան մ'ըստած
կամ ըստէ է, սրտանց թողուժիւն
կու տամ: Եւ թէ որ ևս ալ ուրիշին
բան մ'ըստած, ըստէ կամ զայթա-
զ զու թիւն տալով մէ կու մը լիւաս Հա-
ցուցած եմ, սրտանց ներութիւն կը խրն-
զրեմ: Տէր, ասկէ եաբը քուկդ եմ
բոլորովին: Աստահութիւնս սուրբ
Խաչիդ ու մահունդ վասյ կը զնեմ:
Քեզի կը նուիրեմ Հոգիս, մարմինս ու
ամէն կարողութիւններս: Դու զիմած
բժիշկ, Հիւանդները բժշկելու եկար.
ահա ևս ալ շատ տեսակ շար սովո-
րութիւններով Հիւանդացած եմ:
Բժշկէ զիս, ու ըսէ Հոգւոյս այն
մսիթարական խօսքը. Այսը եղե-
կը ինքնուն բան այսինքն. ամէն:

Աղօն+ յարստուե-ո-նեան շնորհ+
ընդո-նելո- համար:

Սուրբ Հոգի, որ ապաշխարու-
թեան դարձած մեղաւորաց սիրելի
բարեկամն ու զզջացեալ սրախց միսի-
թարիչն ես, զոհութիւն ու երկրպա-
գութիւն կը մատոցանեմ քեզի՝ որ
զ թութեամբ վրաս նայեցար. որ մե-
զօք աղտեղած հոգիս՝ դարձեալ Աս-
տուծոյ տաճար ըսիր: Զօրացուր զիս
մարմնոյ, աշխարհի և չար ոգուոյն
փորձութեանց գէմ: Զօրացուր զիս
փրկարար շնորհքներովդ, որ քեզմէ
վախնամ. ընկերացս հետ խաղաղու-
թեամբ ապրիմ. սուրբ կեանք ան-
ցլնեմ. աղօնքով ու բարեպաշտ
զործքերով՝ միշտ առաքինութեան
ճամբուն վրայէն քայեմ. ամէն:

Աղջիկ ու Առաքութեածնեն :

Ով քաղցր Կոյս Մարիամ, զ թու-
թեանդ կը յանձնեմ հոգիս, մար-
միս, խորհուրդներս ու գործքերս:
Օգնե ինձի, հզօր Կոյս, եւ պահէ
զիս սատանային որոդ այթներէն: Տուր
ինձի ճշմարիս ու կատարեալ սեր+
որ ամէն բանե աւելի սիրելի Որդիդ
եւ զքեղ սիրեմ: Զօրացուր սրախ
մէջ այս բարի առաջազրութիւնը:
Պահէ զիս սուրբ սիրոյդ մէջ. որպէս
լի զԱստուած եւ զքեղ յաւիտեանս
սիրեմ ու օրհնեմ. ամէն:

Ե Ե Ր Գ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ե

ԵՐԵՐ ԱՍՑՈՒԱԾՈՒԲԵՐԵՆԱԿԱՆ ԵՄԱՐԻՒՄԻ-
ԹԵԱՎԱՅ*

Մերզործութիւն Հաւատոյ — Կը
Հաւատամ՝ ի մի Աստուած կենդանի

* Երեր զժառուոր առ որբնութ անց Ներց ործու-
թիւնը չերմեռանեղութեամբ կառարազներուն եօթը
տարւան եւ եօթը զառապահն որւան Ներոցութիւն

եւ ճշմարիտ. յարաբիչն ու փրկիչն:
Ալ հաւատամ ի Հայր անծին, յՈւ-
դինծնեալ, եւ ի Հոգին Սուրբ՝ բխեալ
յԵրկոցունց: Ալ հաւատամ, թէ Որ-
դին Աստուած մեզի համար շարչա-
ռուեցաւ, խաչին վրայ մեռաւ: Թէ
ամէն մարդու՝ իր գործոցը համաձայն
հատուցում պիտի ընէ. արդարոց
յաւիտենական կեանք եւ մեղաւորաց՝
մշտնջենաւոր պատիմ պիտի տայ: Ալ
հաւատամ, թէ Հոգիս անմահ է. թէ
առանց Աստուծոյ շնորհացն յաւի-
տենական երանութեան չենք կրնար
հասնիլ: Ալ հաւատամ ու կը խոս-
տովանիմ ան Ս. հաւատքը, զոր Յի-
սուս Քրիստոս մեզի սորվեցուց. զօր
Առաքեալք քարոզեցին եւ Հոռվմե-
ական Ս. Եկեղեցին կը դաւանի

Ժամանում է: — Խոկ ամիս մը ամէն որ բազդ: Խ-
ոչյն ամենամ մէջ՝ հեղ մը խոստավանքը եղող ու
եկեղեցոյ զիաման աշխան ողբ: Ժամանար ներուզ
թիւն կը դուռնի: Բանեց. Ժ.Դ. 1725, Ծունդ. Է-
րեւեդ. Ժ.Դ. 1736, Ծունդ. 28:

կը վարդապետք: Առ ամէն բանի կը
հաւատամ, վասն զի դուն, Աստուած
իմ, զատիք ինծի յայտնեցիք. որ
յաւիտենական ճշմարտութիւն եւ.
ու ոչ կրնաս խարել, եւ ոչ ալ կրնաս
խարուիք:

Ներգործութիւն Յունի: — Կը յու-
սամ, Աստուած իմ՝ անսպառ բա-
րութեանդ եւ ողորմոթեանդ վրայ:
Կը յուսամ որ միածին Որդւոյդ
անդին արժ անեացը Համար մեղացո
ներումն կը շնորհես, եւ վարուցուղ-
ղութեանը Համար Հարկաւոր շնորհը
ները կը պարզեւես: Կը յուսամ
որ օդնութեամբ ամէն փորձութիւն-
ներու կը յաղթեմ եւ առաքինու-
թեանց ճամբուն վրայէն երթալով՝
մահկանացու կեանքէս ետեւ յաւի-
տենական կենաց արժանի կ'ըլլամ:
Կը յուսամ որ Հայրական սիրով կը
սիրես զիս, ու ստեղծեցիք՝ վրկելու


Համար: Աս ամեն բան կը յուսամ, որովհետեւ գուն, ամենաբարի Աստմած, ասոնք ինձի խոստացար. որ Հզօր Ես Եւ խոստմոնքդ կատարելու մէջ Հաւատարիմ: Աս յուսոյն մէջ կ'ուզեմ ապրիլ ու մեռնիլ:

Ներզործութիւն Սիրոյ: — Կը սիրեմ զքեզ, Աստմած իմ, վասն զի անշափ բարութիւն ես: Երանի թէ կարենայի զքեզ ամեն բանեն աւելի սիրել: Երանի թէ ամեն արարածներն ինձի յորդոր ըլլային՝ զքեզ աւելի եւս սիրելու: Երջանիկ կը համարէի զիս՝ եթէ այնպէս կարենայի զքեզ սիրել, ինչպէս որ կը սիրեն սուրբ Կոյսն Մարիամ, Հրեշտակը, Երանելի Հոգիներն ու Երկրիս արդարները: Աս սէրէն յորդորուելով՝ սրտանց կը ցաւիմ որ զքեզ վշտացուցի. կ'ատեմ մեղքերն՝ որոնցմով զքեզ միւշեւ հիմայ զայրացուցի: Այսու հետեւ

աւելի կ'ու զեմ' ամենքան յանձն առ
նուլ, նաև մեռնիլ, քանի թէ կամաւոր
մեղքով զքեզ վշտացընել: Ողորմէ
մեղաւորիս: — Դարձեալ՝ կը սիրեմ,
Տէր իմ, ընկերս, նաև թշնամիս,
անձիս պէս, վասն զի ստեղծուածդ,
պատկերդ է, եւ գնուած՝ սիրելի
Որդւոյդ պատռական արեամբը:
Ընորհը տոր՝ որ յառաջադրած ի
դործ զնեմ: ամեն:



ԱՌԵՔ ՀԱՊՈՒԹՈՒԹԵԱՆ ԱՊՈԹԱՔՆԵՐ



ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Մեր Ավետարան, ինք
զինք երբեք բանի մը
մ.ջ ոյժապէս խանդա-
կաթ չէ ցուցուցած
ինչպէս ամենառար
չազարդութեան մ.ջ :

Աւրը, կրու-

Դիսն. Վրիս-
պագացին, ամեն
բանէ աւելի
միաւ որութեան
մ.ջ կ'երեւաց :

Եթէ Աշմարիս է ասիկայ. այն առևն, ան-
խօսքն թէ . . Աբ ու ան զմարդին իմ և ըստ
զարին իմ, նա յիս ընակեցէ և և ի նման
աւելի անձուկ միաւ որութին ու ը կրնաց
մասհուի : — Եթէ ամէն օր առ խօսքը ուղար-
կը մերձենաս, Յիսուս միշտ քեզի հետ կը
մնայ, եւ դուն անոր սիրոյն մ.ջ կը յա-

բառեւնս : — Աս խորհուրդը՝ մեր հոգեւոր
հիւանդութեանց զէմ ազգու զեղ մըն
է . որով ամէն օրւան պակասութիւններէն
կ'ազատինք . ու մահու չափ մեղքերէն կը
զգու շահանք :

Բայց ինչ է պատճառն , որ այնչափ
անգամ Հաղորդութեան մերձնարէն եաւե-
ալ՝ օգուտ չենց տեսներ . ու յառաջուան
պէս պակասութեանց մէջ կ'իյնանք : —
Աերակուրը չէ որ մարդուն կը մնասէ .
Հապա զանիկայ հաշակոզին արամագրու-
թիւնը : «Միթէ ծրարիցէ ոք հուր ի գոզ ,
կ'ըսէ Ապօնման , եւ զհանդերձան ոչ այ-
րիցէ : Առառած հուր ծախիչ է , որ
Գոհութեան խորհրդոյն ձեռքով մեցի կը
մնանայ՝ որպէս զի առառած ային սիրոյ
կրակը որուերնիւ վառէ : Գ.իանանքը որ առ
բաներ մեր թերահաւառութենէն , մեր քիչ
պատրաստութենէն է : Արակը՝ չոր փայտոր
շուտ կ'այրէ , բայց ոչ պարարք . վասն զի
ասիկայ՝ անոր պէս այրելու արամագրու-
թիւն չունի :

Լաւ պատրաստութեան համար՝ երկու-
րան պէտք է : «Ասի՝ որուերնէս ամէն երկ-
րաւոր իշխերը հեռացընենք : — Օք մը
հարցուց Որրու հի Գ.ելլորուառ Յիսուսի ,
թէ ինչ պատրաստութիւն կը պահանջէ-
իրմէն՝ որ կարենայ իր անարան մերմեռն
արժանապէս մերձնար : «Ուրիշ բան չէմ
ուզեր քեզմէ , պատասխանեց Փրկիչը , բայց
եթէ՝ որ անձեզ բոլորազին մերկացած ,

զուրկ ամէն բանե՞՝ մերձենաս ինձի: —
Երկրորդ՝ ստոտիկ բազմանք մ'ունենանք
դիմուս մեր սիրան ընդունելու: Աբով-
Հետեւ անփոյել է որ տառուածային կե-
րակուր արուի այնպիսոցն՝ որ սրտին մէջ
զՅիսուս ճաշակելու բազմանք չունի: —
Եթէ Յիսուս այնշափ կը փափաքի մեզի
հետ միանալու, մենք ալ բազմանք, զինք
սրտերնիս ընդունելու:

Յանախ մերձենանք Սուրբ Հաղորդու-
թեան, եթէ արամագրութիւննիս ներէ:
— Ասոր նկատմամբ լսենք Ս. Փրանիկ.
Ապեզացւոյն բանքր. * Եթէ աշխարհիս
որդիքը քեզի հարցընելու ըրբան թէ ինչու
այնպէս յաճախ Հաղորդութեան կը մեր-
ձենաս, բու իրենց. Երկու ականկ մարդիկ
կան, որոնք պէտք են յաճախ հաղորդութիւն.
Կատարեալներն ու անկատարները: Ելա-
տարեալներն՝ անոր համար, որ կատարե-
լութեան մէջ մնան. Բայց անկատարներն՝
որ կատարեալ ըրբան: Չօրուորներն՝ որ
չակարանան. ակարներն՝ որ զօրանան.
Հիւանդներն որ բժշկուին. ու առաջներն՝
որ շնիւանդանան: ո

ԱՐԵՆԱՍՈՒՐԻ ՀԱԴՐԴՈՒԹԵԱՆ
ՄԵՐՉԱՆԱԼԻՆ ՅԱՌԱՅ

Սերզործութիւն հաւասայ: — Աի-
րելի Փրկիչ, որչափ դժուարին ու-
խիստ լեռներ անցնելու պարտա-
ռեցար, որպէս զի գաս եւ այս սրբա-
զան խորհրդոյն ձեռքովի ինծի հետ
միանաս: Աստուած էիր՝ մարդ ըլլա-
լու հարկադրեցար. անչափ էիր՝ տղայ
եղար. յաւիտենական Հօր ծոցէն՝
կու սի մը ծոցն եկար. երկինքէն՝ տիսո
իջար. մատուց գահէն՝ արդարու-
թեան կախաղանը խոնարհեցար: Աս
առ տու ալ երկնաւոր աթու է զ պիտ' որ
իջնաս եւ ընակութիւնդ սրբիս մէջ
պիտի հաստատես:

Անձն իմ. ահաւասիկ ցանկալիդ
Յիսուս՝ այն սիրով բորբոքած, որով
քեզի համար խաչին վրայ մէռած ա-
տեն՝ զքեզ կը սիրեր. հիմակ ալ

Ա. Հաղորդութեան մէջ հացի կերպարանաց տակ ծածկուած կեցեր է։ Միլովդ վառուած՝ կ'ուզէ որ զի՞քը սիրես։ “Նշանաբի կերպարանաց տակ քեզի կը նայի. Եւ կեցեր կը զիտէ զքեզ՝ որ կը պատրաստուիս իր առաւածային մարմինը ճաշակելու։ Կը զիտէ որ ինչ կը սիրես, ինչ կը բաղձաս, ինչ ընծաներ կ'ուզես իրեն մատուցանել։”

Անձն իմ, պատրաստուի զՅիսուս սիրուդ ընդունելու։ “Կախ” ըսէ իրեն ին հաւատով ու ամենայն վստահութեամբ. Ուրեմն սիրելի Փրկիչ. Քիչ մը եսքը սիրոս պիտ’ որ զաս։ Ով ծածկեալ եւ մարդկան մէծ մասին անծանօթ Աստուած, կը հաւատում եւ իրրեւ Տիրոջս ու Փրկչիս կը մերձնամ։ Աս խորհրդեան մէջ քեզի երկրպագութիւն կընեմ, եւ այս Ճշմարտութիւնը խոստովանելու հա-

մար կեանքս ալ յօժարութեամբ
տալու պատրաստ եմ։ Դռն կու գաս
շնորհքներովդ զիս Հարստացրնելու
եւ բոլորովին ինձի հետ միանալու։
ուրեմն որչափ մեծ սլեաք է որ ըլլոյ
վստահութիւնս աս սիրալիր եկաւո-
րութեանդ վրայ։

Ներզործութիւն յուսոյ։ — Անձն
իմ, ընդարձակէ սիրագ, սիրելի Յի-
սուսդ քեզի ամէն բարիք կրնայ տալ։
Եւ որովհեանք զքեզ սաստիկ կը
սիրէ մեծ բաներ յուսա իրմէն, որ
իսիրոյ շարժած եւ բոլորովին սիրովդ
բորբոքած, քեզի կու գայ։ Այս,
սիրելի Յիսուս իմ, այն, անտահման
բարութեանդ վրայ վստահացած՝ կը
յուսամ որ աս առառ զքեզ ինձի
տալովդ՝ ողորմելի սրտիս մէջ՝ նաև
Հաճոյքդ ընելու զեզեցիկ բոցը կը
վստահ, այնպէս, որ ալ քու ուզածեց
զատ բան շոշեմ ու շրազձամ։

ներզործութիւն սիրոյ: — Աստաւած
իմ, հոգւոյս ճշմարիս ու մի միայն
սերը. ինձմե սիրուելու համար աւ-
ելի ի՞նչ կրնայիր ընել: Բաւական
չհամարեցար, ինձի համար մեռնի:
Աւզեցիր նաև աս մեծ խորհուրդը
հաստատել. որովհե զի ինք զինքո
բոլորովին ինձի տաս և ինձի ողես
ապերախտ արարածի մը հետ սեր-
տիւ միանաս: Բայց աւելի զարմա-
նալին այն է, որ անձամբ զիս կը
հրատիրես. ու սաստիկ կը բազմաս
որ դքեզ ընդունիմ: Ո՛չ անշափ սեր,
ով անընդունելի սեր, ով անսահման
սեր. Աստաւած մը կ'ուզէ ինք զինք
բոլորովին ինձի տալ:

Անձն իմ, կը հաւատաս ասոր:
ի՞նչ կ'ընես, ի՞նչ կ'ըսես: Ով Աս-
տաւած, ո անշափ սիրելի Աստաւած.
Եւ մի միայն արժանի իմ բովանդակ
սիրոյս: Բոլոր սրակես, ամեն բանեն

վեր, նաև անձես ու կեանքէս ալ
աւելի կը սիրեմ զքեղ։ Ո՛չ, երանի
թէ ամէն մարդիկներէն զքեղ սի-
րուած տեսնէի։ Կը սիրեմ զքեղ, ով
ամենասիրելի փրկիչ իմ։ Եւ սիրոս
կը միացընեմ սերովբեից, Ա. Աս-
տուածածնի, եւ Ա. Յովանիայ սրտին
հետ։ Ո՛չ անրու բարովին, կը
սիրեմ զքեղ ան սիրով՝ որով կը
սիրեն զքեղ երկնից սորբերն ու
անոնց թագուհին։ Կը սիրեմ զքեղ
վասն զի արժ անի ես։ Ելք, ելք
սրտես ամէն երկրաւոր յօժարու-
թիւնը։ վասն զի դոք Աստուծոյ հա-
մար շէք։ Դու Մայր զեղեցիկ սիրոյ
Մարիամ, օգնե ինձի որ սիրեմ այն
Աստուծը՝ զոր այնպի կը բազմաս
սիրուած տեսնել։

Ներզործութիւն խնարհութեան։ —
Ուրեմն, անձն իմ, Յիսուսի մար-
մինը ճաշակելու կ'երթաս . . . բայց

արդեօք արժանի՞ ես։ Ասուած իմ,
ով եմ՝ ես եւ ով ես զո՞ն։ Ես աղեկ
զիտեմ ու կը խոսավանիմ թէ զո՞ն
ով ես՝ որ ինք զինքդ ինձի կու տառ։
Բայց արդեօք զո՞ն ալ զիտե՞ն թէ
ես ով եմ՝ որ զքեզ ընդունելու կը
համարձակիմ։ Կարելի՞ բան է՝ Ցի-
սուս իմ, որ անսահման սրբութիւն
ըլլալովգ՝ բազծաս սրտիս մէջ ընա-
կելու։ սրտի մը մէջ, որ այնչափ ան-
գոմ թշնամոյի ընակութիւն եղած
ու այնչափ մեղքերով աղտեղած է։
Կը ճանինամ, Տէր, քու մեծվայելու-
թիւնով ու իմ խեղճութիւնս, անոր
համար կ'ամշնամ առջեւդ երե-
նալու։ Կ'աղեկի մեծարանաց համար
քեզմէ հեռանալ։ բայց թէ որ քեզմէ
հեռանամ, ով կեանք իմ, ուր եր-
թամ, որուն գիտեմ։ իմ վիճակս ինչ
կ'ըլլայ։ Զէ, չէ, չեմ ուղեր քեզմէ
բաժնուիլ։ մանաւանդ թէ միշտ քեզի

մօտենալու կը բաղձամ։ Դուն յանձն
կ'առնուս՝ որ զքեզ կերակրոյ ովես
ընդունիմ։ մանաւանդ թէ կը հրա-
իրես ալ։ Արդ կու զ ամ, սիրելի Փրկիչ
իմ, կու զ ամ զքեզ ընդունելու։ բռ-
լորովին խռնարհած ու ամշցած իմ
պակասութեանցս համար։ բայց մի-
անգ ամսյն կատարեալ վստահ ին-
ձի ունեցած զթութեանց ու սիրոյդ
վըսյ։

Ներզործութիւն զդիման։ — Կրցաւ-
իմ, Աստուած իմ, որ մինչեւ Հի-
մայ զքեզ չսիրեցի։ մանաւանդ թէ
փոխանակ զքեզ սիրելու, կամացս
հաճութիւնները կատարելով՝ ան-
սահման բարութիւնդ վշտացուցի։
քեզմէ եւ կեցոյ։ շնորհըներդ ու
բարեկամութիւնդ արհամարհեցի։
Թէկ խօսքով, ով Աստուած իմ, զքեզ
կամօք կորսնցընել ու զեցի։ Կը դղջամ,
Տէր, եւ բոլոր սրտանց կը զարշիմ

մեղքերէս։ Ա'տոեմ՝ քեզի հասցու-
ցած թէ ծանր եւ թէ թէ թէ վշտա-
ցոցումներս։ Եւ սրտանց կը ցաւիմ
որ զքեզ՝ անրաւ սիրոյ արժանիդ
զայրացոցի։ Աբ յուսամ՝ որ արգէն
ինձի թողութիւն տուած ըլլաս։
Բայց թէ որ զեռ թողութիւն չես
տուած, զքեզ ընդունելէս յառաջ
թողութիւն տոք։ Լուս սիրու, որ
քիչ մը ետքը պիտի զաս՝ բնակու-
թիւնդ հաստատես։

Ներզործութիւն փափարանաց։ —
Անձն իմ, ահաւասիկ հասու այն
երանելի ժամն որուն մէջ Յիսուս աղ պի-
տի զայ, տառապեալ սիրոդ բնակի։
Ահա երկնից թագաւորը, ահա քու
Փրկիչ ու Աստուածու, որ քեզի զալու
վրայ է։ Պատրաստու զինք սիրով
ընդունելու։ Դոչէ վասիրաբանօք, ըսէ.
Եկուր, ով Յիսուս իմ։ Եկուր հո-
գւոյս մէջ՝ որ քեզի կը բազձայ։ Դուն

ինը զինքդ ինծի շտուած, կ'ուզեմ
ևս իմ ոզորութիւն սիրոս քեզի նուիրել:
Ընդունէ զանիկայ և եկուր բնա-
կութիւնդ անոր մէջը զիր:

Եկուր Աստուած իմ. շտուով ե-
կուր. մ'ուշանար: Իմ մի միայն ու-
սնաւահանն բարիքս, զ անձս, կեանքրս,
զբախսս, սերս ու ամենն բանս: Կ'ու-
զեի զքեզ ընդունիլ այն սիրով,
որով ընդունեցաւ սուրբ Կոյս Մա-
րիամ: Աստուածածիւ: Անոնց հա-
զարդութեանը հետ կը միացընեմ
իմ այս հազարդութիւնս:

Ամենասուրբ Կոյս և Մայր իմ
Մարիամ, ահա Որդիու ընդունելու
կը մերձենամ: Աը բաղձայի՞ սիրով
ու ան սաստիկ սերն ունենայ, որով
գուն կը հազարդուեիր: Տուր ինծի աս
առառու քու Շինուագ՝ ինչպէս առ իր

Հովոց եւ սուրբ մագ երուն: Երբեւ
ամենասուրբ ձեռքեդ կ'ընդունիմ
զանիկայ: Ըսէ իրեն թէ ես ծառագ
եւ ջերմեա անդդ եմ: Ըսանկոյ սիրու
եկած ատեն, աւելի սիրալիք աչուր-
ներով ինծի կը նայի. եւ զիս՝ աւ-
ելի սերտիւ իրեն հետ կը միաւորէ:

ԱՐԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂԱՐԴՈՒԹԵԱՆ
ՄԵՐՉԵՎԱԼԱԽ ԵՑՔ

Մերզործոթին հաւասայ: — Ա-
հաւասիկ ինծի եկաւ Աստուածու ու
Փրկիչս. Եւ հոգւոյս մէջ բնակեցաւ: :
Հիմայ ներս է Յիսուս. եկաւ թէր
զինը իմս ընելու, միանգամայն զիս
իրենն ընելու: Ուրեմն Յիսուս իմս է.
ես ալ Յիսուսին եմ: Յիսուս բոլո-
րովին իմս է. ես ալ բոլորովին իրենն
եմ: Ո՞՛ անսահման բարով թիւն.
Աստուած մը եկաւ ինծի հետ միա-
ցաւ եւ թէր զինը բոլորովին իմս բար-

իսկ դու անձնիմ, որ հիմակ ասանել Յիսուսին հետ աերախ միացած ես, ի՞նչ կ'ընես. իրեն բան մը չես ըսեր: Չի՞ս խօսիր Աստուծոյդ հետ՝ որ քեզի հետ է: Քաջալերու է, զօրացիր. Նորեն հաստատէ հաւաքրդ. մատծէ որ հրեշտակները չորս դիդ կեցած՝ երկրպագոթիւն կ'ընեն իրենց Աստուծոյն՝ որ քու ներագ կը գահուի: Դուն այլ երկրպագոթիւն ըրէ Տիրոջդ: Ժաղովէ ինք զինքդ. ամիսովէ միաքդ. թող ուրիշ ամեն մատծամոքները: Միացուր իղձերդ եւ ըսէ Աստուծոյդ.

Ներզործութիւն ընդունելու թեսն: —
Ո՞չ Յիսուս, իմ սերս, անսահման բարիրս ու ամեն բանս. կ'ողջունեմ աղքատ ու ողորմելի տանս ըրած այցելու թիւնդ: Տէր իմ, ուր եկար: — Այն տառապեալ սիրան, որ վասթ արագոյն է ան ախոռէն ալ:

որուն մեջ ծնաբ. և լի՛ ամեն տեսակ
անձնասիրութեամբ ու անկարգ բաղ-
ձանքներով։ Եւ ինչպէս, Տէր. ինչ-
պէս կրցար դալ ու բնակութիւնդ
հու հաստատել։ Առզեի քեզի ըսել
Ո. ովեարօսին հետ. Ի. բայ գնա յիշեն,
Տէր, զի այլ մեջուր էմ է։ Խզմէ հեռու
դնա, վասն զի խիստ անարժ ան եմ,
անստհման բարի Աստուծոյ մ' բնորո-
նելութիւնընելու։ Պնա, զնա հանգչե-
ան սուրբ հոգ իներուն մեջ, որոնք
մեծ սիրով քեզի կը ծառացին։ —
Բայց չէ, Փրկիչ իմ, ինչ կ' ըսեմ.
մ' երթար՝ մի բաժնու իր խզմէ. վասն
զի եթէ հեռանալու ըլլաս՝ կորուսած
եմ։ Կը զրկեմ զքեզ, կեանք իմ
եւ քեզի հետ սկրտի. կը միանամ։
Կը խոսովանիմ թէ շատ անմիտ
գանու եցայ, որ մինչեւ հիմայ արա-
բածոց սիրոյն համար քեզմէ բաժ-
նու եցայ ու ապերախտութեամբ պիտ

վոնակցի: Բայց այսուհետեւ այլ
քեզմէ բաժնուիլ չեմ ուզեր, այլ իմ
գանձս. կ'ուզեմ քեզի հետ միացած
ապրիլ ու մեռնիլ:

Ամենասուրբ Կոյս Մարիամ, դուք
սերովբեք եւ ամեն երանեալ հոգիք,
որ զԱստուած կը սիրեք, ձեր իղձերն
ու յօժարութիւններն ինծի տուեք.
որովէս զի ձեր եւ իմ Աստ ծոյս աղեկ
ընկերութիւն ու կենակցութիւն ը-
նեմ. ամեն:

Ներզործութիւն շնորհակալութեան: —
Աստուած իմ, Տէր իմ Յիսուս,
շնորհակալ եմ աս առառ սիրու
զարով ու բնակելովդ՝ ինծի ըստն
շնորհացդ: Այ բազձայի քեզի եւ
ըստն մեծ պարզեւիդ արժանի շնոր-
հակալութիւն մ'ընել: Բայց ի՞նչ
կ'ըստմ. ես ողորմելիս ու խեղճ մե-
զաւորս՝ քեզի ի՞նչ շնորհակալու-
թիւն կրնամ ընել: Դաւիժը կ'ըստ:

ԶԵՆՆ ԴՐԱ ԴՐԵՄՄ-Ի ՏԵՌՆ ԸՆԴ - Ա-
Ն-ՅԱՔ ՀԱՐ ԵՎ ԲՆՅ: Հապա ես ի՞նչ տամ
քեզի, Յիսուս իմ, որ այնչափ բարիք-
ներ տալէն ետեւ՝ աս առառ նոյն
իսկ զքեզ ինծի պարզ եւ եցիր: Ուրեմն
անձն իմ, ձեռքեղ եկածին չափ օրհ-
նել զԱռառած:

Իմ Մայլս Մարիամ, գուք պաշտ-
պան սուրբերս, պահապան հրեշ-
տակս եւ ամեն երանեալ ոգիք, որ
Աստուծոյ սիրովն զմայլած էք, եկէք
եւ զարմացէք՝ Աստուծոյ ըրած մեծ
շնորհացը վրայ. եւ իմ տեղս զինըն
օրհնեցէք եւ իրեն շնորհակալ եղէք:

Ներզործութիւն նուիրման: — Թէ որ
թագաւոր մը դայ եւ խեղճ աղ-
քատ հովուի մը այցելութիւն ընէ.
Հովիւն անոր ինչ կրնայ ընել, բայց
եթէ իր բոլոր հիւղն անոր նուիրեց:
Արդ՝ իմ աստուածային թագաւոր
Յիսուս, որովհետեւ հոգւոյս ողոր-

մեղի տան սցցելութեան եկար, քեզի
կը նորիրեմ և կու տամ ան տունն
ու ինք զինքս, իմ բոլոր ազատու-
թեամբս ու կամքս մէկաեց : Դուն
զքեղ բոլորովին ինձի տուիր, ես այ
զիս բովանդակ քեզի կը նորիրեմ:
Յիսուս իմ, այսուհետեւ չեմ ու զեր
իմս ըլլալ. կ'ուզեմ բոլորովին քուկդ
ըլլալ: Իմ ամեն զգայաբանքներս
քուկդ ըլլան. որպես զի միայն քեզի
հաճութիւնն տալու հաճար ինձի ծա-
ռային: Ու քեզի հաճութիւնն պատ-
ճառելնեզատինչ աւելի երանութիւն
կրնայ ունենալ մէկն, այս ամենասիրելին,
ամենազ ութ եւ բարերար Աստուած:
Քեզի կու տամ բոլոր կարապութիւն-
ներս եւ կ'ուզեմ որ ամենն ալ քուկդ
ըլլան: Աը բազձամ որ յիշողութիւնս
ուրիշ բանի չծառայէ, բայց եթէ
բարերարութիւններդ ու ցուցըցած
մէծ սէրդ յիշելու: Միաբս իր ծա-

ու այս թիւնն ուրիշ բանի համար
շմառացանեւ, բայց եթէ միայն վրադ
մտածելու: Քեզի կը նուիրեմ կամքս.
Եւ կը ցանկամ որ ան ալ ինձիւրիշ
բանի շնառայէ, Աստուած իմ, բայց
եթէ միայն զքեզ սիրելու, և այն
ուղելու՝ զոր գուն կ'ուզես,

Արդ սիրելի Փրկիչ իմ, աւասիկ
քեզի կը նուիրեմ ու կ'ընծայեմ ինչ
որ անիմ ու ինչ որ եմ. զգայա-
բանքներս, Խորհուրդներս, Հաճու-
թիւններս, միտութիւններս՝ ազա-
տութիւնն. մեկ խօսքով՝ մարմինս ու
հոգիս: Ենդունեւ առ նուերը՝ զոր երկ-
րիս վրայ գանուող մեղաւորներուն
ամենէն ապերախտը՝ ինք զի՞ ու մա-
տուցանելով՝ կ'ընէ քեզի: Եւ նոյն
բածն ուրիշ բան չէ, բայց եթէ ի՛
բոլոր անձը: Այսուհետեւ վազուե
ինձի հետ, ինչպէս որ կ'ուզես, և
ինչպէս որ կը հաճիս: Եկաւը, ով

Հուր սպառիչ եւ տառա ածոյին սէր,
Եկուր սպառէ այն ամենայն. որ Յի-
սուսի աշացն աղեկ չ'երեւար՝ որովհա-
զի այսօրուընէ բոլորովին իրենն ըլ-
լամ. եւ չէ թէ միայն իր հրաման-
ներուն ու պատուելիներուն, հասկա-
նաեւ իր ամեն բաղձանացն ու խոր-
հուրդներուն հետեւելու համար ա-
պրիմ. ամեն:

Ամենասուրբ Կոյս Մարիամ, ձեռ-
քովից ամենասուրբ Երրորդութեան-
աս ջեւ. հանեւ աս նուերս եւ բարե-
խոս Եղիք որ զանիկայ ընդունի. եւ
մինչեւ ցմահ անոր մէջ հաւատարիմ
մեալու շնորհը տայ. ամեն:

Երգարծութիւն սպաշտաց: — Անձն
իմ. ինչ կ'ընես: Հիմա, կը ունեցը-
ւուրա առեն չէ: Աս ժամանակը սպա-
շտացած ժամանակ է, որուն մէջ
կրնաս ընդունիլ ինչ շնորհը որ կ'ու-
ղիս: Չես աեսներ յաւիտենական

Հայրը, որ սիրոյ հայեցուածքով կը
նայի քեզի՝ սրտիդ մէջ տեսնելով
իր սիրելի Ուղին. որ իր սիրոյն ա-
մենէն պատռական առարկան է:
Հեռացոր քեզմէ ամէն օտար խոր-
հուրդները. գարձեալ զօրացոր հա-
ւատքդ. ընդարձակէ սիրոդ և խոն-
դրէ ինչ որ կ'ուզես: —

Չես լսեր որ նոյն խոկ զիսուս քեզի
կ'ըսէ. Զիւ ի-մո, չվ ու-րէշ ժեւ-
լսէ, ինչ կ'ուզես. ինչ կը բաղձաս:
Եկած եմ զքեզ հարստացընելու և
բաղձանիքներդ լեցընելու: Խողըէ
վստահութեամբ, և ուզածդ կ'ըն-
դունիս: —

Ավ քաղցր Փրկիչ իմ, որովհետեւ
եկած ես ինծի շնորհը տալու, և
շատ կը բաղձաս որ խողընէմ, ահա
խողընըն ասէ. Չեմ ուզեր քեզմէ, ոչ
երկրուս որ բարիք, ոչ հարստութիւն.
Տուր ինծի, կ'աղաւեմ, քեզի պատ-

Ճառած ահաճոթեանս պրայ մեծ
ցաւ մը : Տուր ինծի լոյս՝ որ աս աշ-
խարհիս ոնայնութիւններն ու քու-
հրչափ սիրոյ արժանի ըլլալդ Ճանշ-
նամ : Գոտուէ սիրոս, անջատէ զանի-
կայ ամեն երկրաւոր հաճոթիւն-
ներէն, եւ սուրբ կամացդ համեմատ
սիրոս մը տուր ինծի . որպէս զի ու-
րիշ բան չօնտուեմ, բայց եթէ մե-
ծաց ոյն հաճոթիւնդ . որիշ բանի
չըստղձամ, բայց եթէ քու սուրբ սի-
րոյդ . Աէք ուստի հուրեւ չէ Ա-
ռաքուած : Կը խոստովանիմ որ ասոր
արժանի չեմ . բայց դուն արժանի
ես, Յիսուս իմ . վասն զի չդանդա-
ղեցար բնակութիւնդ իմ սրտիս մէջ
հաստատել : Ուստի կ'աղաւեմ, տուր
ինծի աս շնորհը՝ արժանեացդ,
ամենասուրբ Մօրդ արդեանցն՝ եւ
յաւխանական Հօրդ ոնեցած սի-
րոյդ համար :

(Հռու ինչպրե Յիսուսէն քեզի եւ մերձաւ-
որներու դ համար հարկաւ որ ընօրհյութը՝
Ա եղաւ որներն ու քառարանի հոգիներն ալ
մի մոռնար :)

Հայր յաւիտենական նոյն ինքն
միածին Ուղիղ՝ մեղի ըստւ . Զու Բնւ
եւ Եւ Կրիցեւ և Հօրե իմե յանուն իւ,
ու-ցե յեւ : Արդ Որդւոյդ սիրոյն հա-
մար , որ Հիմայ իմ սրտիս մեջն է ,
լու աղաջանացս եւ խնդրածս տուր :
— Իմ սէրս՝ Յիսուս ու Մարիամ ,
ձեզի համար կ'ուզեմ շարչարուիլ
ու մռոնիլ : Կ'ուզեմ բոլորովին ձերն
ըլլալ . եւ ոչ երրեք իմն :

Միշտ օր հնեւոլ ըլլայ Հաղորդու-
թեան ամենասուրբ խորհուրդը : —
Օր հնեւոլ ըլլայ երանուհւոյ Ս . Կու-
սին Մարիամու անարտա յղութիւնն .
ամիւն :

Աղօթ + առ 11. Ապուածածին:

Անրաւ շնորհակալութիւն կը մատոցանեմ քեզի, ով ամենասուրբ Կոյս, ան մեծ շնորհքին համար, զորը ըսիր ինձի սուրբ որովայնիդ ամենօրհնեալ պառզի, զՅիսուս, ընդունելու շնորհը առնելովդ: Կը խնդրեմ քեզմե, ով Ասյր գթութեան, որ քու եւ սիրելի Որդուոյդ արդեանցը համար՝ ամեն մեղքերուս թողովթիւն ընդունիս. մայութիւններս մաքրես. բարոյն մէջ յառաջադիմութիւն տաս. վշտացս մէջ՝ համբերութիւն. ինորձութեանցսժամանակ՝ յաղթութիւն. բարի յառաջադրութեանցս մէջ՝ հաստատութիւն, աշխարհային ու զգայտկանիրաց առելութիւն ու զզուում. հոգեւոր բաներու սեր ու բորբոք. մէկ խօսքով ամեն բանի մէջ՝ սիրելի Որ-

գւոյդ աստուած ային կամացը կատա-
րեալ համակերպով թիւն:

Առջնոր հքները կը ինզրեմ քեզմէ
Յիսուս, ամենօր հնեալ Մորդ ինն
ամիս զքեզ իր սուրբ արդանդին մէջ
կրելովն՝ ունեցած արդեանցն, զքեզ
զիեցուցած ու մնուցած կուսական
կաթին, և իր սուրբ ու ողջախոչ
մեւսային, Ա. Յովանեփայ հետ քեզի
մնուցած հաճոյական ծառայու-
թեանցը համար. ամեն:

Հազարդութենէ եւեւ խոշելու թեան
պատկերի մասն թեւը հետեւ եալ ազօնմքն ը-
նալը՝ լիակատար ներոցաւթիւն կը զառաբեի:
(Պիոս Եւ 10. Ապրիլ. 1821.)

Ո՞վ բարի Յիսուս, ահա մէծ վայ-
ելութեանդ առջին երեսի վրայ ին-
կած՝ սրտանց կ'աղաշեմ, որ սրտիս
մէջ տպաւորես կենդանի հաւատք,
յոյս ու սէր. գարձեալ՝ մեղացս վրայ
հշմարիս ցաւ եւ հաստատոն յա-

ու արջագրութիւն՝ զքեղ ալ չըստ-
կացընելու : Ես ալ ցաւագին սրտիւ
հինգ վէրքերդ կը մտածեմ՝ դաւիթ
մարդարեն այն խօսքը յիշելով . թէ
Շռակեցին շաբաս էս եւ շաբաս էս, ե-
թառեցին շաբաս յանաւոյն սակեբաս էս :



ՏԵՐՈՒԽԱԿԱՆ ՑՈՒԵՐՈՒԽ ԱԳՈԹՎԱՆԵՐ



Քրիստոսի ծննդեան :

Էստուածային գրկիչ իմ,
ացարկը տօնենք հրա-
շալի ծնունդդ, ո-
րով այնչափ անձկու-
թեամբ ու այնպէս
փափաքանօք սպասող
աշխարհիս երեւե-
ցար մարմնով : Անչափ
ողորմութեանդ վրայ զարմանալով
միտքս կա գան հրաշալի ծննդեանդ
առեն երկնային դօրաց դովասանք-

ները . թէ Փառ+ է Բուշունիւն Աստու-
ծոյ : Ով սիրոյ Աստուած , ինծի հա-
մար ալ միասացդ գահը թողուցիք ,
եւ անչափ բարձրութենէդ խոնար-
հեցար , աղքատացար եւ աշխար-
հիս նեղութիւնները յանձն առիր :
Ասոր միախարեն քեզի ինչ կրնամ-
ընել . Եթէ ոչ խորին խոնարհու-
թեամբ ու մեւ արանքը մնայդ առջին
իշխալ , եւ հովուաց հետ աստուած-
պաշտութեամբ երկրորդութիւնը
նել : Մառբո՞ առ աստիճանի խոնար-
հիլդ՝ կը սորմացըննեն ինծի մանու-
անդ խոնարհութիւն : Դուն անմեղ
աղու մը կերպարանքով առջեւես
կ'երթաս , եւ կ'ուզես որ ես ալ
քեզի հետեւիմ : Աւքելի սրտանց կը
բաղձամ ասանկ ընել , Փրկիչ իմ :
Կ'ուզեմ քեզի պէս խոնարհ ու հեղ
ըլլալ : Կ'ուզեմ աշխարհիս վշտացը
համբերել . որովհետեւ զուն սուրբո՞

սրբոց, մանկութենեղ՝ ինձի համար
շարչարտեցար ու վշացար: —
Բան՝ որ մարմին եղար, կը յուսամ
որ օր մըն ալ փառքդ վայելել կու
տաս, ամէն:

ՆՈՐ ԹԱՐԱՅ:

Ազ մշտնջենաւոր անվտախիսելի
Աստուած, չնորհակալ եմ որ աս
նոր տարւոյս ալ զիս հասցուցիր:
Դուն ստեղծեցիր ցորեկն ու գիշերը.
քու հրամանաւդ եղան օրերն ու
տարիները: Թէպէտ սկսայ առաջիկայ
տարին, բայց չեմ գիտեր թէ պիտի
լինցընեմ: — Ազ ծածկագէտ Աս-
տուած, առջեւդ խաւարը՝ լոյս, հա-
զար տարին՝ իրոււ մէկ օր է: Դուն
միայն գիտես մեր սկիզբն ու կատա-
րածը: Թէեւ չեմ գիտեր որ այս
տարի գլխէս ինչը պիտ'որ անցնին,
սակայն հաւատայ լուսովը գիտեմ

թէ զքեղ սիրողներուն՝ ամեն բան,
իրենց փրկութեանը գործակից կ'ը-
լայ: Թէ որ ծառայութեանդ մէջ
յարատեւեմ, ամեն նեղութիւն՝ կ'ը-
լայ քաղցր: ամեն ցաւն ու արտա-
սուք՝ կ'ըլլայ միսիթարութիւն: Ամեն
չքաւորութիւն, կը փոխուի հա-
րստութեան, ամեն աշխատութիւն՝
հանգստեան: ամեն նեղութիւն՝ ու-
րախութեան: — Ուրեմն շնորհէ
ինձի, Հայր յաւիտենական, որ աս
սկսած տարիս ու բոլոր կեանքրս
շնորհացդ մէջ անցընելով՝ միայն
զքեղ սիրեմ: Մի թողոր որ բան
մը զիս ոյս սերէն բաժնէ: Վասն զի
այն ժամանակ ինչ որ պատահի
սիրոս խաղաղ կ'ըլլայ: ամեն:

Աստուածայայսնութեան:

Ամենազօր Աստուած ու գթած
Փրկիչ իմ, այսօր ցոցոցիր բարու-

թեանդ անըմբռնելի խորհուրդն
որով ի քեզ բովանդակ մարդկու-
թիւնը պիտի օրհնուեր: Այսօրյայտ-
նեցիր մարդկութիւնդ երեք մա-
գերուն. որ ամենազօր Աստուծոյդ
իրուեւ նորածին աղու սաքն ինկած-
ընծանին քեզի նուիրեցին. եւ ճանչ-
ցան զքեզ իրենց Աստուծ, թա-
գաւոր ու տէր:

Քու բարութիւնդ զմեզ ալ խոր-
կուած Միածնիդ կը կոչէ: Ասոր
միջնորդութեամբը մեզի խաղաղու-
թիւն, որտիսութիւն լոյս եւ առա-
քինութեանց մեջ յառաջանալու զա-
րութիւն կը պարզեւես: Բայց ես մե-
ջը որչափ մոցայ աս սէրը: Կերէ,
Տէր, եւ Հաստատէ նորէն Հաւատըր,
եւ պայծառացուր աստուծային
շնորհացդ լոյսը՝ սրտիս մեջ. որպէս զի
զքեզ միայն զտնելու ջանամ եւ
զանելէն ենեւ պահեմ: Իսկ զու,

սիրելի Փոքի շ, ըստ որ զքեզ ճանչ-
նակը. որպէս զի դուն ալ զմեզ
երկնաւոր Հօրդ առջին ճանչնաս. եւ
շնորհես մեզի խոստացած յաւիտե-
նական պարգեւոք. ամէն:

Տեսո՞նը ո՞ւ ո՞ւ չի ն:

Ամենախոնարհ Կոյս, Երուսաղեմ
սրբություն կ'երթաս, որպէս զի մէկը
շմտածէ թէ դուն Աստուծոյ Մայրն
ես. Հասպա ամենքն անանկ կարծեն
որ Հասարակ կանանց պէս՝ մարդ
աշխարհ բերիր: Ասանկ, Դիառքը
անհետ ըլլալով՝ կը փայլի խոնար-
հութիւնոք: Բայց երանելին Աիմենն
ի Հոգւոյն սրբոյ առաջնորդուած՝
չէր կրնաք խաբուիլ: Բաղձանացը
Համեմատ իր Փոքիւը տեսնելու երա-
նութիւնն անեցաւ: Գիրկն առաւ,
եւ ճանչցաւ զինք աշխարհի լոյս ու
իր ժողովրդ եանը փառք: — Կոյս

ոռւրբ, հոգիդ հասարակ մարդիկ-
ներու հոգիէն ասրբեր է. ու բոլո-
րովին նման սիրելի Որդւոյդ հոգւոյն:
Մարդիկ մինակ բարձրութիւն կը
մինտուն. իսկ Յիսուս ու դուն՝ մինակ
խոնարհութիւն: Ընորհք ընդունէ,
որ ես ալ հոգիս Յիսուսի հոգւոյն
նմանցընեմ: Ընծայէ միանգամայն
սիրոս ալ իրեն, որ ինք զանիկայ
սրբելով՝ կարենամ ամեն գործքերս
սուրբ գիտաւորութեամբ եւ իր մե-
ծագոյն փառացը համար ընել. ամեն:

Աւետման:

Մի խռովիր, անհամեմատ Կոյս.
որովհեաւ Աստծոյ հրեշտակն է՝
որ կու գայ քեզի խմացընելու, թէ
բոլոր երկրի ու բախութեան առիջ
տուող, մինչեւ Հիմայ փափոքանացդ
նպատակն եղաղ ու խոնարհութիւնդ
պստիող երջանիկ օրը հասաւ: Կու.

գայ քեզի ըսելու՝ թէ Որդի մը
պիտ'որ յղանաս, այնպիսի աստուա-
ծային զօրութեամբ՝ որ կուսու-
թեանց ուխտին վեաս պիտի չհանի.
եւ առ Որդին պիտ'որ քաւէ իր ժո-
ղովորդն ամէն անօրէնութիւններէն.
ու պիտի հանէ ստանային գերու-
թենէն, որուն մէջ անհնազանգու-
թեամբ ինկած էր: — Ամենամա-
քուր Կոյս, աշխարհէ քաշուած
այն տռանձնական կետերդ, զօրմար-
դիկներու հաղորդութենէն հեռու-
կ'անցընէիր, արժանի ըրաւ զքեզ
առ պատուական սցելութեան. եւ
զքեզ պատրաստեց մաքուր ար-
դանդգը ընդունելու ամենակալ Աս-
տուծոյ Որդին: Ես այ կ'ուզեմ աս
ճամբով զՅիսուս իմ սիրոս քերել
ու պահել. ամէն:

Ռուսաւոր վաստաց, ամեն արա-
րածը հրաշտիլի յարութեանդ օրն
ուրախութիւննին կը յայտնեն՝ թէ
Փառ+ յարութիւն ++ Տեր: Փառք եւ
Երկրպագութիւն աստուածային ա-
մենակարողութեանդ, որ զքեզ զե-
րեզմանէն յարոյց եւ արտմազգած
աշխարհս միսիթեարութեամբ լեցուց:
Փառք քեզի, անմահութեան պար-
գեւատառ, որ մահուան վրայ յազ-
թանակելով՝ յարութեամբդ զմեզ
վասաւորեցիր: Երկրպագութիւն
քեզի, որ կատարեցիր սիրոյ ամենէն
մեծ զործը. վասն զի խաչափայտին
վրայ մեռնելով, կանգնեցիր մեզաց
վրայ յազթութեան զբօշը: Դուն ես
Եցս, յարութիւն եւ կեանք: —
Ծնորհէ որ աս ճշմարտութեանց
համեմատ առրիմ ու մեզաց մեռ-
նելով՝ յառնեմ հօգեազես: Ծնորհէ:

որ մարդինս հոգւոյս հնազանդեցրնեմ. որպէս զի մտհկանացու մարդինս վերջին գատառատանին օրեւ ապականութեան սերմէն ժառաւ աւ որպէս յառնելով, կարենայ ձայնակցիլ երկեային զօրաց բազմութեան. ամէն:

Համբաւը քաջան:

Ծեր Յիսուս Քրիստոս, զուն որ հիմայ մղմէ կը բաժնուիսու երկինք կը վերանաս, մի դադրից ասկէ եաբնալ ըլլալու առաջնորդու ու օգնական: Որպինցուր ինծի որ քեզի նմանիմ: Տուր որ խաղաղութեամբ համբերեմ նեղութեանց: — Պշուցեալ աչքը երկինք կը նայիմ, որպէս զի զօրանալով՝ առաքինութեանց գծուարին ճամբռոն վրայէն ուրախութեամբ եաւեւեց երթամ: Մեզի համար ալ բաց է երկեային Հօրդօթեանին զուռը: Աւստի համա-

առ թեամբ կ'առաջազրեմ, փրկիչ
իմ, շնորհացդ ոդնու թեամբը կռուիլ
ամեն գժուարութեանց հետ, որպէս
զի երանութեան արժանի ըլլամ։
Տպաւորէ այսօր՝ սրտիս մեջ այն
ճշմարտութիւնը՝ թէ ան կրնայ միայն
քեզի հետ երջանիկ ըլլալ, ան միայն
երկնորս վայելել, որ քեզի պէս
միայն երկնային կենաց համար ա-
պրած է, ամեն։

Հոգեզ աւատեան։

Ողորմած Աստուած իմ, սորբ
Հոգիոց առաքելոց խաւրելով՝ զինք
նաև մեզի պարգեւեցիր։ Աս ինչ
մեծ շնորհը է, ինչ մեծ միսիթա-
րութիւնն է։ Կը զգամ ակարութիւնս,
գիտեմ նաև որ առանց օդնու-
թեանդ բան մը չեմ կրնար ընել։
Աստուած իմ, զուն գիտես թէ ինչ
պէս գիւրաւ մորձութեանց մեջ

կ'իշեանք ու մեղաց տակ կ'ընկճինք :
Եթէ սուրբ Հոգիդ զօրութիւն չե
տար՝ բանի մը կարող չենք : Արդ՝
հեղ ամենուս վրայ սուրբ Հոգիդ,
ճշմարտութեան, իմաստութեան, սի-
րոյ, աստուածային երկիւղի, քաղ-
ցրութեան և խոնարհութեան հո-
գին . զօրութեան և սրբութեան
հոգին . որպէս զի Հոգւովդ՝ մարմնոյ
գործքերը մեռցրնենք, մեղանչական
ցանկութիւններն սանձենք, և բար-
ձրանանք Աստուծոյ որդւոցը աղա-
տութեանը : Զօրացուր զմեղ փոր-
ձութեան ժամանակ : Տուր մեղի
որդիական սէր : Ընորհէ որ մեր մեջը
թագաւորեն՝ արդարութիւն, խա-
ղաղութիւն և եղայլսիրութիւն :
Որպէս զի աեւնուի, որ չէ թէ աշ-
խարհի՝ հապա Քրիստոսի, չէ թէ
ծառայութեան՝ հապա Աստուծոյ որ-
դեզրութեան հոգին վրանիս կը

կրթնք: Պու միսիլմարիչ սուրբ Հոգի,
դու Հոգի լռւսոյ եւ ճշմարտութեան,
տուր մեզի զօրութիւն, որպէս զի օր
քան զօր մեզաց մեռնելով՝ սրտերինիս
քեզի տաճար ըլլայ, եւ Աստուծոյ
բնակարան մնայ մինչեւ որ համնիք
յաւիտենական փառաց. ամեն:

Սուրբ Նրբորդութեան:

Ամենասուրբ Երրորդութիւն, Աս-
տուծ մշտնչենաւոր, ոչնչութեանս
մեջ՝ երկրպագութիւն կ'ընեմ ան-
չափ զօրութեանդ ու ամենակարո-
ղութեանդ: Ճնորհակալ եմ, որ ինք
զինքդ լնծի ճանչցոցիր: Անչափս
կ'ուրախանայի եթե բոլոր կենացս
մեջ կարենայի աստուծային մեծ-
վայելութիւնդ միշտ օրհնել: Իսկ
հիմայ ոչնչութեանս մեջ խոնար-
հութեամբ կը խնդրեմ որ սրտիս
Ճնորհակալութիւնը քեզի ընդունելի

պատարագ ըլլոյ: Ով ամենասուրբ
Երրորդութիւն, բոլորով սրտիւ շնոր-
հակալ կ'ըլլամ այնչափ շնորհացդ
ու բարերարութեանցդ: — Շնոր-
հակալ եմ քեզի, Հայր Աստուած,
որ զիս պատկերիոդ նման ստեղծեցիր
ու ամենակարողութեամբ կը պահ-
պանես: Շնորհակալ եմ քեզի, Որդի
Աստուածոյ, որ մեզի համար մարմին
առիր, արիւնոր թափեցիր ու մոռար,
որ զմեզ յաւիտենական մահուանէ-
ազատես: Շնորհակալ եմ քեզի,
ով սուրբ Հոգի, որ զիս միբառա-
թեամբ սրբեցիր ու յաւիտենական
Երանութեան ժառանգ ըրիր: —
Ով սուրբ Հոգիք եւ ընտրեալք
Աստուածոյ, եւ դու Ա. Կոյս Մարիամ,
միացուցեք շնչին շնորհակալութիւնս
ձեր միառատրութեանց ու շնորհա-
կալութեանցը Հետ, ամեն:

Փառաւորեալ Կոյս Մարիամ, Երբ
թաղուելով մարմինդ Երկրի աւանդ
տուիր, անանկ պատուիան Նշիար
մը թողոցիր անոր, որ զանիկայ Եր-
կային տաեն պահելու Երջանկութիւնը
չեր կրնար ունենալ: Այն սուրբ
տապանակն, որուն մէջ մարմնացեալ
Աստուածութիւնը բնակած էր, ու-
րիշ տեղ չեր կրնար հանգչիլ, Եթէ
ոչ անոր սրբութեան յարկին մէջ:
Կը վայելէր որ հոգւոյդ այնւափ
սքանչելի առաքինութեանց կրթու-
թիւններուն ընկերացող մարմին-
իր Երջանկութեանը հասնելու հա-
մար՝ ընդհանուր յարութեան օրւան
չոպասէ: Աս եր պատճառը, որուն
համար այն տաճարն երկայն տաեն
իր փառքէն զորկ չմնաց: Մահուր-
նէդ Երեք օր եաբը հրեշտակները
զանիկայ վերցոցին ու Երկնաւոր

Սիսն տարին. ուր երանելեաց դա-
սերուն առջև՝ Աստոծոյ Աօր եւ
երկնից ու երկրի Թագուհոյ մը
վայել մասոք երեւցար. եւ մարմնով
ու հոգւով՝ հրեշտակներէն վեր,
աստածոյին Արդւցող քով քեզի
պատրաստուած ամուլ նատար պատ-
կեալ. ուր իրեն հետ պիտի թագաւ-
որես յաւիսեանս: — Ով ամենա-
սուրբ Աօյս, կ'որ բախանամ՝ առ մա-
ստցող վրայ՝ ինձի եզած մասքի պէռ.
մանաւանդ թէ այ աւելի: Կ'ուղելի
քեզի վայել գովեստերով առ մասքոց
օրհնել: Այ բաղձայի քեզի ընծայե-
լու արժանի եւ կամ իմ իղձերս
քեզի յայտնելու բաւական բան
մ'ունենաց: Ընդունե կ'ազաշեմ, օ-
րինակովդ ինձի սորվեցոցած առա-
քինութեանցող մաւնջը, զօր կ'ուղեմ
հիւսել՝ Աստոծոյ եւ ընկերին սի-
րոյն, ապաշխարութեան, մահացոց-

ման, չնազանդութեան, չեզութեան
եւ խոնարհութեան զործքերով։
Ենչշափի երջանիկ կ'ըլլամ թէ որ
ասով հզօր պաշտպանութեանդ ար-
ժանանամ։ Ասիկայ կը խնդրեմ
քեզմէ՝ ինձի ունեցած սիրոյդ համար։
Այ խնդրեմ միանդ ամսյն ինձի եւ
ամէն արդարոց համար՝ յարատեւ-
ութիւն։ ու եթէ ողօրմութեամբոյ
առ շնորհքն ընդունինք, Ասուծոյ
ահաս հման ողօրման թիւնն ու քու ան-
շափի զթութիւնդ կ'երգենիք յաւի-
տեանն, ամէն։

Ծննդեան Ս. Ասուծամանի։

Ով անհամամատ կըս, չառա-
սյն առենիք, զոր Աստուած խոստացած
եր, մարդարեները պատմած ենք, եւ
որուն նահապեսք ու բոլոր հեթա-
նոր կը բաղձային։ Դուն աշխարհք
կ'ու զաւ եւ ծնանելու առենդ խոյ

իբրեւ պատերազմի Հակատած բա-
նակ մը՝ սատանաներու զարհուրելի
կ'երեւաս. և լնդ Հակառակն ար-
դարներու՝ հորիզոնին վրայ ծագած
արշալոյսէն ալ աւելի ուրախացո-
ցիւ: Իրօք ալ՝ ինչպէս որ այն սուտ-
օտեան այդն՝ արեգական ծագելը կ'աւ-
ելաս: — Եւ շնորհօք Կոյս, ինչ
կրնամ լնել ես, որ մարդկան վրայ
ունեցած սիրալիք իղձերուդ ու Աս-
տու ծոյ զիտաւորութեանցը Համեմա-
բլայ. բայց եթէ խնդրել որ զքեզ
ամեն բանէ վեր սիրեմ, ու բոլոր
յոյսս մայրենի սրտիդ վրայ զնեմ.
ստասնային յարձակմոնքներէն պա-
տերազմ կրած ատենս, քեզի իբրեւ
զթած մօր զիտեմ, մասճելով որ
զո՞ն ես այն հզոր կինն՝ որ հին ոձին
զ լուխը ջախչախեցիր և անոր բոլոր

զօրութիւնը խորտակեցիք : Ա' աղաչեմ
քեզի ընդունե ինձի համար շնորհը,
որ դքեզ ու Որդիդ սիրեմ, առ աշ-
խարհիս վրայ ու յետյ արրայու-
թեան մէջ . ամէն :

Անուան Մաքեմայ:

Ե՞նարատ Կոյս, սուրբ անուանոց
քաղցրութիւնն ամեն սրբոց սէրբ
քեզի ձգեց, և սէրդ բաղձալ ու
մինտուել տուաւ : Անուանոց տարա-
ծած հոսք՝ զանոնիք յորդորեց ե-
տեւեց երթարու և կատարելու ոյն
տուաքինութիւններն, որոնց կատա-
րեալ օրինակը տուիր առ աշխարհ-
իս պրայ : Ով սուրբ, ով բաղձարի
անուն . մարդ չի կընար դքեզ ըստ
բաւականի բարձրացընել : Մեզըի
ովու անոյշ ես քերնի, զերմեռան-
դոթիւն կը սփուես սրտից . և ան-
դարտելի քաջութիւնն կու տուա՞թը

Նամեցին հրապութանացը դէմ կե-
նալու . թշնամեցին՝ որուն վրայ առջի
անգամ դուն յարձակեցար ու փա-
ռաւոր յաղթութիւն ստացար : —
Ով Մարիամ , կ'ուզեմ ամէն տանն
սուրբ անուանդ մեծ յարգութիւն
ու սէր ունենալ : Ընորհք տուր ինծի
ով սուրբ Կոյս , որ ամէն մորձու-
թեանցու մէջ՝ Յիսուսի անուանը Հետ
անուանդ այ կանչեմ , բաւլով . Յի-
սուս , Մարիամ : Աս երկու անուններին
ըլլան զօրտոր վահանս ամէն զժո-
խային թշնամեց դէմ . ամէն :

Անագատ յդութեան :

Ով ամէն սուրբ երեւ աւելի սուրբ
Կոյս , կը խոստովանիմ որ դուն ա-
ռանց մեղաց յդացար : Բոլոր կենացդ
մէջ որբութիւնդ ու անմշտութիւնդ
ոչ միայն շնորհացաւ , այլ եւ աւելի-
ցաւ ու զքեզ աւելի եւս արժանի

ըրաւ Հոգւոյն սրբոյ. որ իրեն հարս
ընտրեց: Այս, զուն իրմէ ունեցար
այն երջանիկ պաղաքերութիւնն, ո-
րով աշխարհիս տուիր Փրկիչը. եւ
զինք ծնանելէն ետքն ալ՝ ամեն կոյ-
սերէ աւելի սուրբ ու Կոյս միալո-
վառաւ որ առաւելութիւնդ չկորուրն-
ցոցիր: — Ով անարատ կօյս Մո-
րիամ, զ թած աշուլներովիդ ոգւոյս
վերքերուն նայէ: Դուն՝ որ սկզբնա-
կան մեղքէ անարատ միալով՝ կե-
նացդ առաջին վայրկենէն բոլորովին
զեղեցիկ երեւցար Աստուծոյդ առ-
ջեւ, ողորմել ինձի՝ որ Հոգիս բար-
մտապատիկ մեղքը արատաւորած եմ:
Ինչ շնորհը կրնայ զլանալ Աստուծուն,
քեզի՞ որ իրեն զուսար, մայր ու հարսն
ընտրած, եւ թէ սկզբնական ու թէ
ներգործական մեղքէ բոլորովին ա-
զատ ըռած է: Մայրենի զ թութեանդ
կը զիմեմ: Ըրէ որ փրկուիմ. ամեն:

ԱԳՐՈԹ. ԲՆԵՐ ԱՅ ՍՈՒՐԲԱՆ ԱՄՏՈՒԺՈՅ



Աղօթք առ սուրբ Յովանի
Առողջածահնայր:

Ով մասունքեալ նա-
հապեատ սուրբ Յով-
անի, պաշտպան հա-
ստացելոց: Դուն որ
ընտրուեցաբ կուսանաց
կուսին միեսայ և իւր
անարատութեանը
պահապան: Դուն որ
ամիեզերաց Տէրը բազկացգ մէջ կրե-
լու արժանացար, ու Յիսուսի և
Մարտինայ մխիթարական խոռքերովը
զօրացած՝ հոգիդ անոնց զիրկին աւ-

անդեցիր. ինծի նայէ սիրալիր ա-
չուըներով և ընդունէ աղաւակիք-
ներս։ Խնդրէ թողութիւն ամէն մեղ-
քերուս, և Հաստատոն կամք՝ ասկէ
Ետքը ճշմարտապէս Աստուծոյ ծա-
ռայելու։ Առ շնորհք Յիսուսէն՝ որ
զի՞ք սիրեմ ինչպէս որ գուն սիրե-
ցիր։ Հսկէ վրաս, ինչպէս Հսկեցիր
Յիսուսի վրայ։ Պաշտպանէ զիս թըշ-
նամեցյն ամէն յարձակմունքներէն։
Մի թողուր՝ մանաւանդ, որ մահը
վրաս Համենի առանց պատրաստու-
թեան. Հազար ըսէ որ Աստուծոյ
շնորհացը մէջ գտնուելով՝ Հոգիս
իր սուրբ ձեռքն աւանդեմ ըսելով։
Յիսուս, Մարիամ և Յովանէի, ձեր
ձեռքը կ'աւանդեմ Հոգիս ու մար-
մինս. ամէն։

Աղօթք առ սրբուհի Աննա:

Շիրախ լեռ, մաներիմ գուտար
Հօր Աստուծոյ, սրբուհի Աննա, եւ
արքանի մայր Մարեմայ՝ մօր Յի-
սուսի: Որդիական յարդութեամբ կը
մեծարեմ զքեզ ու մեծ վատահո-
թեամբ հզօր բարեխօսութեանդ կը
գիմեմ: Դուն շատերուն սրտերը
միսիթարութեամբ լեցուցիր. նեղու-
թեան ու վշտաց մեջ քեզի գիմաղ-
ներուն՝ շնորհը ու ողորմութիւն ըն-
դունեցար: Այնչափ հոգիք փորձագ
տեսան թէ մայրական սիրով ու
գորովով կը պաշտպանես ամենքն՝
որ զքեզ կը մեծարեն: Ասկէ յոր-
դորուելով՝ ևս ալ լի յուսով քեզի
կը գիմեմ եւ օգնութիւնդ կը խըն-
դրեմ: Ավ հաւատարիմ մայր Մա-
րեմայ, գիտես թէ արշափ վանդնե-
րու մեջ եմ, եւ որչափ փորձանք-

Ներեւ պաշարուած : Աարևկից Եղիք,
ու խնդրեւ բարերար Փրկչւն, որ ինծի
զօրութիւն, Համբերութիւն եւ իր
կամացը Համակերպութիւն տայ :
Պաշտպանեւ զիս զ թուժեամբ ու
ամէն դժուարին պատահարներուն
մէջ ինծի սպնէ . ամէն :

Աղօթք առ Ս. Յովաննէս Մկրտիչ :

Մ' ձն ի ծնունդս կանանց եւ
նախընթաց կարապեա Փրկչին Յի-
սուսի՝ սուրբ Յովհաննէս, որ ազգու
քարոզութեամբ ու խստամիեր վա-
րութդ առ Քրիստոս ընթանալու
Համբան ցուցոցիր . խնդրեւ Յիսու-
սէն, որ եկեղեցւոյն աներկիւղ քա-
րոզիչներ ու լու վարդապետներ
չնորհէ . որպէս զի Քրիստոսի Հա-
տաքն անվեհեր վարդապետն, եւ
ըլլան մարդարէից եւ առարելոց

Հիման վրայ պրուած հաստատուն
սիւներ: — Խոկ ինծի համար խըն-
դրէ, ով երանելի Ա. Յովհաննէս,
Ճշմարիտ մեռոցման հոգի. որովէս
զի օրինակիդ հետեւելով՝ Աստուծոյ
բարկութիւնն իջեցընեմ, զար գուն
սպառնացիր մեղաց մեջ յամառու-
թեամբ կեցողներուն: Խնդրէ նաև
սրբակեաց վարք. որ մարմին իր
յանկութիւններով խաչ հանելով,
արժ անսամբ ան իւառաւոր պատկին
զար Քրիստոս Տէրն մեր խոստացաւ-
իրեն հաւատարմութեամբ ծառա-
յալներուն. ամէն:

Աղօթք առ Ս. Պետրոս եւ Պավլոս:

Եթ խնդաս ու կուրախանաս այ-
սօր, ով զլուխ Առաքելոց Ա. Պե-
տրոս, Փրկչին պէս խաչի մահուամբ
մեռնելուդ համար: Գուն վարդա-

ողետիդ պէս ուզզեցիր խաչուիլ . բայց
գլխ'ի վայր , իբր թէ երկինք երթա-
լու համար : Եւ իրաւամբ կրնայիր
հոգիդ Յիսուսի ձեռքը յանձնել ,
զոր այնպէս սիրեցիր՝ որ մինչեւ իր
եկեղեցին կառավարելու իշխանու-
թիւնը քեզի տուաւ : — Դուն ալ
օրհնեալ ըլլաս , Ո . Պաւլոս : Անզուս
բաւական չէ Աստուծոյ մասացը հա-
մար կրած աշխատաթիւններդ ըստ
բաւականի գովելու : Երանի թէ կա-
րևացի այն սուրբ վերքերը համ-
բուրել՝ զորոնք Քրիստոսի սիրոյն
համար մարմնոյդ վրայ կրեցիր : Ե-
րանի թէ կարող ըլլայի պազնել
ան երկիրը՝ զոր պատուական ա-
րեամբուդ ու ոգեցիր :

Ով առաջնորդք սուրբ հաւատոց ,
ազօթեցէք եկեղեցւոյ խաղաղու-
թեան համար : Ազաւեցէք քահա-
նայապետին , եպիսկոպոսոց իւ քա-

Հանոյից գաստն համար : Յրուեցէք
մոլորութիւնները . հեռացոց ցէք հեր-
ձուածներն ու զ այթ ազ զու թիւնները :
Եիցոց ցէք Աստուծոյ արդար դատաս-
տանին բարկութիւնը , և ձեր ար-
դիւնքը Կենարարին առջեւ զնելով՝
զ թութիւն ու ողորմութիւն խրն-
զրեցէք . ամէն :

Ազօթք առ Ս . Ստեփանոս Աթոռավեայ :

Ենյազթելի նախավեայ ու մար-
տիրունորածին եկեղեցւոյն՝ Ս . Ստե-
փանոս , որ աշխարհիս փառքն ա-
նարգելով ու թշնամոյն թակարդ-
ները խորտակելով , անհնարին տան-
ջանիքը բանի տեղ չպրիր : Աասն զի
սորմած էիր թե ոչ կեանք , ոչ մահ
եւ ոչ ուրիշ բան պէտք է որ զքեզ
անջատէ Յիսուսի սէրէն : Թշնամիքոյ
զքեզ կը չարչարէին , իսկ զուն կ'ա-
ղօթէիր : Անոնք զքեզ կը քարկո-

ծէին՝ իսկ դուն իրրեւ Հարազատ
աշակերտ Յիսուսի՝ ձեռուքներդ եր-
կինք վերցոցած՝ անոնց Համար թո-
ղութիւն կը խնդրէիր: — Աղաչ,
ով Կահատակ բարի, որ մեզի գեմ
եղած ամէն Հակառակութեանց ու-
թշնումնաց Համբերնիք, եւ Աս-
տածոյ մատոցած չարչարանաց ու-
նեղութեանց բաժակը սիրով ընդու-
նինք: Բայց աղաչ՝ մանաւանդ որ
զինինք մեր անձնական թշնամույն՝
մեր սեպհական ցանկութեանց գեմ.
որպէս զի մարմնոյ կըքերը նուաճե-
լով՝ որ մը քեզի պէս յաւխոնական
կենաց արժանի ըլլանիք. ամէն:

Աղօթք առ Ս. Գրիգոր Լուսուորիչ:

Ժահանայտողեատ Աստուծոյ, մեծ
խոստովանող Քրիստոսի եւ քարո-
զիչ Ճշմարտութեան, երանելի Ս.
Հայր Գրիգոր, ընտրեալ Ավատածոյ

ի լուսաւորութիւնն ճշմարտութեան։
Երեւելի եւ վարուքդ, նշանաւոր՝ ի-
մասառութեամբէդ, զարմանալի՝ հրա-
շագործութեամբէդ։ Զքեզ, ով ա-
ռաքեալ Աստուծոյ, Հիմակ երկինք
բարեխօս ունենալով՝ խոնարհու-
թեամբ կը խնդրեմ որ առաքինու-
թիւններէ զուրկ՝ շնորհքներէ կողոպ-
տուած եւ բազմազատիկ մեղքերով
ազակած հոգիս բժշկեա։ Օգնե ին-
ձի, ով երջանիկ Առքեդ Աստուծոյ,
որ քաղցրաբախ և յարդորներովդ, այն-
չափներուն սիրաը հաւատի լուսավո-
րուաւորեցիր ու աստուծազաշտու-
թեան ոգւովդ վառեցիր։ Օգնե, որ
հոգիս բժշկեմ եւ առաքինութիւնն-
երով զարդարեմ։ — Խնդրէ, ով
ուորբ հայր Գրիգոր, որ Աստուծ
Եկեղեցւոյ խազազութիւն տայ, մօ-
լորութիւններն ու չար սկզբունքները
ցրուէ, հերձուածները վերցընե, եկե-

զեցւոյ պաշտօնեաները Հայ ուսի սրբ-
րով լեցրնե, եւ իր հաւատացեալ-
ներուն սէրու միաբանովիւն չեօքհե.
ամէն:

Ո՞ւսովնանդ

Ի պատի սրբոյ Հօթոյ մերոյ Գրիգորի Երև-
անառէն:

Տէր ողորմեաց.

Քրիստոս ողորմեաց.

Տէր ողորմեաց:

Քրիստոս լուր մեզ.

Քրիստոս անսա մեզ:

Հայր Երկնաւոր Աստուած, ողոր-
մեաց մեզ:

Ուդի Փրկիչ աշխարհի Աստուած.
ողորմեաց մեզ:

Հոգիզ սուրբ Աստուած, ողորմեաց
մեզ:

Սուրբ Երրորդովիւն մի Աստուած,
ողորմեաց մեզ:

Արքու հետ Մարդում .

Առքը Աստուած ածին .

Առքը կօյս կուսանաց .

Առքը Գրիգոր Լուսաւորիչ .

Դրախտ առտու ածառունկ ծաղկեալ .

Պարզ եւ ական զաւակ նշխարացն Առաքելոյն թագեսի .
Բարունակ ողկուզարեր ճշմարիս որթով գրիխառասի .

Վարդանարեր հաղմն հալեցուցիւ սառին կուտազառաժեալ .

Դրախտ Երազուարձ անկեալ
յաշխարհիս Հայոց .

Երկնային լոյս ծաղկեալ ի Հայուստան .

Ընտրեալ քահանայիւս ասաւած ային յայտնութեալ .

Բաղրաձայն հեշմամբ գարձացիւ մոլորեալ հասին .

Հայոց զարդարներ

թագ պարծանաց Արշակուն
նեաց՝ առաքելական վա-
րուքա.

Այսելու պատկ հիւսեալ սուրբ
Եկեղեցւոյ.

Քաղցրահաշակ արմաւենի ի
առնեն Աստուծոյ անկեալ.

Կնոջ հոգեւոր եւ գորովա-
գութ հայր պարծանաց.

Հայաստանեայց հայր հաւա-
աց հեղինակ ընտրեալ.

Ասհատակ բարի Քրիստոսի
ընտրեալ եւ զինուոր ան-
յազթելի.

Ըստ աւ իոյ լուսազարդ ճանա-
պարհին կենաց.

Ջնաշխարհիկ պարծանք հողե-
ղէն բնութեանս.

Պարակից հոգեղինաց Երկեա-
մին զօրաց.

Յանկալի սերովիւից՝ անմար-

մեական վարոքդ.

Յորդառատ բանիւ լուսաւորոց
Հայաստան աշխարհի.

Աստուածային անսլեամբ լուլը-
կող հարուածելոց ի դիւա-
բախ ախտից.

Քահանայապետ անբիծ քարո-
զող աստուածային բանին.

Դեկօք հաւատոյ ընդ ծով
աշխարհիս անցեալ.

Խոստովանող քրիստոսի ճշմա-
րիտ միջայ, բազմաչարչաբ
նահատակ.

Աստուածագութ ձեռող տա-
ռապեալ որդեացդ ազգիս
Հայոց.

Հայոցեա առ Հայր Երկնաւոր,
կատարել զբնթացս մերուդ-
զափառութեամբ.

Պառն Աստուծոյ, որ բառնաս զմերս
աշխարհի. ինայեա ի մեղ Տէր:

Գառն Աստուծօյ, որ բառնաս զմեցս
աշխարհի. անսա մեղ Տէր:

Գառն Աստուծօյ որ բառնաս զմեցս
աշխարհի. ողորմեաց մեղ:

Յիսուս լուր մեղ. Քրիստոս անսա
մեղ:

Տէր մեր Յիսուս Քրիստոս, բան
չօր եւ իմաստո թիւն յաւ իտենա-
կան, ճշմարիտ մարդ ու քահանա-
յաղեայ յաւ իտենիցը ըստ կարդ ին Միլ-
քիսեգեկի. որ մեր մալարեալ ոչխարի
ընտ թիւնը գտնելու համար՝ աշխարհ
գալով՝ զանիկայ սուրբ խաչիդ հետ
կենսաբեր ուսոցդ վրայ առիր, եւ ա-
ռաջնորդեցիր օրինացդ քաղցր լծով,
սալով անոր քաջ հովիններ ու լաւ
սոսաջնորդներ: Նոյն զթոթեան
իննամբը տարածեցիր նաև Հայաս-
տանի վրայ, չնորհելով երրեւ հովին
եւ առաջնորդ՝ մեր հայոցն զսորը

Վրիգոր լուսաւորիչ, որ հայոց ազգն
ավտաստուածութեան խաւարէն՝ աւ-
տուածգիտութեան լուսոյն դարձուց.
ու քաղցր օրինացդ լծին տակ մացուց:
Արդ այս քաջ նահատակին բարե-
խօսութեամբը ծագէ մեր վրայ շնոր-
հացդ լոյսն՝ որ անսասան մնանք օրի-
նացդ մէջ՝ միշտ քաջ Հովուիդ ձայ-
նին հետեւելով. որպէս զի մեր կե-
նաց վերջն այն ուղղափառ զաւա-
նութեամբ արժանի բլանք լուսոյ
խորանին հանիլ, որի իբրեւ մեր
հօրն որդիքը՝ իրեն հետ մատասորենք
զնշմարիս քահանայապետդ, զՏէր
մեր Յիսուս Քրիստոս, որ ևս օրհ-
ԱՇԽԱՏ. Եւ արար ինչ ոչ ոչ ի
քեզ:

Եղջըն+:

Ով ամենօր հնեալ կօյս Մա-
րիամ, զիս՝ զքեզ գովելու արժանի
ըրեւ. Ընորհք տոր ինծի, որ խո-
նարհ սրտով միշտ քեզի դիմեմ,
զքեզ գովելու եւ ամեն բանի մէջ
ժառքդ ու պատիւդ աւելցընելու
ջանամ: Այս բանս կը ինզընեմ
քեզմէ անարատ յղոթեանդ ար-
գեանցն համար, որ բոլոր քրիստո-
նէութեան մեծ ուրախութիւն պատ-
ճառեց: Ով օրհնութիւնարեր ար-

մաս, որուն պառազնի ի յաւիտենից
օրհնեալ է: Օգնե ինծի, որ յդու-
թիւնդ՝ մեղացս պատիժները սրբէ:
Ով անարատ մայր Աստուծոյ եւ
զեղեցիկ շաշան մաքրութեան՝ Որ-
դոյդ առջին զիս մի մասնար. ամէն:

Ա ռ ա լ օ տ ե ա ն:

Ողջոյն քեզ Մարիամ, (որ կո-
սութեամբ ամեն հրեշտակներն ու
մարդիկ կը զերազանցես,) թի շնոր-
հաք. եւայլն:

Պազտանիցներս: — Փառք Հօր. էջ 309:

Ըստավան: — Զքեզ ունիմք բա-
րեիսոս կցոս ամէնօրհնեալ. մայր ա-
նարատ կմմանուելին. աաձար բանին
Հօրն երկնաւորի: Օրհնութեամբ
զքեզ մեծացուցանեմք:

Աշուր. Ով է սա, որ երեւեալս
է իրրեւ զառաւօտ, զեղեցիկ իրրեւ.

զւռսին . ընտիր իբրեւ զարեգակն ,
զարմանալի յօրինեալ :

Փ-է . Գ.Ե.ղեցիկ ես բարեկամ իմ ,
մերձաւոր իմ :

Աշոք . Եւ արաս ինչ ոչ գոյ ի
քեզ :

Եղջբար:

Ողջ լեր , ով ծնողդ Աստոծոյ ,
մառաւոր պատկ կուսութեան , ար-
քունական զաւազան ողջամիտ վար-
դապետութեան եւ անքակ տաճար
ամենասուրբ Երրորդութեան . ընա-
կարան անհասանելոյն , մայր եւ կոյս :
Քեզի համար ըստած է այն խոսքը ,
թէ Ո՞վ է սա որ երեւեալս է իբրեւ
զառաւօտ , գեղեցիկ իբրեւ զւռսին ,
ընտիր իբրեւ զարեգակն , զարմա-
նալի յօրինեալ : Քեզմով , ամենա-
սուրբ Երրորդութիւնը՝ բոլոր աշ-
խարհիս վրայ կը փառաւորուի : Քեզ-

մով կ'ուրախանան երկինք . քեզմով
կը շնծան հրեշտակը , հրեշտակա-
պետք եւ ամէն երանեալք : Քեզմով
հաւատացեալք սարբ խորհու-
ները միտիթ արութեամբ կ'ընդունին
եւ ուրախութեան իւղովը կ'ածուին :
Քեզմով կ'ուրախանան բոլոր տիե-
լերաց եկեղեցիները : Գովեատ եւ
փառաբանութիւն կ'ընծայենք քեզի ,
վասուառեալ եւ միշտ յաղթող ,
մայր ճշմարտին Աստուծոյ՝ այժմ եւ
յաւիտեանս . ամէն :

Ա ռ ե ւ ա գ ա լ ի :

Ողջոյն քեզ Մարիամ , (որ նշու-
լով զերկինս եւ զերկիր կը լո-
ւառուես ,) լի շնորհօք . եւայլն :

Պաղատանքներս : — Փառք Հոր . էջ 300 :

Ը-բավան : — Զքեզ երկեային
դուռն զորեատեսչզեկիել , եւ ասրն զոր
ծանեաւ գեղեան . սեբովբե հողեղեն ,

վեհագոյն քերովբէից։ Օրհնութեամբ զքեզ Աստուածածին մեծացուցանեմք։

Աշուակ. Դու մորենի ի լերինն Քորեբայ. Դու ճշմարիս գահոյք Սոզամոնի. Դու կենդանի տապանակութամք։

Փոխ. Ե յզութեան քոմը եղերանց արաւոց։

Աշուակ. Աղաչեա վասն մեր զշամիր, զօրոց ծնաբ զԱրդին։

Վահակունակ։

Ով պայծառ աստղ, որ անբիծ վարոցդ օրինակովը մեր առջեւ կը փայլիս եւ մեր հագիները կը ջերմացընես. Կօրհնեմ զքեզ եւ երանի կու տամ քեզի, ինչպէս որ դուն գոշակեցիր՝ թէ ։ Երանիցին ինձ ամենայն աղբք։ — Ով ամենօրհնեալ կոյս, յիշե անձառելի

փառացդ մէջէն, թէ մէր մայրն ե-
ղար, ծնանելով զանիկայ՝ որ մէր
եղբայրն եղաւ։ Կայէ ուրեմն աշուր-
ներուիդ մէր վրայ, որ սուրբ անոնդ
կը յիշենք։ Միուրդ բեր, որ ամենինիս
մէզաւոր ենք։ Խոկ դուն մեզաւորաց
Փրկչին մայրն ես։ Ոզորմէ մեզի։ ու
մանաւանդ մէր մահուան ժամանակն
զմեզ մայրենի այցելութեամբ միսի-
թարէ, ամէն։

Թ Ա Հ Ո Ւ :

Ոզոյն քեզ Մարիամ, (որ ամե-
նէն իրրեւ Մայր Աստուծոյ եւ թա-
գուհի երկնից ու երկրի կը պա-
տուիս,) լի շնորհոք. եւ այլն։

Պատառակներս։ — Փառք Հոր. Եղ 310։

Ը Ե Ր Ա Խ Ա Ն ։ Դաւ լուծիւ երկանց.
Բարձող անիծից. ծագումն արեւու-
լուսոյն ճշմարտի, որով հերքեաւ

խուարն առաջին։ Օրհնով թեամբ
զքեզ մեծացուցանեմք։

ԿԵՐԵԴ. Հիմոնք նորա ի լետոն
սուրբ նորա։ Սիրէ Տէր զդրունս
Ոիովինի՝ առաւել քան զամենայն
յարկան Յակոբայ։

ՓԻՒ. Ամայ եւ մեզ շուրջ է զիս-
վաւ։

ԿԵՐԵԴ. Յիրաւոնս եւ յարդա-
րովին ողղեալ է ամոն նորա։

Աղօն+ :

Ամեներջանիկ եւ բոլորովին ան-
ընծ կոյս, Մարիամ մայր Աստուծոյ,
գու հրեշտակներէն ու մարդկային
հոգիներէն զերազոյն, արեգական
ճառագայթներէն պայծառագոյն եւ
երկնից սերովբեներէն վեհագոյն եւ:
Դաւն ես ամեն նահապետաց յոյսը,
մարդարէից ակնեկայովինը, առա-
քելոց պարծանիքը, մարդաբիուսաց պա-

տիւր . արդարօց ու բախութիւնն ու
կուսանաց պսակը : Քեզմով , փա-
ռաւորեալ Տիրուհի , քեզմով հաշ-
տուեցանք մեր Արարտին հետ : —
Ով մայր Աստուծոյ , պաշտպանէ-
զմով : Ողորմէ մեզի , որ ողորմելի մե-
ջաւորներ ենք : Թող մի տար որ
գժօխային ոգին զմեզ նուաձէ , ամէն :

Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ա Ն :

Ողջին քեզ Մարիամ , (որ բա-
րեխօսութեամբոց ամէն բան ընդու-
նելու կարող ես ,) ի՞ շնորհօք . եւ-
այլն :

Պազառանկներս : — Փառք Հօր . էջ 309 :

Ծար-ի-ն : — Աւրախ լիբ ազրիւր
կնքեալ ջրոյն կենդանութեան , զոր
ծարաւելոյ բնութեանս ետուր ի
յարբումն : Զքեզ օրհնութեամբ
մեծացուցանեմք :

Աշուր. Դու բերկրութիւն Երաւ-
սաղեմի. զու ցնծութիւն ընտրելոց.
զու պարծանիք ազգիս մերոյ:

Փախ. Երբեւ շոշան ի մէջ փշոց:

Աշուր. Այնպէս մերձաւորդ իմ
ի մէջ զստերաց:

Վահաճակ:

Ով սիրելի զու սար Հօր Աստու-
ծոյ, զուն որ ամենուն բարեխօսն ես,
ազաշէ մեզի համար: Երանի մեզի
եթէ կարենանիք մեր կեանիքը բոլո-
րովին ծառայութեանդ նոիրել, ինչ-
պէս որ զուն ինք զինքդ Աստուծոյ
նուիրեցիր: Ով քաղցր թագուհի,
ինգունէ ինծի համար այն շնորհն
որ այսօրուընէ ամէն արարածներէ
հեռու կենալով ինք զինքս Արարտիս
նուիրեմ: Քեզի կը ընծայեմ, ամենա-
սուրբ Տիրուհի, յօժարութիւններս
եւ հոգւոյս ամէն կարողութիւնները:

Զիս ծառայիցդ կարգն ընդունէ։
Իսյց մանաւանդ ընդունէ ինձի հա-
մար այն շնորհքն՝ որ քեզի ու քո-
նրդոյդ միշտ հաւատարիմ։ մեամ։
Վառէ սիրոս Աստուծոյ սիրովն, որ
իրմէ զատ բան մը չուզեմ, բան մը
չսիրեմ։ ամէն։

Խ Ս Պ Ա Պ Ա Կ Ա Ն :

Ողջյն քեզ Մարիամ, (որ քեզի
դիմողներուն բարեխօսն ու մայրն
եւ,) լի շնորհօք . եւայլն։

Պազարանքներս։ — Պառք Հօր. էջ 309։

Ըստավան։ — Անթառամ ծաղիկ,
անդատապարս շառաւիոց վերտո-
ւեալ յարմատոյն Յեսուսի. զքեզ
Եսայեաս կանիաւ վերագուշաց՝
եօթնարփեան շնորհաց հոգւոյն ըն-
դունարան գոլ։ Աստուծածին Այս՝
զքեզ մեծացուցանեմք։

Աշուր. Եւ առել Տէր յւնձն. Եղից
թշնամովիւն ի մէջ քո եւ ի մէջ
կնոջդ. Նա սպասեացէ քում զինոյ:
Փե. Օրհնեալ ես զու ի կանայս:
Աշուր. Եւ օրհնեալ է պտուզ
որովայնի քո:

Վահակ:

Ոչ Մարիամ, կ'ողջունեմ զքեզ
իբրև Աստուծոյ ամենակարող ձե-
ռաց սքանչելի զործքը: Դուն՝ սրբու-
թեամբ, Հաւատարմութեամբ, ի-
խոնարհութեամբ եւ սիրովդ՝ Յի-
սուսի սուրբ սրտին ամենէն աւելի
հաճելի եղար: Ի քեզ կը վառի՝
ամեն մարդիկ Աստուծոյ եւ յաւի-
տենական երանութեան Հասցընելու-
զերակատար ուրը: Ուրեմն զորո-
վագութ սրտիդ Համար ըլլայ կ'ա-
զաւեմ տուր ինծի զօրութիւն, որ
սրտիս մէջէն ամեն մէզանական

բաները հանելով՝ սուրբ սրբիդ
նմանելու ջանամ. ամէն:

Հ Ա Ն Գ Ս Մ Ե Ա Խ :

Ողջոյն քեզ Մարիամ, (որուն
իմառքն ու պարծաները որ քան զօր
կ'առաւելու աշխարհիս վրայ,) լի
շնորհօք, Տէր ընդ քեզ. եւայլն:

Պաղատանքներու: — Փառք Հոր. է թ 309:

Ը-Ռ-Ե-Ն: — Անկանինք առաջի
քո Աստմածածին. եւ աղաւեմք
զանարատ զկոյսգ. բարեխօսեա զասն
անձանց մերոց. եւ աղաշեա զմիածին
Արդիդ՝ փրկել զմեզ ի փորձոթենեւ
եւ յամենայն վաանգից մերոց:

ԿԵՐԴ: Առ իս են ճանապարհը
շնորհաց եւ ճշմարտոթեան. յինէն
է յոյս ամենայն առաքինութեանց
եւ կենաց:

ՓՈՒ: Մատիք առ իս որ յանկայք
ինեւ:

ԱՇԽԵՐ : Եւ ի պաղոց արմանեաց
իմաց լցջկը :

ՎՀՅՈՒԹ :

Ով Կոյս Արքիամ, քու պա-
տուոյդ նուիրած օրւան վերջը քեզի
կը մերձենամ ու կը խնդրեմ քեզմէ-
որ ընդունիս ինծի համար, քեզի
նկատմամբ առանձինն սէր եւ ան-
շիջանելի չերմեռանգութիւն. որպէս
զի զքեզ միշտ իրրեւ գթած ու
խնամակալ մայրս սիրեմ ու յար-
գեմ: Դարձեալ կը խնդրեմ թո-
ղութիւն ամէն մեղացս, եւ հաստա-
տութիւն առաջադրութեանս՝ որպէս
զի ասկից եռքը չէ թէ միայն նե-
րելի մեղքով չվշտացընեմ, սիրելի
որդիդ այլ նաև անցած մեղացս
վըսյ միշտ զդշամ ու ալաշխարեմ.
ամէն:

Առանձինն կը խնդրեմ քեզմէ,

կոյս Մարիամ, ընդունէ բարեցն
մէջ յարատեւութիւն, որպէս զի
Աստուծոյ ծառայութեանը մէջ հաւ-
ատարմութեամբ ապրելով, եւ մա-
հուանս ատենք սուրբ Խորհրդ-
ներն ընդունելու արժանի ըլլալով,
հոգիս Յիսուսի ձեռքն աւանդեմ-
ամէն:



ԶԱԿԱԳԱՆ ԱԴՐԾՈՅՆԵՐ

Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Ազօթքինք զինք Ս. Աստվածածնի յանձնելու:

Ով Մայր Աստուծոյ, ես թշուառական մեղաւորս, թէպէտ քեզի մատուցանելու բան մը չունիմ, վասն զի լի եմ ամեն աղտեղութիւններով. բայց ինք զինքս բոլորովին քեզի կրնուիրեմ: Ինծի նայէ շնորհաց աթուեդ: Աստուծ անոր համար զքեզ այնչափ բարձրացոց, որ կարուելոցս ողորմիս: Օգնութեան հասիր որեմն. եւ մի թողուր զիս: Աը խոստովանիմ որ ողորմութեան արժանի չեմ: Բայց դուն, մի՛ նայիր անարժանութեանս, հասկա խեղճու-

* Առ աղոթքն ըստին 200 որուն ներողաթիւն ինքնուած է Ահաւի Ճ. Բ.:

թեանս՝ որ ամենէն աւելի աղքատն
եմ, ուստի եւ օգնութեան ամենէն
աւելի կարօտ։

Ով սիրելի Կոյս, առաջնորդե-
ննծի ինչպէս որ կը հաճիս։ Պատժե-
զիս՝ երբ քեզի չհնազանգիմ. վասն
զի զթած ձեռքէդ եկած պատիժ-
ներն՝ ինծի փրկութեան ճամբայ կը
բանան։ Աւելի կ'ուզեմ ծառադ՝
քան բոլոր աշխարհի տերն ըլլայու։
Քուկդ եմ, փրկէ զիս։ Քեզի կը
նուիրեմ ամէն բանս ու եթէ ատեն
մը քեզի հաւատարմութեամբ չծա-
ռայեցի, ասկից ետքն ինք զինքո
շակել կ'ուզեմ։ Աբ յուսամ թէ
խոսամունքս օգնութեամբէդ եւ Որ-
դւոյդ չնորհքովը կը կատարեմ ալ.
ամէն։

Աղօթք Ս. Աստուածածնի առաքինութեանց
Կմանելու:

Դիտեմ ով բարեգով կը Կոյս Մա-
րիամ, որ կը փափաքիս թշուտա-
կան մեղաւորացու բարիք ընելու եւ-
մեր խնդրուածքները կատարելու:
Անոր Համար ես ով՝ աշխարհիս
մեղաւորներուն ետքինը, զ թու-
թեանց կը զիմեմ, աղաչելով որ
խնդրուածքս կատարես: Թող խըն-
դրեն որիշները մարմնոյ առաղջու-
թիւն, Հարստութիւն, երկրաւոր բա-
րիք. ես միայն ամենասուրբ սրտից
հաճելի եղածը կը խնդրեմ:

Դուն ամեն մարդիկներէն աւելի
խօնարհ էիր. խնդրէ որիմն՝ ինձի
Համար խօնարհութիւն եւ ամեն
մարդիկներէն անարգուելու սէր:
Դուն ամեն բանի մեջ Համբերող էիր.
խնդրէ ինձի Համար Համբերութիւն,
որպէս զի կարենամ նեղութեանց

սիրով տանիլ։ Աստուծոյ սիրով լի
եիր. առ ինձի համար աստուծուի-
րութեան պարզեւը։ Դան սէր ես.
ինդրէ ուրեմն ինձի համար ընկեր-
սիրութիւն՝ մանաւանդ թշնամոցու։
Աերջապէս զան ամէն արարածնե-
րէն աւելի սուրբ ես. զիս ալ ամէն
մեղքերէ ազատ ըսէ։

Քեզի բան մը չի պակսիր։ Ամէն
բանի կարող ես. եւ ամէն ուզածդ
կրնաս ընդունիլ։ Բայց առ ամէն
շնորհքները քեզմէ ընդունելու խա-
փան կրնան ըլլալ՝ կամ քեզի զի-
մելու հեղոցութիւն եւ կամ միջնոր-
դութեանց վրայ անվատահութիւն։
Անօր համար կը ինդրէմ քեզմէ որ
ընդունիս ամէն բանի մէջ քեզի
գիմելու շնորհք եւ վստահութիւն,
ով ապաւէնո, եւ միսիթ արութիւնս.
ամէն։

Աղօթք ողջախոնութեան չորրորդ ինդրելու
համար:

Ով անարատ Կոյս Մարիամ, ըն-
դունէ ինծի Համար մաքրութեան եւ
սրբութեան շնորհքն. որպէս զի չըլ-
լայ թէ այնպիսի բան մը գտնուի
սրբիս մէջ, որուն Համար ամենա-
սուրբ աշուրներդ ինծ մէ դարձընեա:
Ընդունէ ինծի աս սրբութիւնն, որ-
պէս զի սկսիմ երկնաւոր բարու-
թեանց ճաշակը հիմակորնէ առնուլ
եւ երկրաւոր բաներէն դարշիլ: Ըն-
դունէ ինծի ողջախոհութեան առա-
քինութիւնը. որպէս զի կարենամ
երկնիք գալ, եւ անշափ ողորմու-
թիւնդ օրհնել արքայութեան մէջ.
որ ժամկուած է անոնց՝ որոնք մեղաց
տղմին մէջ են: — Միաբդ բեր, ով
ամենասուրբ Կոյս, որ եթէ միջնոր-
դութեամբդ աս շնորհքն ինծի Հա-
մար չընդունիս, ասիկայ քեզի յաւի-

տենական ատելովթեան առիթ պի-
տի ըլլայ՝ որով որդիներէդ մէկը
պիտի ատես՝ զանիկայ յաւիտենա-
կան հրօյն մէջ տեսնելով։ Ուստի
սիրելի Մայր, զուն որ այնչափ զ թած
ես ու հզօր, բնդունէ ինծի աս զե-
ղեցիկ առ արինովթիւնն։ ամեն։

Ազօթը բարի ման ինսդրելու համար։

Ով Մայր Յիսուսի պաշտպան
մէջաւորաց, քաղցր աչօքդ եղիելի
մէջաւորիսնայէ, եւ մահուան վայր-
կեանը չհասած օգնովթեան հասիր
ինծի. որպէս զի ըլլայ թէ յանկար-
ծական մահուամբ եւ առանց պա-
տրաստովթեան այս աշխարհէս ել-
լեմ։ Վազաչեմ, Մայր ոզորմութեան,
սիրելի Որդւոյդ շարչարանաց ար-
դեանցը համար պահէ զիս. որ մէջ-
քերէ հեռու ըլլամ սատանային
հրապոյրներէն փախչիմ եւ ճշմարիտ

զղօմամբ ու կատարեալ ապաշխա-
րութեամբ Յիսուսի հետ հաշտուիմ։
Կթա վրաս երանելի Մայր Աստ-
ծոյ, ան ահագին որը, ան սաստիկ
ճգնաժամբ՝ երբ շոնչս սպառի, լե-
զուս կապուի, աշուքներս միմբնեան,
ականջներս չունեն՝ ան ժամանակ դուն,
անարատ Մայր, զիս մի մանար։
Յիշե աղաչանքս՝ որ հիմայ քեզի կը
մատոցանեմ, եւ ազատէ զիս զիւին
փորձութիւններէն։ որպէս զի հոգիս
ձեռքդ յանձնելով՝ արժանի ըլլամ
զԱստուած եւ զքեզ յաւիտեանս
սիրել։ ամեն։

Ազօթք փորձութիւններէն ազատելու
համար։

Ահա թշուառական մեղաւորս ո-
տուքներու գ առջին ինկած՝ ներառն
կը ինդրէմ յանցանացս, որոնց հա-
մար դժոխոց արժանի եղած էի։ զի-

տեմ որ շատ հեղ անոր համար
յազմուեցայ փորձութիւններէն,
վասն զի անհոգ եղայ քեզի դիմելու:
Գիտեմ, որ եթէ քեզի ապաւնած
եւ զքեզ օգնութեան կանչած ըլ-
լոյի, չէի իյնար: Ավ սիրելի Պայր-
թշնամիներս վրաս յարձակելէն եր-
բեք շեն դադրիր: Աւրեմն ով յոյս
իմ, բնծի օգնութեան համար, զիս
պաշտպանութեանդ առկն առ. Եւ
մի թողար որ դարձեալ իրենց
ձեռքն իյնամ: Գիտեմ որ զանձնք
նուաճելու համար բնծի օգնելու
պատրաստ ես. միայն թէ ես զքեզ
օգնութեան կանչելու չհեղզամ:
Անոր համար կը խնդրեմ որ շնորհք
ընդունիս փորձութեան առեն քեզի
դիմելու: Կակ կենացս վերջին պա-
տերազմին համելու առենս, ով
թագուհի իմ, բնծի յիշեցուր որ
քեզի դիմեմ. որովէս զի քաղցր ա-

նունդ բերանս ունենալով՝ մեռնիմ։
Եւ կարենամ արքայութեան մէջ
միշտ զքեզ օրհնել։ ամէն։

Աղօթք առ սիրուն Մարիամու։*

Ու անարատ սիրու Մօր Աստու-
ծոյ, սիրու ամէն բանէ աւելի սի-
րութու արժանի։ Սիրու բոլորովին
նման Յիսուսի սրտին։ Սիրու մար-
գասիրութեամբ լի, եւ յանչափո
զթած մեր խեղճութեանցը վրայ։
Կակացուր մեր քարացեալ սրտերն,
եւ ըրէ որ աստուածային Փրկչին
սրտին նմանի։ Հեզ մեր սրտին վրայ
առաքինութեանցդ սէրը։ Պահէ զե-
կեղեցին. Եղիր անոր քաղցր ապաւէնն
ու իր թշնամկացն ամէն յարձակ-
մանցը զէմ՞ Հզօր աշտարակ։ Եղիր
մեր ճամբան, որով կարենանք Յի-

* Ավ որ առ աղօթքը ԿԵՆԵ 60 պահն ներազ-
բիւ կը գաղաքիի. Պիստ Եւ։

սուսին երթալ։ Եղիք մեր միջնորդն,
որով փրկութեան ամէն շնորհըներն
լնունիք։ Եղիք կարօտութեան
ժամանակ՝ մեր օգնականը. նեղու-
թեան մէջ՝ սիրութիւն, փորձու-
թեան ժամանակ՝ խրախոյս. Հայա-
ծանաց մէջ՝ ապաւէն. վշտաց մէջ՝
օգնութիւն։ Բայց եղիք մանաւանդ
մեր կենացը վերջին վայրկենին մէջ,
երբ բոլոր գժոխիք մեր վրայ յար-
ձակելու ըլլան, մեր բարեխօսն ու-
սկառապանը։ Այս, գլած կոյս, յու-
զուր այն վայրկենին մայրենի որտիդ
մէծութիւնն եւ զօրութեանդ կա-
րողութիւնը, զօր ունիս Յիսուսի
սրբին վրայ, բանալով այն ողորմու-
թեան աղբիւրին մէջ ապահով ճամ-
բայ մը՝ ուսկից կարենանք Հանիլ՝
հոն, ուր զքեզ միշտ օր հնենիք. ամէն։

Աղօթք Ս. Աստուածածնայ սէրն ընդու-
նելու համար:

Ով սիրելի Դշիս, զուն ջեր-
մեռ անդն ծառաներու գ սիրտը քեզի
կը քաշես: Իմ տառապեալ սիրտս
ալ քաշէ, որ քեզի հետ միանալ
եւ զքեզ սիրել կը ցանկայ:
Հանգիստ չեմ գտներ՝ մինչեւ որ
սէրդ շընդունիմ: Ի՞նչ կ'ըլլայի եթէ
զիս սիրած եւ ինձի համար Աս-
տուծմէ ողորմութիւն ընդունած չըլ-
լայիր: Զքեզ սիրել կը բաղձամ,
եւ կ'ուզեմ այնպիսի սիրտ մ'ունե-
նալ, որ ան խեղճերուն տեղն ալ
լեցընեմ, որովք զքեզ ամենեւին չեն
սիրեր: Այս բաղձամ լեզու մ'ունե-
նալ, որով բիւրաւոր լեզուաց տեղ
զքեզ զովեմ եւ մեծութիւնդ բո-
լոր աշխարհիս յայտնեմ: Եթէ
զանձեր ունենայի, ամենն ալ պա-
տուցդ համար կ'ուզեի սպառել:

Եթէ ծառաներ ունենայի, կը ջա-
նայի որ ամենն ալ սիրովդ լեցուն։
Փառացդ համար նաև մահ յանձն
կ'առնուի եթէ հարկ ըլլար։ —
Այսու ամենայինի կը վախնամ որ
շըլլայ թէ աս սերս կեղծիք ըլլայ։
Վասն զի գիտեմ թէ սերը՝ սիրովը
սիրելոյն նման կ'ընէ։ Արդ կը տես-
նեմ որ քեզի նման չեմ։ Ինչու որ
Դուն բոլորովին սուրբ ես, իսկ ես
բոլորովին աղտեզի։ Դուն բոլորովին
խոնարհ, իսկ ես՝ անշափու հպարտ։
Դուն ամենեւին անարտա, իսկ ես՝
անմաքուր։ Բայց ասիկայ ընելը քու-
գործդ է։ Որովհետեւ եթէ զիս կը
սիրես, կ'ընդունիս նաև շնորհք
քեզի նմանելու։ Յուցուր ուրեմն բո-
լոր աշխարհի թէ որչափ կարողու-
թիւն ունիս օգնելու անոնց, որ զքեզ
սիրել կը փափաքին. ամեն։

Աղօթք զդացեալ անձի առ Մարիամ:

Ով իմ Մայրս այնչափ գարշու-
թեանցս համար անարժան եմ քեզի
մերձենալու եւ զքեզ Մայր անուա-
նելու: Բայց ինչ ընեմ. չեմ ուզեր
որ շարութիւններս ան մխիթարու-
թենէն ալ զիս զրկեն՝ զոր կը զգամ
զքեզ Մայր կոչելու ատենս: Արժ անի-
եմ որ զիս մերժես. բայց նայէ սի-
րելի Որդւոյդ շարշարանաց ար-
գեանցն ու եթէ մայրենի սիրոց
դիմանայ, այն ատեն մերժէ զիս:
Ալ խոստովանիմ որ մեղաւոր եմ.
վասն զի Աստոծոյ մեծ վայելչու-
թիւնն անարդեցի ու զքեզ վշտա-
ցուցի: Բայց ահա զզացեալ սրտիւ
քեզիկ'ապաւինիմ: Դուն ինձի կրնաս
օգնել. օգնէ ուրեմն: Մ'ըսեր թէ
օգնութեան հասնիլ չես կրնար.
վասն զի ամենազօր ես եւ ուզածդ
կ'ընդունիս:

Ողորմէ թշուառ ական մեղաւորիս.
կամ ցուցուր թէ որուն ապաւինիմ:
— Զկայ մէ կը: ոչ երկրիս վրայ եւ
ոչ երկինքն, որ վրաս քեզի չափ
գութ ու խնամք ունենայ: իմ հաւ-
ատարիմ Մայրս Մարիամ, ցու-
ցուր վրաս մայրենի զթութիւնդ ու
զիս փրկէ: Աիրելի Մայր, ուրդ ին-
կած՝ քեզմէ թողութիւն, օգնութիւն
ու շնորհը կը խնդրեմ, ամէն:

Առօքք՝ զոր Մարիայ ամէն որդին բնե-
լու է:

Կը վայելէ, ով սիրելի թագուհի,
որ ես ամենասուրբ Մայր մ'ունենամ
եւ ին ըլլամ ամէն աղաւեղութեամբ: Մայր մը՝ որ Աստոծոյ սիրովը բոր-
բոքած ըլլայ, ու ես արարածական
սիրոյ մէջ ընկղզմիմ: Մայր մը՝ որ
ամէն առաքինութիւններով փայլի,
եւ ես ամէն բանէ զորկ ըլլամ:

Սառութիւն, արժանի շեմ որդիդ ը-
ստելու. վասն զի չար վարուքս
քուկդ ըլլալու զիս անարժան ըրի:
Բայց կը շատանամ եթէ զիս անարդ
ծառայիցդ կարգը գասես: Կ'աղա-
շեմ՝ զիս զքեզ Մայր կոչելու ար-
ժանի ըրէ, ինչու որ աս անոնք զիս
կը միսիթարէ, սիրոս կը սփոփէ և
վրաս պարտաւորութիւնը կը դնէ՝
զքեզ սիրելու: Աս անոնք՝ գիտ-
թեանդ դիմելու կը յորդորէ. և
երբ մեղացս մեծութիւնն եւ աս-
տամածային արդար դատաստանին
մտածութիւնը զիս կը զարհութե-
ցընեն, քաջալերութիւն կը զգամ,
մտածելով որ դուն իմ Մայրս ես:
Ուրեմն համարձակութիւն առ ով
սուրբ կոյս, զքեզ Մայր կոչելու:
Աս արտասուաց հովտին մեջ Աս-
տամածմէ ետքը զուն ես ապաւինու-
թիւնս: Աս յուսով կ'ուզեմ ապրիլ,

Եւ կենացս վերջին շուրջը ձեռքդ
յանձնել կրկնելով թէ ով Մայր
իմ Մարիամ, ոզորութիւնի. օգնե
ինծի. ամէն:

ՔԱՆԻ ՄԷ ԱՐ ԲՈՅ

ԱՌ ՄԱՐՏՈՄ Ա ԴՕԹ ՔՆԵՐԸ

Սրբոյն Աղոյիզիոսի:

Սրբուհի այս Մարիամ, առաջ-
նորդ ու թագուհի, աւասիկ գթու-
թեանդ կ'ապաւինիմ. Եւ այսօրութե
հոգիս, մարտինս ու ամէն կարողու-
թիւններս՝ պաշտպանութեանդ տակ
կը ձգեմ: Յոլոր յոյսս վրադ կը
դնեմ եւ ամէն բանս ձեռքդ կը յանձ-
նեմ: Դարձեալ՝ քեզի կը նուիրեմ
միսիթ արութիւնս, արտմանթիւններս
եւ բոլոր կեանիրս, բայց մանաւանդ

կենացս վերջին վայրկեանը։ Որպէս
զի բարեխօսութեամբոց եւ արժա-
նեօքդ ամէն գործքերս քու եւ սի-
րելի Ուղւցդ սուրբ կամացը Համե-
մատ ըլլան։ ամէն։

Սրբոյն Ըւզուտինոսի* :

Երանելի Դշիսյ, ով կրնայ զքեզ
ըստ արժանուցի գովիճ, որ մասնաւոր
հաւանութեամբոց կորուսեալ աշ-
խարհի օգնութեան հանելու փո-
թացիր։ Ի՞նչպէս կրնայ զքեզ զո-
վել անիծեալ մարդկութիւնն, որ մի-
այն ձեռնուութեամբոց փրկութեան
համբան կրցաւ գտնել։ Ծնդունել մըր
տկար զոհութիւնը։ ընդունել մըր
բաղձանքներն ու առաջադրութիւն-
ները։ Պահէ զմեզ Հզօր բարեխօսու-

* Թիւա թ. - Բահանայուսպեոց 1854 Մարտի
14 թիւ ամէն հաւանուցիրց։ որ առ ազգթրը զգացեալ
պահի ու ընթառացաւթեամբ կը զբացեն, 40 պահ
ներոցութիւն կը յնորդէ։

թեամբոց՝ գործքով կամ զանցառու-
թեամբ գործած մեղքերէն։ Ընդունե-
լիառացդ աթոռէն մեր աղաշանքն։ Եւ
անկէ մեղի չնորհք ու գթութիւն
խրկէ։ Բարեխօսութեամբոց կը յու-
սանք մեղաց թողութիւն։ Չեռքէդ
կը սպասենք մեր յաւիտենական ե-
րանութիւնը։ Վասն զի չենք գտներ
մէկն, որ արդար գատառորին բար-
կութիւնն իջեցընէ այնողէս՝ թիւղէս
դուն, որ արժ անի եղար Փրկչին մայրն
ըլլալու։ Առրր Կոյս, օգնէ տառա-
պելոց, պաշտպանէ թերահաւատ-
ները, միսիթարէ արտամութեան մէջ
եղողները, բարեխօս եղիր ժողովրդ-
ութեան աղաշէ քահանայից համար։
Տուր որ անունդ պատռողը՝ բարե-
խօսութեանդ փորձն ալ առնու։ Ո-
ղորմէ, արքայութենէն խոտորողնե-
րուն անշափ փառացդ մէջէն։ Եւ
դարձուր գթած աշուքներդ արտորե-

լոցս վրայ : Յուցուր սպաշտանու-
թիւնդ գլխաւորաբար անոնց վրայ ,
որովք օգնութեանդ կ'ապաւինին , եւ
ընդունէ իրենց խնդրուածքը : Երա-
նելի Կոյս , աղաւէ ի մասնաւորի Առ-
առածոյ ժաղովրդեանը համար . ամեն :

Ա . Յովի . Դամսսկացւոյն :

Ով սիրելի զուստր Յովակիմայ
և Աննայի , ինչպէս կընանք զքեզ
ըստ բաւականին զովել , որ մասոք
ամեն արարածներէն վեր ես . որուն
ձեռօք մեր Տէրը մարդկային բնու-
թիւնն զգեցաւ : Ինք մարմին է
քու մարմինդ եւ սկզբ սկզբէդ : Կայն
ինքն Աստուած սուրբ ստեանցդ կախը
ծծեց : Ասոր համար , ով ամենօր հ-
նեալ Կոյս , ընդունէ մեղաւորիս աղա-
շանքն . որ սիրովդ վառուած՝ փրկու-
թեան յոյսը վրադ կը դնէ : Այս խրն-
դամ քեզմէ , Տիրուհի իմ , որ ա-

զատես զիս մեղացս ծանրութենէն,
փարատես մտացս միժութիւնը, հա-
լածես սրտես երկրաւոր ցանկու-
թիւնները, մերժես փորձութիւնները.
որպէս զի բարեխօսութեամբ կա-
րենամ յաւիտենական երանութեան
հասնիլ. ամէն:

Արքայն Բնոնարգութիւն:

Ով թագուհի աիեղերաց, քեզի
կը դարձըննիք աշուրնիս. վասն զի
որ մը մեզքերուն ծանրութեանը
համար ահաւոր գտառորին առ-
ջեւը պիտ'որ ելլենիք: Ով կրնայ զինք
հաշտեցընել, ամենասուրբ Կոյս, քեզ-
մէ զատ' որ զինք այնչափ սիրած՝ եւ
իրմէն այնպէս սիրուած ես: Բայց՝ ով
Մայր ողորմութեան, բայց ականջ-
ներդ եւ լուս տառապելոյս աղաչանքը:
Պաշտպանութեանդ տակ կը զնենք
մենք զմեզ: Հանդարտեցուր Արդւոյդ

ցասումն. Եւ հաստատել զմեղ իր
շնորհացը մեջ: Գիտեմ որ մեզաւ-
որներէն չես գարշիր, եւ ոչ այ
կ'արհամարհես զանոնք՝ եթէ մեղ-
քերնուն վրայ զզօալով՝ միջնորդու-
թիւնդ խնդրեն: Մանաւանդ թէ դռն ն
զիրենք կը քաջալերես, իրենց միսի-
թարութիւնը կ'ըլլաս եւ Որդւցդ հետ
կը հաշտեցընես: Ով ամենասիրելի
Մայր, չկայ մեկն որ անունդ յիշէ եւ
սիրովդ շրորբոքի: Զքեղ սիրողները
չեն կրնար վրադ մասնել առանց
քաջալերուելու: Ով Դշիսյ, բարե-
խոս եղիր մեզի համար. վասն զի Որ-
դիդ քեզի լսելու միշտ պատրաստ է.
ամեն:

ՈՒՐԵՆ ԱՊՀՈՒ+:

Միոքդ բեր ով ամենաքաղցր
կօյս, որ լսուած բան չէ, թէ մեկը
պաշտպանութեանդ դիմած, օդնու-

թիւնդ խնդրած եւ քեզմէ մեր-
ժուած ըլլայ: Այս վստահութենեւն
քաջալերուելով՝ քեզի կ'ընթանամ,
ով Կոյս կուսանաց եւ Մայր, քեզի
կ'ապաւինիմ. իբրեւ մեղաւոր՝ քու-
առջիդ կը կենամ, մի մերժեր զիս,
ով Մայր Աստուծոյ, Հապա գիմու-
թեամբ լու պազատանքս. ամէն:

Սրբոյն Բռնաւենողուրայի:

Ով քաղցր Դշխայ, յի են երկինք
ու երկիր բարերարութիւններովդ:
Ինչպէս որ Յիսուս՝ մեր ամենազթած
Տէրն է, անանկ ալ զուն մեր ովոր-
մած Մայրն ես. վասն զի կը զթաս
անանց վրայ, որ զքեզ ովնութեան
կը կանչեն: Անոր Համար ես ալ քե-
զի կը զիմեմ. եւ կը միսիթարուիմ
անչափ ովորմութիւնդ անսնելով:
Բոլոր մարդկութիւնն զքեզ կ'օր Հնէ:
վասն զի քեզմով օր Հնու եցաւ: Միշտ

մեր քովը կեցիր, գմած կոյս. օգնէ
մեզի. որպէս զի Հայրն յաւիտենա-
կան զմեղ իր փառացն արժ անի ընէ.
ամէն :

Սրբոյն Նվիրումի:

Ով ամբիծ կոյս Մարիամ, Մայր
Աստուծոյ, Թագուհի Երկնի եւ Եր-
կրի, զու ևս նահապետաց յօյն ու
սրբոց ցնծութիւնը: Քու ձեռքովդ
Աստուծոյ հետ հաշտուեցանք: Դուն
ես մեզաւ որաց բարեխօսը, այէկո-
ծելոց նաւահանգիստը զերելոց ա-
զատութիւն, հիւանդաց սինութ-
թիւն, վշացելոց հանգիստ. եւ ա-
մենուս ապաւենն ու փրկութիւնը:
Առ զմեղ պաշտպանութեանց տակ.
վասն զի քեզմէ զատ ուրիշ ապաւեն
չունինք: Ծառայքդ կը կոչուինք.
վասն զի նկը զինքնիս քեզի նուիրե-
ցինք: Աւրեմն թող մի տար որ սա-

տանան իր ետեւէն քաշելով՝ զմեզ
գմոխը տանիի: Եւ որովհետեւ մենք
զմեզ հովանաւորովեանդ տակ դրած
ենք, քեզի կը դիմենք եւ կ'աղաւնենք,
եղիր Որդւոյդ առջեւը մեզի համար
բարեխոս: Ո՞վ լի չնորհօք Կոյս,
լուսաւորէ միաքս. արձակէ լեզուս,
որ արժանաւորապէս կարենամ զքեզ
օրհնել հիմոյ եւ յաւիտեանս. ամեն:




Ա. ՀԻԳԻՆՈՐԵՍ ՇՅԱԼՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՍՈՒՐ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ

ԵՒ

Ա. ԿՈՒՍԻՆ



ՊԱՏՐԱՍՑՈՒԹԻՒՆ

Առաք հաւատքնիս կը
սորվեցրեմ, եւ առե-
նեմն շնչի կրնար տա-
րակուսիլ թէ արքա-
գործուածնշխարշին մ.ջ.,
Հացին կերպարանաց տակ,
Քրիստոսի մարմինն ու
արբենը ճշմար-
տապէս կը գրա-
նուի Ան աղ-
պէար շնչի մոռ-
նալ որ Ծիստ ա-
մերսէ զաներուն
գրայ իրրեւ սիրոյ

Եւ գիտած եան զահի գրայ նատած է, որ
մեզի իր շնորհքներն առատապէս բաշխէ:
Գիշեր ցարեկ մեր քայլ կը կրնայ, որպէս զի
մեզի ունեցած մեծ սիրոյն ցուցը առայ: Ըստ
բաւականի ձանօսէ է՝ որ Ա. Եկեղեցին Մար-

Հայոց եւ արեան տաճեին ու թօքելը (Ուրբա-
թիւն սրբացը Հրամագրական ժաղավազեան
առջեւ զնելով եւ ան միջոցին հանդիսական
թօքօրներ կատարելով) զինու որարար անոր
Համար Հաւատատած է, որ մարդիկ իրենց
շնորհակալութիւններովն եւ ֆերմեամեզու-
թիւններն ընթառ աի Ա. Հազարդութեան մէջ
ներկայ գանձու իլլը խոստավանեն եւ պատուեն:

Բայց որպարփ զշակը, որպարփ արշամար-
հանքներ կրելու ամենու եցաւ մեր սիրելի
Փրկիչն ու Հիմար աղ այս սիրոյ խորհրդոցն
մէջ հարկ է որ նայն իսկ ան մարդիկներէն
կրէ, որոնց սիրոյն Համար իր ընակութիւնը
մեր խորաններուն զինոյ հաւատատած է: Ա-
սոր ներկամամբ Տէրն անզամ մը իր սիրելի
ազգախնային, Մարդարիուս Ազագոցին ար-
տանիք բրու, ինչպէս որ Յիսուս աի սուրբ
սրբուն զինու ամենը զինոյ զրու ած
պրըու կին մէջ կը կարգանք: Օր մը Մար-
դարիուս ամենասուր Հազարդութեան առ-
ջեւ ծունդ զրու ազգժք կ'ընէք: Յիսուս
սուսաւ որ զահի մը զինոյ կեցան՝ իր սուրբ
սիրուն անոր ցուցուց բայց զիէ պատահմ մը
պատամ, որևէ արիւն կը զազէք, զրու աղ
խու մը կար: Փրկիչը զինոյ յանու անէ կայե-
լով: «Տես աս սիրուն, բառու, որ մարդիկներն
ան պատիճանի սիրեց» որ առնեն բան բրու
ամենոց սէրը զատարդէյու Համար: Եւ եթէ
հարկ ըրբու պատրաստ եր երկրորդ անզամ
մ'ալ զահու երու: Տես միանդամային թիւ
մարդիկներուն և մ'ա մասն ինչ ապերախտու-
թիւններով, Համար ցում կ'ընեն ան սիրոյն: Տ-
ես ան զազգութիւններն, ամենասուր ու-
թիւններն ու անարդութեանները, որոնցմասի
առ սիրոյ խորհրդոցն ներկամամբ կը զարուին:
Եւ իմ սրտիս ամենին մ'ա ցուս պատճառապէ

ան է, որ նոյն իսկ իրենք զիրենք Առառ Ֆայ
Նու իրազ անձինքներն ինչի հետ պայման կը
վարուինք: — Աս ցանցեն եաբը, յայտնեցի իր
բազմանքն, որ Մարմար և արեան տաճին
ու թօքեքն եացն եկած ու բրած որն, ի
պատիք իր պատուական որոշներ մասնաւոր
ունեմ մը Հայուատաւուի, որպէս զի առող զինք
Եղմարտապէս սիրողներն իրենց ջերմուան-
դու թօքեն եւ սիրոյ ցոյցերով վախարեն ընեն
ան զառնաւելիքն վշանքուն՝ զրունք Հայու-
գու թօքեն խորհրդոյն մէջ կը կրէ: Միան-
ցամացի խոսանցու որ աս ջերմուանդու ա-
թինը կատարուանքն իր շնորհյաներն ա-
ռաւասպէս կը Հեղու:

Ասկէ կրնանք խմանալ թէ Ծիսառ, ինչ-
պէս որ մարդարեներեն մէկուն ձեռքափի-
յայտնեց, իր ու բախու թիւնը մարդիներուն
հետ կենաւից ըլլալու մէջ կը զանեւ: Եւ թէ-
պէս անոնք զինք թօքուն եւ արհամարհնեն,
առկայն ինց չի կրնար հեռանուլ, զիրենք չի
կրնար թօքուլ: Ասկից կրնանք հետեւ ցընել
թէ որշափ սիրեցի եւ Ծիսառ սի անոնք, որոնց
իրեն յանախ այցելու թօքեն կ'երթ ան: Եկե-
զերույ մէջ՝ ուր Հացի կերպարանոց տակ
ծածկուած է, իրեն ընկեր կ'ըլլան ու սրաւեր-
նին սռացեւ վատահու թօքենի: կը բանուն:
Կոյին իսկ Մարիամ Մագդ. Պայցեանին Հրա-
մացեց որ, որուն մէջ երեսունու: իրեւ անզամ
Հայուրդու թօքեն խորհրդոյն այցելու թիւն
ընէ: Կոյուը՝ Փրկչին Հրամանու կատարելով
(թնալիս վարուցու մէջ կը կարգանի) այնպիսի
մզում մը կը զգար Փրկչին մասենալու, որ
կ'աշխատէր մարման ալ խորանին մօտ ըլլալ:

Երանին թէ անզու ան քրիստոնաւէր Հո-
գիները խռովին, որոնք անզագար Ծիսառ սի
հետ անենաւուր Հայուրդու թօքեն մէջ կը կե-

Դասկցելով՝ իրենց երկնային խնդռութիւններ ու
երանեաւ թէ ինը հան կը զ անեն : Ահ , թէ պատ-
մի ինձ մեղք , թէ որչափ ջնորհներ կ'ընդունեն ,
որչափ լուսաւորութիւններու մասերու . մասնաւոր
կ'ըլլանե . ինչպիսի սիրով կը բարբորին , ինչ
մեծ երանեաւ թէ ինչ կը զգան առնենասու բր : Հա-
զորդութիւն թէ եւան . մեջ ծածկուած Առաւու ծովն
առջնու : — Եսր Առաւու ծոյ հաս առաջրիմ ծա-
ռան Հ . Ալոյիպիս Լանուաց՝ Արկիրիացւ ոց
Կրանեաւոր սռապեալլը՝ ու եռ իրրեւ երիտա-
սարդ՝ աշխարհին մեջ եր՝ ոյնպէս բարբորան
եր Յիսուս սի սիրութիւն որ իր սիրելի Փրկչէն հե-
ռանեարժ իրեն առելպարէի . կ'երեւ ար : Իրեն
համար կը պատճենաի : թէ խառապանահայրը
հրամացեց որ օր ուն մեջ ժամ մի միայն
Հազորդութիւն թէ : կ'ենայ : Բարեկամները
միտ զրին ու անունն որ երր որոշեալ ժամը
կը բարենաւր , ուստի երիտասարդը սաստիկ
բանու թէ ին կը զգար հրամանն ի զարծ զնե-
լու . և Յիսուս սի ընեկը թէ ենէն բաժնու երւ :
Եկեղեցին շելած՝ քիչ մը առնեն կը կենար :
ուն եռեալ աշար խարանին կը նայէր , եր-
կըսպազութիւն կ'ընէր եւ զերթն իրրեւ . թէ
զառայ մը անէ կը հեռանար . որով կը
զառ դրներ թէ որչափ զառ առաւ թէ ին կը
զգար իր Փրկչին մասաւորութիւն թէ ենէն բաժ-
նու երւ : Ո . Ալոյիպիս Պատճառիային ար
արէ ար եզու . հրամայել որ Հազորդութիւն թէ եւան
առջնու . յառա ժամանեակ շենայ : Բայց քանի
անգամ՝ որ սուրբ պատճենին այցելու թէ եւան
կ'երեւ ար : կը բանազառու եր՝ քիչ մ'ալ
Փրկչին մասաւորութիւն զմայրելու : Եւ
զեր ջապէս իր սիրելին կը բառնես եր . այժ
ժամանեակն ար՝ կ'անդուն անընդ բարբորան
կը զ ոչէր . Հեռացիր իզմէ , ով Առաւու ած ,
հեռացիր իզմէ : — Միթէ այս անզս շեր

որ Ա. Փր. Քառաւերեան իր զիւցագիտական պոր-
ծացը Համար Նոր զարութիւն կը ժազովէր :
Կայն ի զործ կը զնէր Նուռ . Ա. Փր. Ռե-
նիս, որ Եթէ այսպիսի Ժամանակի եկեղեց . ոյն
զաները դոց զանէր . Նոյն տեղը ծունքը կը զնէր
ու Ես անզագին Քերտես անզու թիւնը կը կատա-
րէր : Անձրեւի ու յուրաք բրած Ժամանակին
ալ իր Փրկչին ունեցած ուրը զնէ Հե-
ռու անց ցուցնելուն վրայ կ'ուրախանար :
Ա. Փր. Աստիպացին սովորութիւն ունէր բան
մը պատահած առեն, անմիջապէս Ա. Հա-
զարդութեան երեւարու . Եւ Հան՝ իր Ժամանեցը
Յիսուսին առջին զներու : Բայց առենէն
առաստիկ եր Ա. Այնեւորուու Պահեմիացւոց
թագուրդութիւնը : Առ ըրը Խորհրդաց մէջ
զանուու ող Առառ ածն ան առափանինի կը սի-
րէր, որ չէ թէ միայն անձամբ իր ձեռու բ-
ռերուզը Երկիրը կը մշակէր, ցարենն ու խա-
զացը կը ժազովէր, ու ակից Քրիստոնի մարմարը
և արեան Համար Կցիսորը եւ զինի պիտի
պատրաստաւէր, ոյլ նաև ձեռ առեն՝ պի-
չեր Ժամանակ Յիսուսի այցելու թիւնն կ'ել-
լէր : Իր բարի սիրուն այսպիսի Ժամանակի
Առառ ծոյ ուրեն այնուագի կը բարորդէր, մէծ
առարութիւնն իր անզամնոցը մէջ կը թիւ-
ափանցէր Եւ ձեռն ու առառ ցի զ պած առեն
կը Հալեցընէր : Առար վրայ իր ժարուցը մէջ
զարմանալիք դէուք մը կը կարգանիք : Իր Ճա-
ռան, որ զիշերային այցելու թիւններուն
մասնակից կ'ըբար, որ մը զ անզատ բրու-
թէ առաստիկ ձեռն մէջ առա ըները առա ելու
պիտի կ'ըլլան : Թագուն որը վրան զ թալով՝
Հրամայեց որ իր ասիցը Հետոքերուն վրացեն
բարէ : Ճառան պատահ էրը կատարելով, ան-
կից եարը առենախթէթ եւ ցրաս թիւնն ալ

26. *qq. mpr* *ld t. mpr* *mmmmmf. lq* *ld. lq* *qq. mpr*
mmmpri —

Սիրելի ընթերցող, զբառություն մէջ ասանց
նման օրինակներ պիտի կարգաւ, որոնց մէջ
յայսնի կը տեսնեմ թէ զԱռաւած սիրոց
ոգիներն առ աշխարհին վրայ իրենց բորբ
ուրախութիւնը սուրբ Խորհրդեան մէջ
եածկուած Աստվածոյն առջեւ կեցած առեն-
նին պատճեան : Վանենք ին չեմ առարակուածիր որ
իրար Հաղպատկերն զաւ չկայ ֆերմեաւե-
գութիւնն Աստվածոյն աշխարհ Հանելի եւ մեզի
այնաշխ ոգաւածիար, որուափ ամենասաւրը Հա-
զարդութեան մէջ Յիսուսի այցելութիւն-
ընելլ : Անոր Համար առ ֆերմեաւեգութիւնն
ի գործ զնելու մի գանձազիր : Հրաժարե-
ամեն ուրախութիւններէն, եւ զանեւ կէս-
տամ, կամ քառարդի մը չափ եկեղեցի զնու-
եւ հան Ո. Խորհրդեան այցելութիւնը ըսկ և
Անգամ մը փորձէն, եւ կը տեսնեմ որ առ
փորբ զահը քեզի ինչ մէծ ոգուաներու պատ-
ճառ կ'ըստի : Պահանջան, որ ամենասաւրը Հա-
զարդութեան առ զեւ ջերմ ութիւն թէ եւսմբ
անցուցած այս ժամանեակեզ առ երի ազատակար-
բան չեիր կրթուր ընելլ : Առ քանի մը զայր-
եկաններ մաշաւ անդ նպաստաման ութիւն որ օրէ-
նեան . եւ յու խանենական թէ առան մէջ քեզի
ութիւննեն մէծ ուրախութիւնը սիրուար պատ-
ճառէ : Ան այ գիտեան որ առ քառարդ ան-
ժամանեակը քեզի առարթնեւթիւն թէ առ յա-
ռաջազգէմ ըստը առ երի կ'ազնէ : քան ուրիշ
ինչ եւ իցէ Հազար արական կրթուր թէ եւնելուը :

11. *Worship*.—*Worship* and *homage* is the religious attitude of the people towards their God or gods. It is the expression of their love and reverence for the Deity. The word *worship* is derived from the Anglo-Saxon word *woruld*, which means *the world*, and *woruld-scap*, which means *the dominion of the world*. The word *woruld* is also used in the sense of *the world* as the abode of God, and *woruld-scap* is used in the sense of *the dominion of the world*, i.e., the dominion of God. The word *woruld* is also used in the sense of *the world* as the abode of God, and *woruld-scap* is used in the sense of *the dominion of the world*, i.e., the dominion of God.

առնելուառ ըր խորհրդայն մէջ իրեն այցելու-
թեան կու գան: Երանելին Հենրիկոս Սուզոյ
սովորութիւն ուներ լուելու: թէ և Քրիստոս
առն ունեղէն առելի իր խորանելերուն պայ
շու առաջելոց խնդրուածքին կը լու: Միիժ է
առարկերեւ առնելին հասաւասուն առաջազրու-
թիւնները: մանաւ անոց թէ զիւցազնական
ու խոնքը Հապորդութեան խորհրդայն առջեւը
չեին ընկը: Եւ ո զիսէ, որ մը գուն ալ առ
աշաւոր խորհրդայն առաջեւն ինը զինքդ չեա
որոշեր բարբառավիճ ուրիշ կեանքը անցընելու:
Եւ ինը զինքդ միայն Վասու ծոյ ծառ այսու-
թեանը նուիրելու: Եւ ալ ընորհակարու-
թեամբ պէտք եւ խոստավոնիլ, որ առնեա-
սու ըր Հապորդութեան պատճեռաւու: Յիսու-
սիս թէ պէտք եւ ծառ լու թէ եամբ յանհա-
խելու և համար եր՝ որ թէ ոզուցի զաշխարհ,
որուն ու զժքախուռ թէ եամբ այնիւնի տարի ծառ-
ապահ էի, եւ ինը զինքը Վասու ծոյ ծառ-
ապահ թէ եամբ տուի: Երանին քեզի եթէ զուն
առելի կանուխ ինձի նմանիխ, եւ ինը զինքդ
բարբառավիճ Վասու նուիրեն, որ ինը զինքը,
քեզի բարբառանէր ոզժակեզ ըրու: Պատր-
ձեալ կը կրկնեմ. երանի քեզի եւ բիւ ը
երանի ոչ թէ միայն յաւ խոնեականութեանը՝
Հասպար նուեւ: այս աշխարհին մէջ: Հաւասու
ինձի, աշխարհին ու բախութիւններու: ընդ-
ունայնութիւններն են: Ան յանհախ զրառանկու-
թերը, խաղերը, թէ առըները, ընկերութիւնները,
կատակներն են: աշխարհին ուրիշ ու քախուռ
թէ ինձները: դառնենութիւններն են: մարդուն քաղցր
թէ ոյն մը կը մաստակարարեն: Բառձներուն ո
հաս առաւ, մասն զի փորձառութէ թէ եամբը զի-
ւում, զիւզ առաշնօվ կրկնում ընկը: որ
քրիստոս Յերն մեր առելի միւիթ արու-

թիւն կը պարզեւէ ան հոգւ ոյն որ Հազոր-
դութեան խորհրդոյն ֆերմեռաւեզու թէ ենէն
չի ձանձրանար, քան բոլոր աշխարհոց՝ իր ա-
մեն հանգիստ թէ նեներովնեւ ու բախտութիւն-
ներ ովը :

Ո՞հ, ինչ խնդութիւն կը պատճառ է
ներանձնացեալ ոգւոյ մը մշմարիս հաւատ-
քավ առ բբ ու զանցոյն առջին ծնրադրել,
ունազար ազգեր առ ջին հարցուս որ բաներուն
համար սիրուր բանալ : Եթէ բաւական ջեր-
մուանգութիւն ալ չզգ անք, ոյսու ամենայ-
նիւ նոյն զործքին մեջ յարաւեւելուն շնու-
հրանանք : Ամենայն վասահութեամբ մաս-
նակ Յիսուս ամ. վասն զի միշտ կը սպառէ,
որ ազօնքները բաւ ու մեր ազագանցներն
ընդունի : Մասնաւոր թէ ինչ մեծ միիթմա-
րութիւն է իր առ ջին խոնարհուլ : մեզաց հա-
մար թօնզութիւն բնոգրել, մեր սիրուր անոր
բանալ իրեւ բարեկամի մը եւ իրմէն շնորհը,
աէր, խոնարհութիւննեւ . . . եւ արքայութիւնն
ընդունել : Ինչշատի մեծ երանեւթիւն է, անոր
սիրութը բարբարիլ : որ մեզի համար խորա-
ներուն վրայէն իր յաւ խունական շաբն ան-
գագար կը պազարի : Բայց ինչ այնշատի խո-
սիլը : Ճաւանցէն իւ ուեւելու : — —

Գալուք երանեւ հոյոյ Առափն այցելու-
թեանցը, կ'ըսէմ որ ընդհանրապէս ընդու-
նուած է Ա. Ռեանարդոսի այն խոռը թէ
“Աստուած իր առևն շնորհըները Մարեմոց
ձեռ որ հաւատացելոց կը բացիւն : Աստուած
կ'ուզէ որ մենք առևն բան Մարեմոց ձեռ-
քաղին ու բարեխօսութեամբը սատնանիք : Անոր
համար Հ. Սուարեզ կ'ըսէ “ընդհանուր կա-
թու զիկէ Եկեղեցւոյ կարծիքն է, թէ Աս-
տուած մեն շնորհը մ'ընդունելու համար Մա-
րեմոց բարեխօսութիւնը չէ թէ միայն ոգ-

առակաց՝ ոչը նաև։ Հարկաւոր է ։ Առ բայս
մեծ հաստատութիւն կ'ընդունի եթէ միտ
պահնքը ։ Ա. Եկեղեցւոյն Մարեմայ բերանքը գրած
Ո. Գոյց ոյն խօսքին թիւ։ Աւ իւ իւն+
իւ յիւն յոյ ամենայն առաջնական ։ Ե-
լայ առ իւնիցն ինչ եւ մորդ ոք շնորհապարհ-
իւ պահիցն ։ Չժիցն առ գրանու իւ եւ պա-
հիցն զիւնու հրեց իւնց ։ Երանել անոր ոք
զարս կը զարնէ եւ բարեխօսութիւնն կը
խնդրէ ։ Զիս զանոպը կեանց եւ յաս խո-
նական փրկութիւնն կը զանէ ։ Աւատի իրաւ-
ուոր Եկեղեցին զՄարիամ յշյուր կը կաչէ ։ Երբ
կ'ըսէ Յաւ ձրը զիւ վր։

Ո. Բեռնարդոս պլ։ Կոյսը պատճառ ա-
մենայն յաւոյ կ'անուանել ։ Ա. Եթէ շնորհը կը
խնդրենք ։ Մարեմայ բազ վենասենք ։ զան զի
առանց իր բարեխօսութիւնն շնորհը լեզու-
նիւ ու զեր ։ Եկանելընէ Ո. Անուշմար ։
առանց թեւոց թեւզիւ ու զեր են ։ Հ. Ա. բի-
կեմայի մեկ պրոտիվն մեջ կը կարգանք թէ
որշափ շնորհընէր ընդունեցաւ ։ Ասուն ոյ
Մայրութեանց Համար ։ ոք Եկեղեցւոյ մք մեջ
իրեն այցելութիւնն եւ կամ իր մեկ պատկերին
առ զեր գերմանականութեամբ ազգանու ըրած են ։
Ուշագ շնորհընէր յանդ անեցան այսպիսի
այցելութիւններու Համար Մեծն Ալլերդոս ։
Հառաբերութ Երրան ։ Հ. Փր. Սուարէզ ։ Եր
մեռութիւն ընդունեցան առ ծանօթութիւնն եւ ներ-
ներն ։ առ բարձր պիտութիւնն որով բարձր
Եկեղեց ոյն առ զիւ ը նշանաւոր եզան ։ Կոյցն
պրառ իրեն մեջ կը կարգանք զարձեալ թէ
ինչ մեծ պարզենեց ընդունեցաւ երանելի
պատճառն Յովի ։ Բերգման ։ ոք սովորու-
թիւն ըրած եր առնեն ոք Հառաբերութ պարձ-
անին մասսա անը մեջ Երանելը ոյ Կուսին այց-

երաւ թիւ և մ' շնորհու և Հով տեղին հասանառուն
առաջադրութիւն զրաւ Առաւու ծմբ եւարք
զՄարիամ սիրելու որուն վարդիկ մէկ պատ-
կերին առանց ալ հետեւեալ խօսքերը զրաւ
էր. "Ընեմ Համագլիք մինչեւ որ զՄարիամ" իմ
Մայրս սասանիկ շնորհում ։ Այդ կրնայ Համ մէ-
կին մէկին յառաջ թերել, ան ժնորհքները
զրաւնք ։ Կոյսն իր սիրելի ծառային ։ Տես-
նարդինու Սիենաց ոյն ընդունեցաւ ։ Ասու բրն-
երիտասարդու թէ եան մամանակ ։ քաղքին
զրաւն մօս եղող ազօթարանի մը մէջ առնե
որ Մարքմայ այցելու թէ եան կ'ելլէր. և ինքն
իսկ խոստավանեցաւ որ ամենասար Կոյսն
իր սիրան յափշտակելու էր։ Մարքմայ բրած
այցելու թէ եամբն զզացած ուրախու թէ ենէն
շզրկու ելու Համար՝ երրեք նայնին ի զործ զնե-
լու. զանց չեր ըներ։ Մարքմայ բարեխօսու-
թէ եամբն ընդունեցաւ աշխարհէւս հրաժարելու
մէծ շնորհքն. այն սասանինի սրբու թիւն
եւ միանդ ամայն խոսքնայի առ արեւալ ըլլուլ։

Քանիանի ու թիւն որ ամեն անգամ որ
կկեցեց. ոյ մէջ ամենասար Հարզորդու թէ եան
այցելու թէ եան կ'ելլէնք. Մարքմայ ալ այց-
ելու թէ իւն մ'ընտնյու, կամ զանէ անոր պատ-
կերին առ զին ֆեռու անդու թէ եան զործը մը
կաստարենից։ Եթէ առ ազգիկ գերմեռանդու-
թէ եան մէջ յարաւեւնոյ, մէծ առաջինու-
թէ եանց Համանելու յոյս կրնանիք ու նենալ. զան
զի Կիրին եղած ամենասիրու Յառայու թէ իւ-
ներուն ամենամեծ պարզեւներով վարձաւա-
սոց կ'ըլլոյ, կ'ըսէ ։ Անզրէսս կրետացին։

Հոգեւորական Հաղորդութեան պայ:

Հոգեւորական Հաղորդութիւնն ըստ Ա.
Բանավայի Աղութեաց ոյ, ու բիշ բան չէ եթէ

ոչ՝ բարբորեալ ցանկութիւն մը զԲիստ և
Հազորդու թէ եան մէջ բնդունելու և իրեն
հետ ի ներքու առ միանալու, իրեւ թէ իրա-
պէս զինք սրաներնիւս ընդունած ը ըստինք:

Տէրն մեր օր մը պատգինա Մարտեկա
կու առնին երեւնալով՝ իմացուց թէ որդում
համայ և իրեն հոգեւ որական Հազորդու թէ ինը:
Երկու ամսն ցուցուց կու առնին, մէկը ուղիւ,
մէկոյն արծաթէ, բաերով թէ ուղիւ ա-
մանին մէջ՝ իրական, իսկ արծաթէին մէջ
հոգեւ որական Հազորդու թէ ինը կը պահէ:

Առար համար Աստուծոյ հաւատարիմ
հոգիները սպարութիւն առնին առ անսակ
Հազորդու թէ ինը յանձնի ի զործ զնելու:
Երանելին Ականթ և Խաչեան օր: ան մէջ եր-
կու հարիւր անդամ առ անսակ հոգեւ որա-
կան Հազորդու թէ եան կրթութիւնը կ'ընէր:
Ուստի խորհուրդ կու առա որ Յիսուսի սի-
րոյն մէջ յառաջացող հոգիներն ամենասուրը
Խորհրդոյն այցելու թէ ինը ըրած առնենին,
հոգեւ որակեալ առ հազորդութիւն. մանուս անդ
թէ առելի ազելի կ'ընէն և թէ նոյնը պատա-
րացի ժամանեակ կրկնեն և երեկոնեն: Առ
զերծու անդու թէ ինը յառակրուն շիրածած ազ-
նու թէ ինը յառաջ կը բերէ և յառա միրկու-
լու և: Առ թէ ազնունը եւ զայն՝ որ զարիկոյ
ի զործ զնելու ծանրը չէ. զաւն զի՝ “Առ անց
մէկէ մը նշմարուելու, առանց ծոմ պահերու-
իւ առանց խառապահանչորմն յառաջու ընէն
Հրաման ինքրելու ամեն ժամու, ամեն զայր-
կենի մէջ կրնաս հոգեւ որակես Հազորդութիւ:
որովհետեւ միայն բարբորեալ մէր, միայն ե-
ռանց կը պահանջու ին:

ՀԱԳԵՏՈՒՄԱՊԵՍ ՀԱԴՐԴՈՒԵԼՈՒ

ԵՂԱՆԱԿ

(ԱՄՐՆ ԱՅՃԱԼՈՒԹԵԱՆ ՊԵՐՔԸ)

Յիսուս իմ, կը հաւատամ որ առ անենասորբ Խօսքը դեմ ներկայ ես: Ամէն բանէ վեր կը սիրեմ զքեզ: Ար բաղձայի զքեզ սիրաս ընդունիլ: Բայց որովհետեւ հիմոյ իրապէս ընդունելու անկարող եմ, զոմէ հազեւորապէս եկուր սիրաս: — Ար զքեմ զքեզ: կը միացընեմ ինք զինքս սուրբ սրտիդ հետ՝ իբրեւթէ Ճշմարտապէս հոն եկած ու ընակութիւնդ հաստատած ըլլայիր: Մի թաղուր որ առկից ետքը քեզմէ հեռ անամ:

ՀԱԳԵՏՈՒՄԱՊԵՍ ՀԱԴՐԴՈՒԵԼՈՒ ՈՒԹԻՇ
ԵՂԱՆԱԿ

Ովք երկրպագելի Յիսուս, հաւատամ թեամբ կը հաւատամ, որ ա-

մենասուրբ Հաղորդութեան մէջ ճըշ-
մարտապէս ներկայ ես։ Ամէն բանէ
վեր կը սիրեմ զքեզ։ Ըստ կը ցաւիմ
որ քեզի դէմ մեղանչեցի. բայց սըր-
տանց կ'առաջադրեմ առկէ ետքն զքեզ
ամենեւին չփշտացընելու։ — Ո՞չ, ո՞ր-
շափ կը ցանկայ հոգիս զքեզ լի-
դունիլ։ Բայց հիմայ զքեզ ամե-
նասուրբ Հաղորդութեան մէջ իրա-
պէս ընդունելու անկարող ըլլալով,
կ'աղաչեմ՝ գոնէ հոգեւորապէս սիրտա-
եկուր, եւ զանիկայ սուրբ շնորհք-
ներովդ զարդարէ։ Քեզի կը փարիմ,
Յիսուս իմ, իրքեւ թէ ճշմարտապէս
ներսս ըլլայիր։ Քեզի հետ կը միաւ-
որիմ։ Թող մի տար որ այսուհետեւ
քեզմէ հեռանամ։

Կ Ա Մ'

Եմուս, Տեր եւ Փրկիչ իմ, կը
հաւատամ որ զո՞ն Աստուած եւ

մարդ՝ ամենաստրբ Հաղորդութեան
մէջ ճշմարտապէս ներկայ ես։ Կը
սիրեմ զքեզ, որ յառաջազ օյն զիս
սիրեցիր եւ սիրոյս համար պատուա-
կան արիւնդ թափեցիր։ Աս ակար
սէրէս յորդորուելով, սրտանց կը
ցաւիմ որ զքեզ շատ մեղքերովս
այնչափ անգամ վշտացուցի։ Բայց
թաղութիւն կը ինչպեմ, քեզմէ աս-
տուածային Փրկիչ իմ, որ երկինքէն
իջար աշխարհիս մեղքերը ջնջելու։
— Ոհ, եկուր սիրսոս եւ լիցուր աս-
տուածային շնորհներովդ, մանաւ-
անդ քու սուրբ սիրովդ։ Քեզի կը
փաթթուիմ իմ, Յիսուս իմ, սէր իմ,
եւ բոլորովին քեզի կը յանձնեմ ինք
զինքս, որ զքեզ բոլորովին ինձի շնոր-
հնեցիր։ Դու ցանկութիւնս, զեղեց-
կութիւնս, սէրս, թող մի տար
որ այսուհետեւ քեզմէ բաժնուիմ։
Քեզի համար կ'ուզեմ ապրիլ ու

մեռնիլ: Բոլորովին քուկո կը բազ-
ձամ ըլլալ թէ աս եւ թէ անդին
աշխարհնք. ամեն:

Հոգեւորապէս հաղորդուելու տեսի համա-
ռուս եղանակներ:

Կը հաւատամ, Տէր իմ, որ ամե-
նասուրբ Հաղորդութեան մէջ ներ-
կայ ես իմ սիրոյս համար: Այսիս
ոչնչութեանը մէջ քեզի երկրագու-
թիւն կ'ընեմ: Կը ցաւիմ որ զքեզ
վշտացուցի. այսու հետեւ քեզի հետ
սերտիւ միանալու կը ցանկամ: Եկու ր
եւ զիս գոնէ հոգւով քեզի հետ միա-
ցուք:

Կը պազատիմ քեզի, ով Տէր Յի-
սուս Քրիստոս, եւ կը խնդրեմ որ
սիրոյդ քաջցր զօրութիւնը զիս բոլո-
րովին սպառէ. որպէս զիս մեռնիմ ու-

բեղ, որ ինձի անեցած սերէն մեռ-
նիլ ուղեցիք:

Ով չսիրուած սեր, ոչ անձանօթ
սեր, ով քաղցր Յիսուս իմ, սիրելի
Փեսայդ իմ, երբ գայ ովհա՞որ ժա-
մանակ մը, որ զիս բոլորովին քեզի
ձգես:

Յիսուս, քաղցր սեր իմ, գանձ
իմ, բորբոք սիրոս որպէս զի միայն
քեզի համար վառի, զքեզ միայն
սիրէ, քեզի միայն հաճոյ ըլլալու
բաղձայ, ամէն:



ԱՄԷՆ ԱՅՃԵԼՈՒԹԵՆԻ ՑԱՌԱԶ.

Ա Թ Յ Խ Ս Ա Խ Ս Փ Ռ Կ Ի Զ

Ա Դ Օ Թ Ք

Ավենասուրը Հազորպութեան մէջ ընդու-
նած անարգանաց ու անպատճութեանց
հատուցում ընելու համար*:

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ առ
մարդիկ ունեցած մէծ սիրոյդ համար՝
գիշեր ցորեկ առ խորհրդոյն մէջ լի
զթով եւ գործով կը կենաս՝ կը
սպասես, եւ ամեն քեզի այցելու-
թեան եկաղները մարդասիրութեամբ
կ'ընդունիս, կը հաւատամ որ ամե-
նասուրը Հազորպութեան մէջ ներ-
կայ ես: Խանար հովթեամբ կ'երկրագա-
զեմ՝ քեզի. եւ ինձի ցուցըցած մէծ
նորհացդ համար շնօրհակալ կ'ըլ-
լամ: Բայց զիստորար շնօրհա-
կալ կ'ըլլամ, որ այս Ս. Խորհրդեան

* Առ աղօթքը թերժուական թեամբ ըստ հերուս-
տիկան թ. - (1854. Ակադ., 7 թ.) 300 պրանի ներազա-
թիւն չհարհած է:

սիրելի Յիսուս, բոլոր կամքս եւ յօ-
ժարութիւններս սուրբ կամացդ ո-
յօժարութեանցդ հետ կը միացընեմ,
որ զթութեամբ եւ ողորմութեամբ
լի են: Եւ աս ամեն բան յաւիտենական
չօրդ նուիրելով՝ կ'աղաչեմ որ յա-
նուն քո եւ քեզի ունեցած սիրոյն
համար զիս ընդունի եւ աղաչանացս
լու: ամեն:

Ա. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

Ահա ասիկ ամեն բարեաց եւ բա-
րութեանց աղբիւրը Յիսուս, այսպէս
կը գոշե ամենաստրի Հաղորդու-
թեան մէջէն. Ու Ն-բ-մ-է Էցե, Եկ-ցէ ու-
իւ: — Ո՞րչափ առատահոս շնորհք-
ներ ընդունեցան սուրբերն ամեն ժա-
մանակ այս ամենաստրի Հաղորդու-
թենէն, այս անսովոտ սղբերէն, որոն
մէջէն Քրիստոս իր չարչարանքներուն
արժանեացը պառզը մեզի կը բաշխէ,

ըստ մարդարէին՝ թէ Ա-է+ Ը-է
ուրիշունեան, յ-զբեր-ցն Ք-ի-նեան:

Փերիս կոմսուհւոյն, — որ ստեղ
եւ երկայն ժամանակ ամենասուրբ
Հաղորդութեան առջեւը կենալուն
համար՝ Հարսն Ա. Հաղորդութեան
կոչուեցաւ, — երբ որ մը Հարցու-
ցին թէ ինչ կ'ընէ այնչափ ժամա-
նակ Ա. Հաղորդութեան առջին.

“Մինչեւ աշխարհիս կատարածն,
ըստ, հնի կ'ուզեի մնալ. որովհե-
տեւ հնի գտնուողն Աստուծոյ էու-
թիւնն է, որ արքայութեան մէք ե-
րանելեաց վայելքն ու բաժինն է:
Ես ձեր վրայ կը զարմանամ, որ կը
հարցընեք՝ թէ հնի այնչափ երկայն
առեն ինչ կընամ ընել. մանաւանդ
թէ ինչ կընամ չընել: Աիրել, զո-
վել, շնորհակալ ըլլալ, շնորհք խըն-
դրել...: Ի՞նչ կ'ընէ աղքատը Հա-
րցուստ մարդու մ'առջեւ կեցած ժա-

մանակ, ի՞նչ կ'ընէ հիւանդը՝ երբ
բժիշկը քովո կը տեսէ, ի՞նչ կ'ընէ
սաստիկ ծարաւ մարդը՝ ջինջ եւ
յստակ աղքեր մը պատահած ատեն.
ի՞նչ կ'ընէ սնօթի անձը՝ տեսով աւ-
սակ կերտկութերով պատրաստած
սեղանի մ'առջեւ :

Ով ամէն բանէ վեր սիրուելու
արժանի քաղցր Յիսուս, սիրոյս մի
միայն առարկան, ոչ որչափ եւ որ-
պիսի ծանր վշտեր հարկ եղաւ քեզի
կրել, որպէս զի մեր քով առ ամե-
նասորը խորհրդեան մէջ կարող
ըլլաս կենալ: Մեռնելու ստիպուե-
ցար, որպէս զի մեր խորաններուն
վրայ կարենաս բնակութիւնդ հաս-
տատել: Գիտէիր թէ մարմնաւոր
մօտաւորութեամբ մեր քովն կեցած
ատենդ որչափ անպատճութիւններ,
որչափ անարդութիւններ յանձնառ-
նուլ հարկ պիտի ըլլայ: Այսու ամե-

նայեիւ մեղի ունեցած սէրդ, եւ ան
սաստիկ բազձանքն որ մեզմէ սիրութէ^լ
կ'ուզես՝ ամեն բանի յաղթեց: —
Եկուր ուրեմն, Տէր, եկուր իմ սիրաս,
եւ գոյէ անոր զաները. որպէս զի ոչ
միշ արարած կարենայ մուտ գտնել
ան սրտին մեջ, որ քուկդ է միայն
եւ զոր բոլորովին քեղի նուիրել
կ'ուզեմ: Պուն միայն, սիրելի Փրկիչ,
զուն տիրէ իմ վրաս: Պաշտպանու-
թեանդ տակ առ զիս. եւ եթէ կտ-
տարելապէս չհնազանդիմ՝ պատճէ,
որպէս զի այսուհետեւ պատրաստ
ըլլամ բազձանքներդ ու կամքդ ճը-
զիւ կտտարելու: Տուր, սիրելի Յի-
սուս իմ, որ ուրիշ բան չփնտռեմ՝
բանի մը չբազձամ, բայց եթէ միշտ
կամքդ կտտարելու: Ուրիշ բանի
չցանկամ բայց եթէ քեղի, — ով
ծածկեալ Աստուած, — առեալ այ-
ցելովին ընել, քեղի հետ ըլլալ

Եւ զքեղ Հաղորդով թեան խորհրդոյն
մէջ յաճախ ընդունիլ: Թող խըն-
դրեն ուրիշներն երկրաւոր բարիք-
ես ուրիշ բան չեմ ուզեր, ուրիշ
բանի չեմ բաղձար՝ բայց եթէ սի-
րոյդ: Ահաւ տօիկ ասիկայ է միայն,
որուն համար եկեր՝ խորանիդ տո-
ջին կը պազտատիմ: Տուր, Տէր, որ
բոլորութին ինք զինքս մառնալով, մի-
այն անհամար բարերարու թեանցդ
վրայ մտածեմ: Ո՞վ զուք սերովքէք,
չե թէ ձեր փառացը վրայ կը նա-
խանձիմ, Հապա ձեր եւ իմ Աս-
տուծոյս ունեցած սէրերնուուդ վրայ:
Սորմեցուցէք ինձի թէ ինչ ընեմ, որ
կարենամ զինք արժանապէս սիրել
եւ իրեն հաճոյ ըլլալ. ամէն:

Յիսուս իմ, զքեղ միայն սիրել,
քեզի միայն հաճոյ ըլլալ կը բաղձամ:

Հաս կը յաջորդէ Հոգեւ որական Հաղոր-
դութիւնը. աևս եզ 359: — Անկից եաբը

կու դայ տանեասուրը Առաջին Ռայելութիւնը՝
զոր իր մէկ խորանին կամ պատկերին առաջին կառապելու է :

Ա Յ Յ Ե Լ Ո Ւ Թ Ւ Խ Դ Ա Մ Ա Կ Ա Յ Ա Ն

Ահաւասիկ մեղի համար շնորհաց
որիշ ազբիւր մըն ալ, մեր Մայրը
Մարիամ, որ այնպէս հարուստ է բա-
րութեամբ եւ շնորհօք, որ աշխար-
հիս վրայ եւ ոչ մէկը կը դանուի՝ որ
անկէ մաս մը շառնու. Ի լրա-նենէ անոք
Նորա մէտ ամենէ ին ասու: Ամենասուրը
կայսն առեւտաւոր հրեշտակին խորին
համեմառ ցցեալ է Աստմծու ամեն
աւսակ շնորհըներով: Սակայն չէ թէ
միայն իր անձին՝ հապա նաեւ մեղի
համար, կ'ըսէ պետքու Ասկեիսու, ըն-
դունեցաւ շնորհաց անշափ ինու-
թիւնը, որպէս զի յետոյ ամենուն,
բայց մասաւնդ իր պաշտպանու-
թեանը տակ եղողներուն մաս հանէ:
Առ շնորհըն ընդունեցաւ Մարիամ,

որպէս զի աշխարհիս փրկութիւն
շնորհէ :

Պատճառ մերոյ խնդութեան Աւ-
րիամ, աղաչե մեզի համար :

ԱՄԷՆ ԱՅՏԵԼՈՒԹԵԱՆ ԱԵՐՁԱ
Ա Թ. Ս. ԱՍՏՈՒԺԱԾԻՆ

Ա Դ Օ Թ Ք

Որպէս զի բը հզօք բարեխօսութեան ար-
ժանի ըլլամը*:

Ամենասորբ եւ անարտա Կոյս
Մարիամ, Մայր Փրկչին իմոյ, Թա-
գուհի աշխարհի, բարեխօս, յօյս,
պաշտպան մեղաւորաց, քեզի կ'ա-
պաւինիմ եւ քան զամենեան ողոր-
մեցի մեղաւորաց: Քեզի երկրապացու-
թիւն կ'ընեմ, ով գշխոյ մեծ, եւ
շնորհակալ կ'ըլլամ մինչեւ հիմակ
ինձի ցուցրցած մեծ սիրոյդ, ինձի
համար ընդունած անչափ շնորհացդ,

* Այսու թ. (1854 Ահար. 7թ) առ ազգմբը Ա.
Խուսին մէկ պատկերին առջեւ բառզերուն 3(3) արևա-
ներողութիւն շնորհած է:

եւ ի մասնաւորի անոր Համար՝ որ
զիս բարեխօսութեամբ աղառե-
ցիր գժոխքէն՝ որուն շատ անդամ
մեզացս ծանրութեանը Համար ար-
ժանի էի: Կը սիրեմ գքեզ, ով սի-
րելի Մայր, եւ քեզի ունեցած սէրէս
կը խոստանամ՝ որ ասկէ եաքը միշտ
քեզի ծառայեմ եւ ջանամ՝ որ ո-
րիշներն ալ գքեզ սիրեն: Աստուծմէ
եաքը վրադ կը զնեմ իմ բոլոր յոյսս,
քեզի կը յանձնեմ Հոգւոյս փրկու-
թիւնը: Ընդունե զիս ծառայիցդ կար-
գը, ով Մայր ողորմութեան. առ
զիս պաշտպանութեանդ տակ: Եւ
որովհետեւ խօսքերդ Աստուծոյ առ-
ջին անշանութեամբ թիւն անին՝ կը խըն-
դրեմ պահէ զիս ամեն փորձութիւն-
ներէն, կամ դոնէ շնորհը խնդրէ
Աստուծմէ՝ որ կարող ըլլամ՝ մին-
չեւ կենացս վերջին շունչն անոնց դէմ՝
պատերազմելով՝ զանոնք նուաճել:

Դարձեալ կը խնդրեմ քեզմէ զՅի-
սուս սիրելու շնորհը ու երջանիկ մահ:
Սիրելի մայր, առ Յիսուս ոնեցած սի-
րոյդ համար կը պաղատիմ, որ մինչեւ
կենացս վերջին կետն ինձ մե չհեռանաս:
Մի թողոք զիս մինչեւ որ չանանես
երանելեաց կարգն ուր, զքեզ օրհ-
նեմ եւ ողորմո թեանդ յաւիտեանս
շնորհակալ ըլլամ: Այսպէս կը յու-
սպէս, այսպէս ալ ըլլայ. ամեն:

Բ. Ա Յ Յ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ

«Որովհեաւ հացն ուտելիք մըն
է, կ'ըսէ Հ. Եւսեբիոս Կիերեմբեր-
գեան, որ եթէ ուտուի կը սպասի,
եւ եթէ չուտուի կը մնայ, անօր
համար Քրիստոս հացի կերպարանաց
տակ ուղեց աշխարհիս վրայ մնալ,
որպէս զի չե թէ միայն զինք սիրող-
ներուն հետ՝ Ա. Հաղորդո թեան
ձեռքով միանայ, այլ նաև տապա-

նակին մէջ մետրով՝ միշտ մեղի մօռը ըւ-
լոյ, եւ առով իր մեծ սիրոյն վրայ ստեղ.
կարենանք մասձելու: Ունայն ցուց
շանչն, կ'ըսէ հեթանոսաց առաքեայն
դիեզաբան շառայի ունել: Հապա
մենք ինչ ըսենք, երբ կը աւանենք՝
թէ նոյն իսկ հացի կերպարանաց
տակ ինք զինք ծածկեր է: «Չկոյ,
լեզու կ'ըսէ Ա. Պետր. Ալդանդա-
րեան, որ կարենայ բացատրել թէ
ինչպիսի աստիկ սէք ունի Յիսուս ան
հոգիներուն՝ որ շնորհաց վիճակի մէջ
են: Եւ որովհետեւ հարկ եղաւ որ աս
սիրելի հետան մեղմ հեռանայ, որ-
պէս զիւըլայ թէ իր մարմնաւոր
հեռաւորութիւնը՝ մարդկան պատ-
ճառ առյ զինք մանալու եւ վրան
ամենեւին շմասձելու, անոր համար
հաստատեց ամենասորբ խորհուրդն,
իբրեւ իր սիրոյն ցայտնի ապացուց՝
որուն մէջ անձամբ կը զանուին:

Եւ արդ, Յիսուս, որովհետեւ
դուն անոր Համար միայն Հոս ծած-
կուած կեցեր ես, որպէս զի քեզի
զիմուշ մեղաւորներուն խնդրուած ոյք
լսես, լու անշնոր Հակալու մեղաւորիս
ազօթքը, զոր այսօք քեզի կը մատո-
ցանէ: Ասուած իմ, կը ճանչնամ
սխալմունքներս. կը ցաւիմ որ զքեզ
վշտացուցի: Այս խնդրեմ նախ որ
թողութիւն տաս քեզի զէմ գոր-
ծած մեղքերուս: Եւ երկրորդ՝ թե-
պէս զբանմ որ աշխաւ սիրոյ ար-
ժանի: Ես, ես ես զքեզ սիրելու եւ
քեզի Հաճոյ ըլլայու մեծ պէս կը
ցանկամ, բայց որովհետեւ չ. Եթինար
իրօք զքեզ սիրել՝ եթէ դուն շնոր Հ-
քովդ ինձի օդնութեան շՀասնիս՝ ա-
նոր Համար կը խնդրեմ, տուր այսօք
ինձի այս շնոր Հքը. ցուցուր երկնից
քու զօրութիւնդ, քու բարերարու-
թիւնդ: Ընոր Հէ որ ես՝ որ քիչ մը

յառաջ թշնամիդ էի, հիմայ եւ ասկէ
ետքը միշտ ձշմարտապէս կարու
ըլլամ զքեզ սիրել։ Աստուած իմ,
գուն կրնաս աս շնորհըն ընել եւ
կ'ուղես ալ։ Իմ կողմէս պակսածը
գուն լեցուր։ Շնորհէ որ կատարե-
լապէս կարենամ զքեզ սիրել։ գոնէ
այնչափ սիրել՝ որ փոխարէն ըլլայ
թշնամանաց՝ որով զքեզ զայրացո-
ցի։ Յիսուս իմ, ամեն բանէ վեր կը
սիրեմ զքեզ, կեանքէս աւելի կը
սիրեմ։ Աստուած իմ։ աւը իմ ճ-
ամենայն ինչ։

Цензурировано в Краснодарском крае

ԱՅՍԵԼՈՒԹԵՐՆԵՐ ԱՅ ԱԿԱՑԱՆ

U' = \tau_1^2 \eta^{11} + \cdots + \tau_{n-1}^2 \eta^{nn} - \eta^{11} \cdots \eta^{nn}

տոնելուս, որուն ձեռքովն Աստուած
ամեն շնորհքները մեզի կը մատա-
կարարէ: Ո՞չ, սիրելի Սայր, եթէ
դուն այնչափ կը ցանկաս մեղաւոր-
ներուն օգնութեան հասնիլ եւ անոնց
համար այլեւ այլ շնորհքները ընդու-
նիլ, ահաւասիկ տես զիս, որ մեծ
մեղաւոր եմ ու քեզի կը զիմեմ: օգ-
նութեան հասիր ինծի: ամէն:

Մի միայն ապաստան մեղաւորաց
օգնի ինծի:

Գ. Ա Յ Յ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Փափէկութիւն իմ յորդէւ յորդէւն:
Ահաւասիկ մեր սիրելի Յիսուսը բաւ-
ական շհամարեցաւ աշխարհը զալ,
մեզի համար մեռնիլ՝ իր մահանեն
ետքն ալ ամենասսուրբ Հաղորդու-
թեան խորհրդոյն մեջ մեզի հետ ո-
ղեց մեալ՝ որպէս զի ճանշցընէ, թէ
իր ուրախութիւնը մարդկան հետ

կենակցելուն մէջ կը գտնէ: «Ով
մարդիկ, կը գոչէ Ա. Թերեզիա, ինչ-
պէս կրնաք Աստուած մը վշտացրնել,
որ յայտնապէս կը զբոցէ թէ իր
ցնծոթիւնը մեր մէջը կը գտնէ»:
Յիսուս իր բերկութիւնն ի մէջ կը
գտնէ, եւ մէնք մեր որախութիւնը
չենք գտներ ի Յիսուս, մէնք՝ որ նոյն
իսկ իր պալատին մէջ բնակելու պա-
տիւն ունեցած ենք: Ինչպիսի շնորհը,
ինչ մեծ փառք կը համարուեր հպա-
տակի մը, ծառայի մը, եթէ թագաւո-
րն իր պալատան մէջ անոր բնակու-
թիւն տար: Միթէ ասիկայ մեր
թագաւորին ապարանքը չէ: Ահա Աւ-
տուծոյ տունը, որուն մէջ Քրիստոսի
հետ կը բնակինք: Ճանչնանք ուրեմն
թէ որչափ պէտք ենք իրեն շնոր-
հակալ ըլլալ, եւ մեծ համարիլ ու
յարդել Յիսուսի անակցութիւնը:
Ողորմութէ ան աչորներդ, Յիսուս,

ասս սեղանոյն վրայեն՝ ուր որ մեր սի-
րոյն համար կեցեր ես, ինծի գար-
ձուր: Դուն ես ամեն բարտթեանց
աղբիւրը, զուն՝ ամեն ցաւոց եւ հիւ-
անդութեանց բժիշկը. զանձ ամե-
նայն աղքատաց. գարձուր աչուր-
ներդ ողորմելի մեղաւորիս, որ ոսուր-
ներուց առջեւ ինկած՝ ողորմութիւն
ու շնորհը կը իննդրէ: Ողորմէ, ողոր-
մէ ինծի: Խեղճութիւնս թէպէտ մեծ
է, պատ ամենայնիւ քաջալերու-
թիւնս չեմ կորսնցըներ: Չեմ յու-
սահատիր՝ քանի որ զքեզ, ով Աս-
տուած ողորմութեան, բարիք ընելու-
համար երկինքէն իջած՝ ամենասուրբ
նորհրդեան մեջ կը տեսնեմ: Կը
զովեմ, շնորհակալ կը լւամ եւ կը
սիրեմ զքեզ, Աստուած իմ, եւ եթէ
իջոյլ տաս որ քեզմէ ողորմութիւն
մը իննդրեմ, ահաւասիկ առ է իրն-
դրածս: Չեմ ուզեր այսուհետեւ

վշտացընել զքեղ. Եւ կ'աղաւեմ որ
ինձի լոյս ու շնորհք տաս, որ զքեղ
ամենայն զօրութեամբ կարենամ սի-
րել: Այս սիրեմ զքեղ, Աստուած
իմ, բոլոր սրաւես եւ ամենայն զօրու-
թեամբս կը սիրեմ զքեղ: Ծնորչե
որ ասիկայ կարող ըլլամ ամեն ժա-
մանակ ըսել՝ թէ առ աշխարհի իս-
քրայ եւ թէ յաւիտենականութեան
մէջ: — Ամենասուրբ Կոյս, առ բա-
հրեշտակը, պաշտպան սուրբս, առ-
նեցէք ինձի որ Աստուածս կարենամ
արժանապես սիրել, ամեն:

Ով հովիւ բարի, ով Ճշմարիստ
հաց, Յիսուս, ողորմ մեզի, Հովուե
զմեղ. զքեղ սիրովներուն ինք զինքդ
արքայութեանդ մէջ ցուցուր:

ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ա. ԿՈՅԱՆ

Կաղան+ Նորու լուր Քրիստուն: Ա Առ-
ըեմայ զերմեռանդութիւնը շղթայ

մըն է, կ'ըսէ ոլելը արդու, որուն միջ-
նորդութեամբ յաւիտենական երա-
նութեան կը հանվնք: Խնդրենք
ուրեմն մեր սիրելի Մօրմեն, մեր բա-
րեխոսեն, որ զմեզ սիրոյ կապանք
իրեն չետ անձկագոյնս կապէ եւ իր
պաշտպանութեան գիմելու միոյթն
կ'անցընէ. ամեն:

Ով զթած, ով բարեզութ, ով
քաղցր Այս Մարիամ:

Դ. Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ու ունէ քառանունիւն ունիցունիւն
հարաւ է - ու շաւ հազրդունիւն նորա:
Աշխարհիս բարեկամներն այնչափ
հաճութիւն կը զգան իրարու ընկե-
րութենէն, մինչեւ երրեմն նաև
ամրող օրեր մեկանզ կ'անցընէն:
Խոկ Ա. Հաղորդութեան առջեւը կե-
նալէն՝ միայն զՅիսուս շնիրողը կը

ձանձրանայ: Առբուերն աշխարհիս
վրայ՝ առ Խորհրդեան մեջ կը գլու-
նեին իրենց արքայութիւնն, իրենց
բովանդակ ու բախութիւնը: Արքուհի
թերեզիա մահուանէն եռքը՝ օր
ժ'իր կոսանքներէն մեկուն երեւնա-
լով՝ ըստ: “Արքայութեան մեջ եւ-
երկրիս վրայ եղաղները՝ պէտք նոր-
արքութեան եւ սիրոյ մեջ հաւատար
ըլլալ. այն ասքերութեամբ միայն՝
որ մենք վայելմանց մեջ ենք, իսկ
դուք վշտաց մեջ. վասն զի ինչ որ
մենք արքայութեան մեջ Աստուծոյ
առջին կ'ընենք, նոյնը դուք այս աշ-
խարհիս վրայ Ա. Հաղորդութեան
առջեւ կը պարաւորիք ընելու:”
Աւրեմն մեր արքայութիւնը առ աշ-
խարհիս վրայ ամենասուրբ Խոր-
հուրդն է:

Ով անարտա գառն, որ մեղի հա-
մար իսաւախայտին վրայ մեռար, միտք գ

ւեր որ ես ալ ան հոգիներէն եմ՝
զոր անշատի ցաւերովդ եւ զառն
մահուամբդ փրկեցիր։ Ընորհք տուր
որ բալորովին քուկդ ըլլամ։ Եւ մի
թողուր որ երբեք զքեզ կորսնցըր-
նեմ, որ ինք զինքդ ինծի տուիր եւ
ինծի ունեցած սիրոյդ համար ամեն
օր ալ կու տաս, մեր խորաններուն
վրայ՝ ինք զինքդ զոհ մատուցանե-
լով։ Յիսուս, տուր որ ամբողջապես
քուկդ ըլլամ։ Բալորովին քեզի կը
նուիրեմ ինք զինքս։ Քեզի կ'ըն-
ծայեմ կամքս, կառլ զանիկայ սի-
րոյդ քաղցր կապովիր, որ ասկէ ետեւ
միշտ սուրբ կամոցդ կատարեալ
հպատակութիւն մատուցանէ։ Այ-
սուհետեւ ալ իմ բաղձաներներս
կատարելու համար ապրիլ չեմ ու-
զեր, հասկա միայն հաճութիւնդ եւ
սուրբ կամքդ ընելու համար։ Հանե-
իղմէ, ՏԵՐ, ան ամեն բան որ քեզի

անհաճոյ է. եւ չնորհք տուր որ
ամենեւին ուրիշ բան չմուած եմ, բայց
միայն քեզի հաճոյանալ: Ուրիշ բանի
չեմ բաղձար, բայց եթե ինչ որ
կ'ուզես թէ բաղձամ: Բոլոր սրանես
կը սիրեմ զքեզ, Փրկիչ իմ, կը
սիրեմ զքեզ, որովհետեւ զո՞ն ալ
ասոր կը բաղձաս: Ալ սիրեմ զքեզ,
ինչու որ դուն մի միայն սիրուելու
արժանի ես: Ըատ կը ցաւիմ որ
այնչափ չեմ կրնար զքեզ սիրել,
որչափ արժանի ես: Պատրաստ եմ,
Տեր իմ, սիրոյդ համար նաև մեռ-
նելու: Չնգունեւ սրախս աս յօժարու-
թիւնն եւ ասոր միօխարեն տուր որ
զքեզ սիրեմ. ամեն:

Ո՞հ, հաճութիւն կամացն Աստո-
ծոյ, ինք զինքս բոլորովին քեզի կը
նուիրեմ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԸՆ Ա. ԿՈՅԱՐ

Ես եմ Արար գեղեցիկ ուրոյ, կ'ըստ
մեզի Ամրիամ. այսինքն այն սիրոյն՝
որ հոգիներուն արտաքոյ կարգի գե-
ղեցկութիւն կը շնորհէ: Ամրիամ
Առգդաղենացիպացեան՝ օր մը տեսաւ
թէ սուրբ Կոյսի ոմանց քաղցր ըմ-
պելիք մը կը բաշխէր. որ աստուա-
ծ ային սէրը կը նշանակէ: Այս աս-
տուած այինսիրոյն շնորհքը միայն Առ-
րեմայ բարեխօսութեամբը կրնակք
ընդունիլ. որեւէն իրան ինդրենիք:

Այս իմ, յոյս իմ, տուր որ բո-
լորովին Յիսուսին ըլլամ:

Ե. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ

Օհանունի Երիտ չ-ը առան Ե- պո-
տրակ լբոյն՝ ուր գիշե շնորհ իւր: Ճիմ-
ճկուկը մեր աներուն մէջ իր բնա-
կութիւնը կը հաստատէ, նոյնպէս

տառարակներ իր բունին մեջ կը պահանջութիւն բայց գուն, թաղաւոր իմ եւ Աստուած իմ, բնակարանդ մեր խորաններուն վրայ Հաստատեցիր, որպէս զի մեր քով դանուիս եւ միշտ մեզի հետ ըլլաս: Տէր իմ, ովէտք ենք ըսել՝ թէ մարդիկներն այնչափ կը սիրես, որ իրր թէ ընելիքդ շեիր դիտեր: Եթէ այսպէս է, աս մեկ հատիկ շնորհքն ալ ըստ, ով ամենասիրելի Ծիստս, որ մենք այ վաստինք սիրովդ: Ասոն զի շի վայելեր որ թույլութեամբ սիրենիք Աստուած մի, որ այնչափ եռանգան սիրով կը սիրե զմեզ: Քեզի քաշեզմեզ, սիրով քաղցր կապանքով կապէ զմեզ, եւ աղեկ ճանչցոր թէ ինչպիսի սաստիկ սիրոյ արժանի եւ, եւ թէ ինչ է սիրածդ եւ ինչ քանի շեա հաճիր:

Ո՞չ, անչափ վաստակութիւն, ո՞չ

անքաւ բարելարութիւն. զուն այն-
պէս կը սիրես զմարդիկ, եւ այնչափ
բան ըրիր՝ որպէս զի իրենք ալ զքեզ
սիրեն. եւ ինչպէս կրնայ ըլլալ՝ որ
առ ամեն բան անսնելէն ետեւ՝ այն-
չափ քիչերն զքեզ սիրեն: Չե, այ
այսուհետեւ չեմ ուզեր ան տա-
ռապեալ մարդիկներէն ըլլալ, որոնց
մէջ առեն մը կը գտնեմի: Տէր,
հաստատ թեամբ միտքս զրի որ
ասկէ ետեւ ամենայն զօրութեամբ
սիրեմ զքեզ եւ քեզմէ ի զատ
ամենեւին բան շնիրեմ: Դաւն ար-
ժանի ես ասոր, զուն զիս ասոր կը
յորդորես, ես ալ բաղձանքդ կա-
տարել կ'ուզեմ: Ով Աստուած սրբի
իմայ, շնորհք տուր որ կատարելապէս
կարող ըլլամ՝ ցանկութիւնդ կա-
տարել: Ես կը խնդրեմ քեզմէ,
չորչարանացդ արդեանցը համար, եւ
կը յուսում որ խնդրուածքս կը կա-

տարես: Երկրաւոր բարութիւններն
անոնց առջ՝ որ քեզմէ կը խնդրեն.
ևս ուրիշ բան չեմ մնառեր՝ բայց
եթէ ամենամեծ գանձը՝ քու ուրի:
Կը սիրեմ զքեզ, Յիսուս իմ, կը
սիրեմ զքեզ, ով անբաւ բարու-
թիւն: Դան միայն ևս իմ անդին
գանձս, ցնծոթիւնս, ուրս, ամեն:

Յիսուս, դուն ինք զինքդ բոլորոցին
ինծի առիր, ևս ալ ինք զինքս քեզի
ողբակեց կը մասոցանեմ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ա. Ա. ԿՈՅԱՆ

Ով սիրելի Մայր իմ Մարիամ,
սրտից յափշտակիւն ևս գու. մասն
զի գեղեցկութեամբդ ևս բարու-
թեամբդ ամենուն սիրտը կը զովսաւ:
Դազցիր, հանէ իզմէ սիրտս ու կամքս:
Քեզի կը նուիրեմ երկոքն ալ, որ-
պէս զի դուն սրտից ևս կամացդ
հետ Վաստածոյ մասոցանես, ամեն:

Ամենասիրելի Մայր, մեզի համար
աղաչէ:

Զ. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ

Ուր ժանին յեր է, անդ է- սկսու-
թը եղին: Մարդ բոլոր իր մատծ-
մանիքներն, ամեն իր բաղձանիքները,
կ'ըսէ Քրիստոս, հռն կ'ողղէ՝ ուր
գիտէ թէ իր գանձը կը գանուի:
Ասոր համար սուրբերն՝ որ բան
մ'այնպէս մեծ չէին համարեր եւ ոչ
ինչ այնպէս կը սիրեին թնչպէս
զՅիսուս, իրենց բոլոր մատծմոնիքն
ամենասուրը Հաղորդութեան վրայ
էր: Ամենասիրելի Յիսուս իմ, որ սի-
րոյս համար գիշեր ցորեկ աս սուրբ
տապանակին մեջ փակուած կեցած
ես, կ'աղաչեմ՝ սիրոս բոլորութիւն
քեզի քաշէ, որ ասկէ ետեւ միայն
վրադ մատծեմ ու քեզմ զատ բան

շսիրեմ, բան չփնտուեմ։ Տուր ինձի
առ շնորհը դառն չարչարանցու
արդեանցը Համար, որուն զօրու-
թեանը վստահանալով՝ կը խնդրեմ
քեզմէ այս բանս։

Հազորդութեան խորհրդոյն մեջ
սիրոյս Համար ծածկուած Փրկիչ՝
ինք զինքու մարդկան սիրելի ընելու։
Երևաց սիրուր քեզի քաշելու Հնարք-
ներոց ինչչափ գեղեցիկ ու հաճոյա-
կան են։ Պաւ, Որդի Աստուծոյ,
մեզի Համար մարդ ըլլովն ու մա-
նիլը բաւական չհամարեցար. Կաւու-
աս նուիրական խորհուրդը Հաստա-
տեցիր, որպէս զի մեզի ընկեր ու
կերակուր ըլլաս եւ զքեզ մեզի
յաւիտենական փրկութեան պրո-
ցնես։ Մէյ մը աղու կերպարանը
առած՝ ախոռնի մը մեջ ինք զինքու
մեզի կը ցոցընես. մէյ մը աղքատի
ովէս՝ հիւնութեան արուեստին կը

զբայիս . Երբ եմն խրիւ անօրէն՝ խա-
շին վրայ , գարձեալ՝ Հացի կերպա-
րանաց տակ մեր սեղաններուն վրայ
կը կենաս : Ուրիշ ըան մնաց որ ըրած
չըլլաս , որովէս զի մեզմէ սիրուիս:
Ո՞չ անշանիս սիրուելու արժ անի : Առ-
տուած , Երբ զայ սիհոյ ժամանակ
մը , որ այնչափ սիրոյդ մոխորէն՝
սկսիմ ճշմարտապէս զքեզ սիրել:
Տէր իմ , ասկէ ետքն անոր Համար
կ'ուզեմ ապրիլ , որ զքեզ՝ միւսյն
զքեզ սիրեմ : Ա ասն զի ի՞նչ օգուա-
կընել ինծի կեանքու՝ եթէ զքեզ
սիրելու չդործածեմ , եթէ չսպառեմ
քեզի Համայ ըլլալու , ուր զուն բոլոր
կեանքու ինծի Համար զահեցիր : Եւ
քեզմէ ուրիշ ի՞նչ բան կընամ սի-
րել , որ բոլորովին զեղեցիկ , կառա-
րեալ ըաբաթիւն , բոլորովին սուրբ:
Եւ նոյն իսկ ուր ևս : Այս , ապրիմ
այլ միայն զքեզ սիրելու Համար :

Տուր որ քեզի ոնեցած սիրոյ զօր
ըստ թեամբը սիրոս ոչնչանայ: Ընորհե
որ երբ անչափ սիրոյդ եւ մեզի ո-
նեցած անսպառ զթոյդ վրայ մատ-
ծեմ: Եւ կամ մարոյ, խաչի եւ Ա. Հա-
զորդութեան խորհրդոյն անունները
լուսմ, վասիմ քեզի համար մեծ բա-
ներ զործելու, որ մեզի համար այն-
պէս խելքէ վեր բաներ ըրիր. ամէն:

Աստուած իմ, տուր ինծի շնորհը
որ չմեռած քեզի համար զործեմ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ա. Ա. ԿԱՅԱՐ

Խբեւ- յիւնէ վայելու է դաշտէ:
Ես եմ այն զեղեցիկ ձիթենին կ'ըսէ-
Մարիամ, ուսկից ողորմութեան ձեթը
կը հուէ: Դաշտի վրայ կը կենամ,
որպէս զի ամենք զիս տեսնեն ու
պաշտպանութեանս ապաւինին: Ծի-
շէ, ով զթած Այս, յիշէ՝ որ երբեք
բառած չէ՝ թէ մէկը պաշտպանու-

Եթե անդ ապաւինած ըլլայ, եւ զուն
իրեն օգնութեան հասած չըլլաս.
ամէն :

Ո՞վ Մայր ողորմութեան, ընդունե
ինծի միշտ քեզի ապաւինելու շնորհը :

Է. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Անսասի Եւ ընդ յեզ եւ զամենայն
առար մինչեւ ի խորաբան աշխարհի :
Մեր սիրելի ու զթած Հոփին, որ
իր ըոլոր կեանքըն իւր ոչխարիներուն
համար զոհեց, նաև մահուանեն
ետեւ շողեց մեզմէ բաժնուիլ : Աւ-
տսիկ, կ'ըսէ, ոչխարիք իմ սիրելիք,
ես միշտ ձեզի հետ եմ, ձեզի համար
աշխարհին վրայ Ա. Հաղորդութեան
մեջ մնացի : Հոն զիս ամեն մամանակ
կրնաք գտնել, միշտ պատրաստ եմ
ձեզի օգնելու, իմ մօտաւորութեամբ ու
զձեզ միսիթարելու : Մինչեւ ձեր

կենաց վերջին կեար, մինչեւ աշ-
խարհիս կատարածը զձեզ չեմ
թողուր: “Մերաստածածային Փեսան,
կ'ըսէ Ա. Պետրոս Ալդանգարեան,
չուզեց որ իր սիրելի Հարսն իւր հե-
ռաւորութեան ժամանեալի առ անձին
մեայ. Եւ այս պատճառիս Համար
ամենասուրբ Խորհուրդը Համա-
տեց, որուն մէջ ինք անձամբ իր
զանուի:

Ո՞վ մարդասեր Տէր եւ ամենա-
սիրելի Փրկիչ, աւասիկ քեզի այցե-
լութիւն ընելու եկած եմ: Բայց
պեար եմ՝ խոստավանիլ՝ որ զուն
անՀամեմատ սիրով ինձի փախարէն
կը Հասուցանեա՛ երբ Ա. Հազորդա-
թեամբ սիրուս կու զաս: Ան ժամա-
նակ չե թէ միայն մարմառապատ-
տութեաս կը կենաս, այլ Կաեւ կե-
րակութիւն կ'ըստու, անձու կ միտուորու-
թեամբ ինձի հետ կը միանաս,

զքեղ բոլորովին ինձի կա տաս,
այնպէս որ Ճշմարտապէս կրնամ՝ ը-
սել թէ Յիսուս բոլորովին իմս եղաւ:
Եւ որովհետեւ գուն ինք զինքդ ինձի
կը պարզեւես, կը վայելէ որ ես ալ
ինք զինքս բոլորովին քեզինուիրեմ:
Քայց ոչ, ես չնշին որդ մըն եմ, իսկ
գուն անսահման Աստուած: Ով Աս-
տուած սիրոյ, ով սրբիս Ճշմարիս
ալքը, երբ պիտի գայ ան ժամանակն՝
որ կարաղ ըլլամ տեսնել զիս բո-
լորովին քուկդ եւ զքեղ բոլորովին
իմս, չե թէ խօսքով՝ այլ արդեամբ:
Դուն կրնաս առ ընել, ինձի համար
թափած արեւանդ զօրու թեամբը:
Զօրացոր յիս առ յօյսը եւ առը,
որ յառաջ քան մեռնիլս՝ բոլորովին
քուկդ ըլլամ եւ ոչ թէ իմս: Գուն,
Տէր, ամենան աղօթիցը կը լսես.
Եւ ուրեմն այսօր տառ ապեալ անձի
մ' աղօթիցն ալ, որ զքեղ Ճշմարտա-

պես սիրել կ'ուզէ։ Ըստանդակ զօրութեամբս զքեզ սիրել կը բաղձամ եւ ամէն ձեռքէս եկածն ի գործ գնել՝ որ բաղձանիքդ կատարեմ։ Ամեն բանի մեջ կը հնազանդիմ քեզի՝ ինչպէս եւ երբ որ կ'ուզես, առանց անձին շահը մէջը խառնելու, առ անց միսիմ արութիւն գրանելու եւ առանց վարձքի։ Կ'ուզեմ քեզի ծառայել՝ միայն ի սիրոյ, միայն քեզի հաճոյ ըլլալու՝ զքեզ գոհ ընելու համար, որ այնպէս վառեալ ես սիրով։ Ով քաղցր Արդի Մարիամու, սիրելի Որդի յաւիտենական չօր, առ ազատութիւնս։ Վերցուր կեանիքս։ առ իզմէ ինչ որ եմ եւ ինչ որ ունիմ։ Եւ ասոր մոխարէն՝ առ զքեզ ինձի։ Այս սիրեմ զքեզ, զքեզ միայն կը մինսաեմ, քեզի միայն հաճոյ ըլլալու կը բաղձամ, զքեզ միայն

կ'ուզեմ, ով Աստուած սրբի իմայ.
ամէն:

Յիսուս, քուկո ըրէ զիս ըոլո-
րովին:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՅ Ա. ԿՈՅՉԻ

Ով սիրելի Մայր, քոլոր Եղե-
ղեցին՝ Մեր յայս կ'անուանէ զքեզ:
Այսպէս կ'ողջունեն զքեզ ամէն
Հաւատացեալք: Եւ որովհետեւ ա-
մենոն յոյսն ես, Եղիք իմ յօյսս
ալ: Գիտեմ՝ որ զուն ամենուն յու-
սոյն սպառձառն ես եւ թէ յուսահա-
տութեան մէջ եղողն ալ յօյսը վրադ
կը զնէ: Ուստի ես ալ կ'ըսեմ. ով
Կոյս Մարիամ, որովհետեւ զուն
յուսահատութեան մէջ ինկոյներն
ալ կ'աղասես, յօյսս վրադ պէտք է
որ զնեմ. ամէն:

Մարիամ, Մայր Աստուծոյ, աղաչէ
Յիսուսին ինձի համար:

Ը. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ

Հաղորդութեան խորհրդոյն այց-
ելու թեան եկող հոգիներուն՝ ան-
խորքերը կ'ըսէ Յիսոս, զոր երրեմն
Փեսանի իր սիրելի Հարսին կ'ըսէր.
Աշէ, քո-նո-, բ-ըշի-մ- է՛, դե-վե-նի է՛
ե- եի: Ո՞վ անձն, որ ինծի այցելու-
թեան կու զաս, քաջալերուէ, այր
ելիլը, թող խեղճ պիճակդ՝ որուն մէջ
ինկեր ես: Այս առանձնա զիս. Հաս ա-
նոր Համար կեցած եմ՝ որ զքեզ
շնորհոք եւ բարութիւններով Հա-
րստացընեմ: Աճապարէ, մասեցիլ,
մի մախնար մէծ վայելութենէս, ո-
րովհետեւ բոլորութին խոնարհած եւ
այս խորհրդեան տակ ծածկուած
եմ՝ անոր Համար՝ որ մախոդ մարա-
ւեմ, որտիդ տագնասոր ցրուեմ եւ
զքեզ առելի եւս ինծի մերձնելու
խրախուսեմ: Բարեկամ, այսու Հե-

աւեւ ալ թշնամի չես՝ ոյլ ընկերու,
որովհետեւ դուն զիս կը սիրես՝ ես
ալ զքեզ: Գեղեցիկդ իմ, շնորհքս
զքեզ գեղեցկացուց. եկուր, եկուր
մաթթուէ ինծի: Աւզածդ խնդրէ,
բայց լի հաւատքով եւ վստահու-
թեամի: — Ըստ աղեկ կ'ըսէ:
Ա. Թերեզիա. “Փառաց թագաւորն
անոր համար հացի կերպարանքի
տակ ծածկեց իր մատասրութիւնն,
որպէս զի զմեզ յորդորէ համար-
ձակութեամի իր աստուած ային սրբ-
ամի մերձենալու:” Մերձենանիր ու-
ժեմն Յիսուսիաւելի վստահութեամի,
ոգեխառնինք իրեն հետ եւ իրմէ
շնորհք խնդրենք:

Ի՞նչափ պէտք եմ ու բախտակալ,
ով Բան յաւիտենական, որ մարդ
եղար եւ ամենասուրբ Խորհրդեան
մէջ ինք զինքդ ինծի նուիրեցիր: Ո՞ր-
շափ կը սրաբառ որիմ ուրախ ըլլա-

լու՝ երբ ինք զինքս առջիղ կը տես-
նեմ, որ Առառած ժառաց եւ ա-
նեզը սէր ես եւ մեզի անչափ սէր
ու գոթ կը ցոցընես։ Ով Հոգիք,
որ զԱռառած կը սիրեք, ուր ալ
զանոիք, թէ երկինք՝ թէ երկրիս
վրայ, սիրեցէք զինք ինձի Համար
ալ։ Մարիամ, սիրելի Մայր, օգնե
ինձի որ զինք սիրեմ։ Իսկ դուն,
ամենասիրելի Փրկիչ, Եղիր իմ սիրոց
առարկան։ Իշխե կամաց վրայ եւ
բոլորովին քոկդ ըստ զիս։ Քեզի կը
նուիրեմ բովանդակ միոքս՝ որպէս
զի այսուհետեւ միշտ բարութիւնզ
մտածէ։ Քեզի կ'ընծայեմ մարմինս՝
որպէս զի ինձի օգնե զքեղ սիրելու։
Քեզի կը նուիրեմ սիրաս՝ որ բոլո-
րովին քոկդ ըլլայ։ Ալ բաղձայի,
սիրելի Յիսուս, որ ամեն մարդ ըստ
արժանուոյն Համենար մեզի ցոցու-
ցած ստափիկ սէրդ եւ ապրեր միայն

զքեզ սիրելու՝ քեզի հաճոյ ըլլալո
համար, ինչպէս որ կը բաղձառ և
արժանի ես: Գանե շնորհը առոք
ինծի, որ երբեք շմանամ արտաքոյ
կարգի սերդ: Աս օրւընե բոլոր կա-
րողութիւններս կ'ուղեմ գործածել
միայն քեզի հաճոյ ըլլալո համար:
Կ'առաջազրեմ ան ամեն բաներեն
ետ կենալ, որ ամենամորքը եղանա-
կաւ մ'ալ քեզի անհաճոյ են. թե-
պէտ եւ ասոր համար ամեն ունե-
ցածս՝ նաև կենալոս հարկ ըլլայ
կորսնցընել: Ի՞ր զինորս երջանիկ կը
համարէի, եթէ ամեն բան կորսրն-
ցընեի, որպէս զի զքեզ զանեմ, ոչ
Աստված իմ, սեր իմ, բարտթիւն
իմ. ամեն:

Յիսուս իմ, սեր իմ, զբանե զիս
բոլորունին, սասցիր զիս, իշխան, աիրէ
վրաս:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ա. ԿՈՅԱԿԻ

Ու ժանովի էցէ, ելիւցէ առ էս: Մարիամ, որ ամէն մայրերէն աւելի զթած մայր է, մօր կարօտութիւն ունեցողներն իրեն կը կանչէ, որ իրեն սպաւինին իրբեւ ամենազ թած մօր: Հ. Կիւրեմբերգ կ'ըսէ. “Մարց՝ իրենց որդւոց ունեցած սէրն ու զութը, Մարիևմայ սիրոյն քով, շոք եւ ստուեր է միայն:” Մայր իմ, որ կը սիրես զիս եւ Աստոծմէ ետքը քան զամենեսին փրկութեանս կը ցանկան, ցուցուր որ մայրս ես. ամէն:

Սիրելի Մայր, օգնե ինձի որ միշտ վրազ մատծեմ:

Թ. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մուրբ Յավհաննես՝ Յայտնութեան մեջ կ'ըսէ. Տեղ (շու) Նշան Աբդոյ Հաբդոյ՝ Դեղլ Քորի միւզը

Ո՞վ յանիսենական Հօր ցանկալ,
Միածնիւր, կը տեսնեմ որ ամեն ա-
բարածներէն աւելի սիրուելու ար-
ժանի ես: Կը բաղձայի զքեղ այն-

շամի սիրել, որշամի հազի մը առ
աշխարհիս վրայ կրնայ զքեղ սի-
րել: Այ խոստովանիմ թէ ես՝ իր-
բեւ մասնիչ՝ արժանի շեմ զքեղ
սիրելու եւ ոչ ալ քեզի մօտենալու,
մնչպես որ հիմայ եկեղեցւոյս մէջ
առջեւդ կը կենամ: Բայց ան ալ
զիտեմ թէ իզմ սէր կ'ուզես՝ ըսե-
լով. Տու զի՞ւ, ոբուզով, զի՞ւր ու:
Վիտեմ որ կեանիրս անոր համար
պահեցիր եւ գժոխին անդնդոցը
մէջ շնեանցիր, որ բոլոր արտես
սիրեմ զքեղ: Ահաւասիկ Աստված
իմ, պատրաստ եմ հաճոյքդ կտաւ-
րելու: Ռոլորովին քեզի կը նուիրեմ
ինք զինքս: Այ սիրեմ զքեղ, Տէր
իմ, որ մի միայն բարովթիւն եւ բո-
լորովին սէր ես: Թագաւոր եւ Տէր
կ'ընտրեմ զքեղ ողորմելի սրախ:
Դուն զայս կը բաղձառ, ես ալ քեզի
տայր կը մատիարիմ, թէ եւ ցորս,

թենու խեղճ ու ողորմելի ըլլայ . բայց
եթե ընդունիս, կը նորոգես ալ:
Նորոգէ զիս Տէր, նորոգէ: Այլ չեմ
ովեր յառաջան պէս անշնորհա-
կալու եւ ցուրտ կեանք անցընել:
Ծնորհք տուր որ աս օրոքնէ սկսեալ:
անցած կենացս ամէն պակասութիւն-
ներուն աեզր լեցընեմ՝ եռանգուն
եւ զործունեայ սիրով . ամէն:

Աստուած իմ, զքեզ սիրելու կը
բազձամ . այս, միայն զքեզ սիրելու :

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ս. ԿՈՅԱՆ

Մարիամ բալօրովին իր Որդւոյն
կը նմանի: Եւ որովհեաւ ողորմա-
թեան Մայր է, այն առեն շատ
կ'որախանայ՝ երբ ամենուն երեսէն
ձգուածներուն օգնութեան կրնայ
հասնիլ եւ զիրենք միսիթարել: Մո-
րիամ աւելի կը բազձայ մեզաւ որաց

բարիք ընելու՝ իրենց շեորհք ապլու,
քան թէ անոնք՝ իրմէն ընդունելու:
Յօյս մեր, ողջ լեռ:

•

Ժ. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

“Ով անմիտ որդիք աշխարհիւ,
կը գոչե Ա. Աւզուտինոս, ոչ տա-
ռապեալք. ձեր սիրուը հանգչեցը-
նելու համար մոր կ'երթաք: Յի-
սուսին եղեք, ինչու որ ինք միայն
կընայ տալ ձեր բաղձացածը: Ով
անձն իմ, անմիտ մըլլար. զԱս-
տուած միայն ինոցըէ՝ մէկ հատիկ
բարութիւնն, որ ամէն բարութիւն-
ները կը բովանդակէ: Եւ եթէ զինք
շատով զանել կ'ուզես, ահա մատիկ
է. ըսէ իրեն բաղձացածգ, որովհե-
տեւ ինք անոր համար կեցած է աս-
նուիրական տապանակին մէջ, որ ա-
զաւանքներդ ըսէ:” Ամեն մարդուն

թոյլ արտած չե, կ'ըսէ Ա. Թերեզ-
իան՝ Թագաւորին հետ անձամբ խօ-
սիլ: Մեծ բան կը համարինք՝ եթէ
խնդրուածքնիս կարող ըլլանք եր-
րորդի մը ձեռքով անոր հասցընել:
Բայց ով Թագաւոր մասաց, քեզի
հետ խօսելու համար երրորդի մը
պէտք չունենիք. ինչու որ դուն պա-
տրաստ ես Ա. Խորհրդոյն մէջ ամե-
նան խնդրուածքը լսելու: Զքեզ
մինսոսոյն ամէն ժամանակ հան կը
գտնե, եւ որչափ կ'աղէ՝ կրնայ
քեզի հետ խօսակցիլ ու հարկաւոր
եղածը խնդրել: Թագաւորինը տա-
րւոյն մէջ հազիւ քանի մանգամ
մարդուն թող կու տան իրենց տո-
ջեւն ելլելու. ան ալ որչափ զժուա-
րութիւններով: Բայց քեզի, ով
Աստուած հզօր, Թագաւոր հրեշ-
տակաց եւ մարդկան, քեզի՝ ամէն
ժամանակ կրնանք այցելութիւն ը-

նել, որչափ եւ երբ որ բաղձանք:
Գիշեր ու ցորեկ պատրաստ եւ այց-
ելութիւն ընողներն ընդունելու:

Ո՞չ ցանկալի Յիսուս, գունչ կամ
Ա. Հազորդութեամբ ինք զինքդ մեզի
կը պարգևես, կամ մեր սեզաննե-
րուն վրայ կը սպասես, եւ սիրոյդ
քաղցր զօրութեամբը քեզի կը քա-
շես սրտելու, որոնք սիրոյդ կրակովը
վառուելով՝ եւ անսահման բարու-
թեանդ վրայ զարմանալով՝ աւելի
եւս եռանդեամբ կը բորբոքին՝ միշտ
հաճոյքդ ընելու եւ անդադար վրայ
մտածելու: Ազէ, քեզի քաշէ աս
խեղճ սիրտս այ՝ որ ճշմարտին
զքեզ սիրել եւ իր բոլոր կեանքը
ծառայութեանդ մէջ անցընել կ'ու-
զէ: Բարերար ձեռքդ կը զնեմ՝
յայսս, բաղձանքներս, հոգիս, մար-
մինս. մէկ խօսքով՝ ամեն անեցածս:
Ընդանէ, Տէր իմ, աս չնշին նուերն,

եւ քեզի հաճոյ եղածին պէս կար-
դադրէ վրաս:

Չեմ ուզեր այսուհետեւ, ոչ ուր-
իմ, չեմ ուզեր քու հրամանացդ,
քու կարդագրութեանցդ գէմ արք-
արքնչել, վասն զի դիանմ որ ամենն
ու սիրալիք սրտեդ կը բղևեն եւ իմ
աղեկութեանս համար են: Աստուա-
ծային կամացդ՝ հիմայ եւ միշտ կա-
տարեալ հպատակութիւն մատո-
ցանելու համար՝ ինձի բաւական է
դիանալ՝ որ զուն այսովէս կը համիս:
Ըրէ ինչ որ կ'ուզես եւ ինչովէս որ
կ'ուզես: Կամքս կը միացընեմ քու-
կինիդ հետ, որ բոլորովին սուրբ,
բարի, կատարեալ եւ ամենայն սի-
րոյ սրժանի է: Ո՛վ սուրբ կամք
Աստուծոյ իմայ, ինչովէս սիրելի ես:
Կը բաղձամ միշտ քեզի հետ սեր-
տիւ միանալ, քեզի հետ ապրիլ ու
քեզի հետ մեռնիլ: Կը ցանկայի որ

քու բազմանիքդ՝ իմ՝ բազմանքս, քու
կամքդ՝ իմ՝ կամքս, քու յօժարու-
թիւններդ՝ իմիններս ըլլային։ Առ-
առած իմ, Առառած իմ, օդնե-
ինծի, որ առ օքրին՝ միայն քեզի,
միայն քու ուղածդ ընելու համար
տորիսմ, եւ միայն քու կամքդ կա-
տարեմ։ Ընորհը տուր, որ ինչպէս
գուն ինծի համար մեռար եւ իմ
կերակուրս ըլլալու հաճեցար, եւ
այլ քեզի համար մեռնիսմ, քեզի
համար սպառիմ, ոչնչանամ։ Անի-
ծեալ ըլլայ ան ժամանակն՝ որ զքեզ
չսիրեցի, որ իմ սեպհական կամքս
կատարեցի։ Բոլոր սրաեւս կը սիրեմ
զքեզ, եւ բոլորութին քեզի կը նուի-
րեմ իմ անձս, ամեն։

Ովկ կամք Առառածոյ իմոյ, դուն
ես սրաիս միակ սերը։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ա. ԿԱՅԱՐ

ՄՆԵՇՆԵՐՆ Ե- Ք- Հ- Ե- Բ- Ե- Ա- Ա- Ա- Ա-
կ'ըսէ երկնից թագուհին, զե բաշխե-
ցէ ռեւելւոց էաց շնորհուն: Ուրեմն
սիրենք զՄարիամ, եթէ շնորհաք
հարստանալու կը բաղձանք: Աս-
տուծոյ ծառային մեկն զՄարիամ:
Ընորհաց գանձապես կ'անուանէ:
Երանելի է այն մարդն՝ որ ին վստա-
հութեամբ եւ կատարեալ սիրով:
առ գանձապետին կը դիմ: Մայր
իմ, յօյս իմ, գուն կրնաս զիս սորր
ընել. անորհամար բոլոր յօյս ո-
վստահութիւնս վրագ կը դնեմ: Ըն-
դունե ինձի շնորհաք, որ կեանիս սրբ-
րաւթեամբ անցընելով՝ արժանի ըլ-
լամ մասնակցելու այն երանութեան:
զոր գուն երկինքը կը վայելիս, ամեն:

Ամենասիրելի Մայր, ազաէ ինձի
համար:

ԺԱ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

Հայուշանակը, կ'ըսէ Ա. Թերեզիա, որ մեր սիրելի Հովուեն՝ Յիսուսին չհեռանանկը, որովհետեւ հովուին մաս եղող ոչխարներն աւելի կը հոգացնին և իրենց վրայ աւելի զգուշութիւն կ'ըլլուի, և երբեմն ոյն իսկ հովուին կերպեն մաս մը կ'ընդունին : Երբ որ հովիւր կը քնանայ, զառնն իրմէն չե հեռանար, մինչեւ որ կում հովիւն արթնեայ և կում ինքն իսկ զառնը զինք արթնեցրիւ . և ան ժամանակ հովուեն նորանոր զգուանկը կ'ընդունի :

Այ Ա. Հաղորդութեան մ.ջ ծածկուած Յիսուս, ահա բոլորովին քեզի մօնենալով՝ ուրիշ շնորհը չեմ իրնոցը եթէ ոչ՝ եռանդ և ծառայութեանց մ.ջ յարաւեւութիւն : Շնորհակալ եմ քեզի, այ սուրբ

Հաւատք, որ կը սորվեցընես եւ կ'ա-
պահովութես զիս, որ աս Ս. Խոր-
հորդը՝ աս երկնուոր հացը՝ սովո-
րական հաց չէ. Հապա Քրիստոս
Տէրն մեր՝ իր աստվածութեամբ ու
մարդկութեամբը: Ասու ան իմ հաւ-
տառութեամբ այսպէսկը հաւատամ:
Եւ թե ովեա մարմնաւոր աչօք չեմ
առեւներ, բայց հաւատոց լուսովն աս
Կշխարքին տակ գքեղ իրրեւ երկ-
նից եւ երկրի Տէրն եւ աշխարհին
միրկիչը կը ճանիւամ: Ով քաղզու
Քիսուս, ինչպէս որ յոյսս, փրկու-
թիւնս, զօրութիւնս եւ միակ մխի-
թարութիւնս ես, անանկ այ կը բազ-
ձամ որ սէրս, մոտածութեանցու ու
բազձանացս միակ նիւթն ըլլաս: Ին-
ձի աւելի ուրախութիւն կը պատ-
ճառէ քու անչափ երանութիւնո՞-
քան ան քարիքները, զոր աս աշխար-
հիս յրայ եւ նաև անդիմ աշխարհը

կրթամ վայելել : Ըստ մ' ինձի այնչափ
հաճոյ չէ, սիրելի Փրկիչ որչափ կա-
տարեալ երջանկոթիւնդ, և երա-
նութեանդ անսպառական ըլլալը :
Եշիմ, Տէր իմ, սրտիս վրայ, զոր
բոլորովին քեզի կը նուիրեմ : Կամքս,
միաբար, հոգւոյս ամեն կարողոթիւն-
ները սիրոյդ գերիներն ըլլան : Այ-
սուհետեւ իրենց ծառայութիւնն ին-
ձի անոր համար միայն մատուցանեն՝
որ զքեզ կատարելապէս կարենամ
Հանչնոյ եւ մառքդ աւելլցնել : —
Ասոնկ եր քու կեանքդ առ աշխար-
հիս վրայ, ով Մայր Յիսուսի իմոյ՝
ամենասուրբ կոյս : Սիրելի Որդիեց
շնորհք ընդունե, որ ասկից վերջը
քեզի նման կեանք անցընեմ, ինք
զինքս բոլորովին Աստոծոյ նուիրե-
լով, և կատարելապէս իրեն ըլլա-
լեն զատ՝ երանոթիւն չփնտուելով .
ամեն :

Յիսուս իմ, զիս բովանդակ քուեղ
ըրէ, զուն ալ բոլորովին իմա եղիք:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ա. ԿՈՅԱՆ

Երանեւ է այլ՝ ոք ունեցէ առ
դրանու իւ հանապաշ, և պահեցէ զուտաճ-
ժուից իւց: Երանելի է ան մարդը՝
որ Մարեմայ ողորմութեան դրան
առ ջեւ՝ հարուտաներու դրանց առ ջիւ
կեցող ու ողորմութիւն խնդրող մո-
րացկաններու պէս՝ շնորհք կը խնդրէ:
Բայց աւելի եւս երանելի է անիկայ՝
որ Մարեմայ վրայ աւստծ առ արի-
նութեանցը նմանելու կը ջանայ,
մանաւանդ ողջախոհութեաննե եւ
խոնարհութեանը: Ո՞վ ամենախո-
նարհ եւ ամենամաքուր կայ, ընդունե-
ինձի, ամենէն առ աջ այս երկու գլխաւ-
որ առ արինութեանցը չեւեւեյու-
շնորհքը, որպէս զիս արժանի ըլլամ՝
առ առ շնորհարախութեանցը: ամեն:

Յոյս իմ՝ Մարիամ, ինձի օգնութեան հասիր:

ԺԲ. Ա Յ Յ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն .

Աստուած սէր Ե, Ե- ո՞ք վոյ է սէրն՝
բնալիւ է յԱսուածու, Ե- Ասուածու է
ՆՀ բնալիւ: ԶՅիսուս սիրող Հոգին ի
Յիսուս միայն կը բնակի Եւ Յիսուս
ի նման: Ոչ սէրեն զիս, կ'ըսէ Փրկիչը,
սէրենցի է Հօգէ իմու, Ե- ո՞ւ Ն- Եիւցու+
Ե- օ՛ՌԵ-անս ու Նմա աբուցու+ : Երբ
Ա. Փիլիպոս Անքեան վերջին թռ-
շակը պիտ'որ տանուր, տմենասուրը
խորհրդեան իր սենեակը մանելը
տեսնելով՝ “Ահաւասիկ իմ սէրս,
իմ սէրս, զոչելու սկսաւ: Այսպէս
պէտք է որ զոչէ ամեն մարդ, երբ
Ա. Հազորդութեան առջեւ կը կենայ.
Աւասիկ իմ սէրս, աւասիկ իմ երկ-
նից եւ երկրի վրայ զանուող սիրոյս
մէկ հասիկ առարկան:

զուն, Տէր իմ, սուրբ Աւետարա-
նիդ մէջ ըսիր՝ թէ զքեզ սիրով
զուն ալ կը սիրես, իր քովը կը բնա-
կիս եւ երբեք իրմէ շես բաժնուիր։
Ահա աշխարհիս ամեն արարածներէն
աւելի կը սիրեմ զքեզ։ ասոր միո-
խարէն զուն ալ սիրէ զիս, ինչու որ
քու սէրդ աւելի կը համարիմ՝ քան
աշխարհիս ամեն բարիքները։ Եկուր,
եկուր, բնակութիւնդ սրտիս աղքատ
անակին մէջը դիր, եւ այնպէս հաս-
տառէ՝ որ մէյ մ'ալ գուրս շելիս,
կամ լաւ եւս՝ զքեզ սրտէս շնուա-
ցընեմ։ Ասոն զի դիտեմ որ զուն
շես հեռանար՝ եթէ ես շմերժեմ։
Բայց ինչպէս որ ատեն մը վոնացի,
հիմակ ալ կրնամ զքեզ վոնալ։
Այլ դու, Տէր, մի թողուր որ այս-
պիսի ապերավոտութիւն մը պատահի,
ինձի այստափ մէծ մարդասիրութիւն
օուցընելեզ՝ այստափ շնորհներով

զիս հարստացընելեղ ետեւ : Բայց
որովհետեւ կրնայ պատահիլ, անոր
համար հիմակո ընէ կ'ուզեմ մեռնիլ,
Տէր իմ, եթէ քեզի հաճոյ է, որպէս
զի մահուամբ անդիի աշխարհք քեզի
չեւ միանամ, եւ քեզի հեւ միա-
ցած՝ յաւիտեան ապրիմ : Այս, Յի-
սուս իմ, ան է իմ բաղձանքս, ան
է իմ խնդրուածքս եւ յոյսս : Քեզի
կը փաթթուիմ, որ աւելի եւս սրտիս
մէջ պահեմ զքեզ : Երանի՛ թէ միշտ
սիրեի զքեզ, որով գուն ալ սերդ
ինծի չզլանայիր : Կը յուսամ, Աս-
տուած իմ, յաւիտենականութեան
մէջ զիրար պիտ'որ սիրենիք . ամէն :

Յիսուս իմ, զքեզ միշտ սիրել
ու քեզմէ սիրուիլ կ'ուզեմ :

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱՄ Ա. ԿՈՅՉԻՆ

Ոյտ գուշակը ինեւ ու եղիշեւ : Ով
որ զիս մեծարելու չի հեղար, ով

որ իմ ծառայութեանս մէջ հաւա-
տարիմ կը մնայ, կ'ըսէ Մարիամ,
այնպիսոցն յաւիտենական փրկու-
թիւնն ապահովուած է: Եւ որոնք
կը ջանան որ ուրիշներն ալ զիս ճանչ-
նան ու սիրեն՝ անոնք մշտնջենաւոր
ուրախութեան նախասահմանեալ
են: Ով սիրելի Մայր, կը խոստանամ
որ գեղպէ մը պատահելուն պէս՝ ձեռ-
քէս եկածին չափ պատուոյդ եւ ջեր-
մեռ անդութեանդ վրայ խօսիմ. ամէն:

Սուրբ Կոյս Մարիամ, արժանի-
լուէ զիս պատիւդ հռչակելու:

ԺԳ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

Եղիցին աչ իւ եւ ոքու իւ անդ զա-
մեայն առար: Ահաւասիկ Ծիսուս
աս խոստումը Հաղորդութեան խոր-
հըրդոյն միջոցաւը կատարեց, որուն
մէջ զիշեր ցորեկ ներկայ է: Բաւա-

կան չեր, Տեր իմ, որ ցորեկը միայն
Ա. Խորհրդոյն մէջ կենայիլ՝ երբ
երկրագութ քեզի այցելութեան
կաւ զան։ Ի՞նչ հարկ կար նոյն իսկ
զիշերն հռն կենալու, երբ մարդիկ ե-
կեղեցիները կը զոցեն, զքեզ միւսակ
կը թողուն եւ աներնին կ'երթան։
Բայց ես սպատճառը կը հասկընամ։
Արտաքոյ կարդի սերդ՝ զքեզ այն-
պէս աշխարհիս հետ կապեց, որ
նաև զիշերը մեզմէ շես կրնար հե-
ռանալ։ Ո՞՛Տ քաղցրագութ Փրկիւ,
անշափ սերդ բաւական էր՝ որ ամեն
մարդ բռնադատուեր միշտ Ա. Հա-
զորդութեան առջեւը կենալու, անկէ-
ամենեւին չըաժնուելու, մինչեւ որ
բռնութեամբ չսախառւէին անկէ-
հեռանալ։ Եւ ան ժամանակն ալ
պէտք էր որ ամեն մարդ իր մաս-
ծավածիւնն, իր բաղձանքն, իր սիրութ
խորաններուն վրայ թօղուր՝ եւ մար-

դացեալ Աստուծոյդ նուիրէք, որ
տապանակին մէջ միայն անոք համար
փակուած կեցած է, որ հոգիներուն
այցելութիւնն ընդունի, իրենց ազ-
քատութեանն օգնեւ եւ զիրենք միմ-
թարեւ:

Ըիսուս իմ, զքեզ ճշմարտապես
սիրել կ'ողեմ, քեզի կը նուիրեմ
բոլոր կամքս ու յօժարութիւններս:
Ո՞չ Աստուծու իմ, գուն առ տապա-
նակին մէջ փակուած ես՝ չէ թէ մի-
այն անոք համար, որ մեզի մօտ
գտնուիս, այլ նաև անոք համար՝
որ ինք զինքդ հաւատացելոցդ տաս:
Բայց ով կրնայ քեզի մօտենալ, քո-
անարտու մարմինդ ճաշակել: Բայց
մէկալ կողմանէ ով ալ կրնայ քեզմէ
հեռանալ, որ անոք համար նուիրա-
կան հացին տակ ծածկուած ես, որ
մեզի մերձենաս եւ զմեզ քեզի հեռ
միացընես: Դռն շատ կը բաղձաս որ

մեր սիրան ընդունինք զքեզ եւ
արտաքոյ կարգի կ'ուրախանաս՝ երբ
ինք զինքդ մեղի հետ միաւորած տես-
նես: Ուրեմն եկուր, Յիսուս իմ, ե-
կուր սիրոս: Կը բաղձամ զքեզ
ընդունիլ, վասն զի սրտիս Աստուածն
ես: Սիրելի Փրկիչ իմ, հաճութիւնս,
կամքս, ամեն ունեցածս քեզի կ'ըն-
ծայեմ: Ով իմ սիրոյս Աստուածը,
ջնջէ, վերցուր այն ամեն բան, որ քեզի
հաճոյ չէ: Աէր իմ, մի թողուր որ
ան հոգին՝ որ զքեզ Ս. Խորհրդոյն
մէջ ընդունելուն համար՝ Աստուա-
ծութեանդ միառաւորութեամբը լե-
ցուած է, արարածոց հետ միանայ:
Կը սիրեմ զքեզ, Աստուած իմ, միշտ
կը սիրեմ զքեզ, եւ զքեզ միայն
սիրելու կը բաղձամ: ամեն:

Յիսուս, սիրոյդ բաղցը կապանօքը
քեզի քաշէ զիս:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ս. ԿԱՅԱՆ

Սուրբն Բեննարդոս կը յորդորէ
զմեղ թէ՝ “Հնորհք ինդրենք եւ
Մարիեմայ ձեռքով ինդրենք” : “Մա-
րիամ, կ'ըսէ Ա. պետրոս Պատմիանի ան .
Աստուծոյ շնորհաց գանձապետն է” .
Մարիամ կընայ եւ կ'ուզէ զմեղ
հարստացընել : Աւատի եւ կը հրա-
իրէ գոշելով . Ու ու էցէ անդամ, ե-
թեցէ ու է : Սիրելի Դշիոյ, զթած
աշուրներդ մեղաւորիս դարձուր, որ
ամենուն երեսէն ձգուելով, քեզի
դիմեր՝ եւ բոլոր յոյսն ու վատահո-
թիւնը վրադ հաստատեր է եւ ողոր-
մոթիւն կը ինդրէ . ամէն :

Պաշտպանութեանդ տակ կ'ա-
պահինինք, ով Ա. Աստուծածածիւն :

ԺԴ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

Ով սիրելի Յիսուս իմ, կը լսեմ
որ միակուած տապանակիդ մէջեւ
կ'ըսես. Այս է հանգիւո իմ յանձնելու-
յա-էպինից. Է ամ բն-իւղայց, զի հա-
նեցոյ ընդ ։ Աւրեմն եթէ զուն
բնակութիւնդ կամօք մեր խորաննեւ-
րուն վրայ Հաստատեցիք, եթէ ամե-
նասորը Խորհրդեան մէջ կենալը՝
Հանգիստդ կը Համարիս և մէզի
ունեցած սէրէդ՝ ուրախութիւնդ Հան
կը զանես, կը վայելէ որ մեր սրտերն
ալ քեզի Հետ միաւորին և բոլոր
մեր Հանգիստն և ուրախութիւնն ի
քեզ զանենք։ Երանելի էք ով աս-
տուածասէր Հոգիք, որ աշխարհիս
վրայ ձեր երանութիւնն ի Յիսուս՝
իրեն Հետ խօսակցելուն, իրեն յա-
ճախ այցելութիւն ընելուն մէջ կը
զանեք։ Երջանիկ կը Համարէի ինք
զինքս, եթէ ևս ալ ուրիշ բան

շմտածէի, եթէ հաճութիւնս ուրիշ
բանի մէջ չգանէի, եթէ ոչ՝ միշտ
առջեւդ ըլլալու՝ անդադար վրադ
խորհելուն մէջ, որ Ա. Հաղորդու-
թեան ձեռքով իմ լաւութեանս վրայ
կը մտածես:

Ո՞վ սիրոյ Աստուած, ինչու հա-
մար այսչափ տան անցոցի առանց
զքեզ սիրելու: Դժբախտ տարիներ,
անիծեալ ժամանակ: Բայց կ'օրհնեմ
ինձի ցուցոցած անսպառ երկայն-
մտութիւնդ՝ որ ազերախտութեանս
այնչափ տարի համբերեցիր, այնչափ
ժամանակ սպասեցիր: Ինչո՞ւ արդեօք,
Աստուած իմ: Որպէս զի մերժապէս
անչափ ողորմութենէդ եւ անհա-
մեմատ ուրեզ յաղթուելով, ինք
զինքս բոլորովին ծառայութեանդ
նորինեմ: — Տէր, իմ, ալ չեմ ու-
զեր քեզի զէմ զնել: Պէտք է որ
զոնէ կենացս մնացած կարճ ժամա-

Նակը քեզի ծառայելու և կամբդ
ընելու գործածեմ: Աը յուսամ, Յի-
սուս իմ, որ օգնութեամբու բոլորովին
քուկդ կը ըլլամ: Ըստ մեծ օգնու-
թիւններ ըրիր ինծի ան ժամանակն
իսկ՝ երբ քեզմէ կը փախչէի, սերդ
ոչինչ կը համարէի և զքեզ կը
վշտացընէի: Արչափ աւելի կրնամ
յուսալ հիմայ, որ զքեզ կը սիրեմ
և հաճոյքդ կատարելու կը բաղձամ:
Ո՞՛ Աստուած իմ, որ անսպառ սիրոյ
արժանի ես, շնորհք տուր որ զքեզ
սիրեմ: Աը սիրեմ զքեզ, Աստուած
սրտի իմայ, բոլոր սրտես՝ ամեն բանէ
վեր, իմ անձես, իմ կեանքէս աւելի
կը սիրեմ զքեզ: Աը ցաւիմ, ով ա-
նեզը բարութիւն, որ զքեզ վշտա-
ցոցի և դառնացոցի: Թողութիւն
տուր, բայց միանգամայն շնորհէ՝ որ
նախ առ աշխարհիս մէջ մինչեւ
ցմահ, և եսքն ի հանգերձեալն

յաւիտեանս սիրեմ՝ զքեղ։ Յոցուր
աշխարհի զօրութիւնդ։ Ըբէ առ
հրաշքն ալ, ով ամենակարող Աս-
տուած, որ ինձի պէս ապաշնորհ մը,
որ անչափ սիրոյդ փոխարէն՝ քեղի
մէծ ապերախտոթեամբ հատոցում
ըրած է, փոխուի եւ զքեղ սիրող-
ներէն մէկն ըլլայ։ Յիսուս իմ, լու-
ազաշանցա։ Աս է բաղձանքս, սյս ե-
ղանակաւ բոլոր կենացս մէջ գոր-
ծելու առաջադրութիւնն կը զնեմ։
Դուն որ ինձի առ յօժարութիւնը կու-
տաս, զօրութիւն ալ տուր, ամեն։

Ծնորհակալ իմ, Յիսուս իմ, որ
մինչեւ հիմայ ինձի համբերեցիր։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԸՆ Ա. ԿՈՅԱՆ

Ով Մարիամ, ոչ որ կրնայ
փրկուիլ առանց օգնութեանդ։ Մեղ-
քէն մէկն ազատ չի կրնար ըլլալ՝ ա-
ռանց մասնաւոր ձեռնոտութեանդ։

Նոյնագես առանց քեղի՝ մեկը պարզեւ
մը չի կրնար ընդունիլ։ Աւրեմն, Տի-
կին իմ, եթէ ինձի օգնութեան չհաս-
նիս՝ կորսուած եմ։ չեմ կրնար զայ-
զքեզ երկինքն օրհնել։ Աակայն, ով
թագուհի, շատ սուրբերէն կը լսեմ,
թէ քեղի ապահնողներն երբեք
ձեռքէ թող չես տար, օգնութիւնդ
չես զլանար։ Միայն անիկայ կը կոր-
սուի՞ որ քեղի չի դիմեր։ Ենոք հա-
մար քեղի կը դիմեմ, քեղի կ'ապահ-
նիմ, բոլոր յօյս վրադ կը զնեմ։
ամէն։

Ով Մարիամ, զան ես բոլոր
վստահութիւնս եւ յուսոյս պատ-
ճառը։

ԺԵ. Ա Յ Ց Ց Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հուշ եկ որիանեւ յերիբ։ Եւ զի՞ն
ի՞մի՞մ նե արդեն իսի բոշբուեր։ Հ. Փր.
Աղիմայիս կըսէ թէ ւ մենեւ ին բան

մը շկայ աշխարհիս վրայ՝ որ առա-
տուածային հուրն այնպէս ուստաիկ
մարդուս սրաբին մէջ վառէ, ինչպէս
մեր խորաններուն վրայ կեցած շա-
զորդութեան խորհուրդը։ Ասոր
համար որ մը Փրկիչը Ս. Կատարինե
Սիէնացւոյն երեցաւ՝ Ս. Հաղոր-
դութեան մէջ իբրեւ բորբոքեալ
հնոց, որմէ աստուածային սիրոյ բո-
ցելին առատութեամբ կը ցոլանային
եւ բոլոր աշխարհիս վրայ կը տա-
րածուեմ։ Աւստի սրբուհին կը զար-
մանար թէ ինչպէս կրնան մարդիկ
ասպիրիլ առանց Աստուծոյ սիրոյն
հրափը բորբոքելու, գիտնալով թէ
Աստուծո զիրենք այնչափ կը սիրէ։
Օգնէ ինձի, Տէր, որ սիրոյդ հրափը
վառիմ։ Ծերպիք տուր որ ուրիշ բան
չմտածեմ, ուրիշ բան չինառեմ։
բայց եթէ զքեզ միայն։ Երջանիկ
կը համարէի ինք զինքս, եթէ այս

առառածածային սուրբ Հուրլը բոլորո-
վին գրաւեր զիս, եւ երկրաւոր ցան-
կո թիւններն ոչնչանային սրախ մէջ :

Ով Յիսուս իմ, կը տեսնեմ որ
ինձի ունեցած սիրոյդ սաստկութե-
նէն՝ ինք զինքդ բոլորանուեր ողջա-
կեզ ըրիր եւ մեր խորանաց վրայ
գրեթե սպառեցար։ Ուրեմն կը վայե-
լէ՝ որ ևս ալ ինք զինքս բոլորովին
քեզի նուիրեմ։ Այս, Աստուծած իմ,
քեզի կը նուիրեմ Հոգիս, անձս,
բոլոր կամքս, ամէն ունեցածս եւ
կեանքս։ Կը միացընեմ, ով յաւիտե-
նական Հայր, առ շնչին նուերս՝ այն
անսահման պատարագին Հետ, զոր
Յիսուս խաչափայտին վրայ քեզի
նուիրեց եւ ամէն օր ալ կը նուիրե։
Ծնդունէ, Հայր, պատարագս՝ սիրելի
Որդոյդ արժանեացը Համար, եւ
ինձի շնորհը առոք՝ որ նոյն զոհը
միշտ կարենամ մատոցանել, եւ

վերջապես ինք զինքս քեզի նուիրելով՝ մեռնիլ։ Կը բաղձայի մասնակցիլ ան շնորհաց, որ այնչափ մարտիրուներուն տրուեցաւ, այս ինքն՝ քեզի համար նահատակուիլ։ Ասկայն եթե այսպիսի մեծ շնորհքի արժանի չեմ, գոնե շնորհէ որ ամեն բաղձանքներս, բոլոր կեանքս՝ աստուածոյն կարդագրութեանդ տակ ձգեմ, եւ ամենայն յօժարութեամբ ան մահն ընդունիմ։ զոր դուն ինծի կը խրկես։ Կ'ուզեմ մեռնիլ, Տէր, որպէս զի ասով զքեզ փառաւորեմ, քեզի հաճոյ ըլլամ։ գոհ որտով քեզի կ'ընծայեմ կեանքս ու մահս. ամեն։

Յիսուս իմ, կ'ուզեմ մեռնիլ միայն քեզի հաճոյ ըլլալու համար։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ա. ԿՈՅՈՒՆ

Թոյլ տուր ինծի, ով քաղցր Դշեց, որ զքեզ ծառաներուդ հետ

“ Մերը ովանդակ յուսոյն պատճառն անուանեմ ու ըսեմ” թէ “ Բոլոր յոյս վրադ գրած եմ: Դուն մեղացս թողոթիւն ընդունել, մինչեւ ցմահի բարին յարտառել եւ քաւարանեն շուտ ազատիլ տուր: Անոնք որ կը փրկուին, իրենց երանութիւնը բարեխօսութեամբ կ'ընդունին: Ուրեմն ով Մարիամ, քեզի կ'իյնայ զիս փրկել, վասն զի որուն փրկութիւնն որ կ'ուղեա՞ պէտք է որ փրկուի անիկայ: Ուրեմն ուզէ միայն զիս փրկել, եւ անշուշտ կը փրկուիմ: Դուն զանոնք կը փրկես, որոնք քեզի կ'ապահինին: ահա ես ալ քեզի կը դիմեմ եւ կ'ըսեմ.

Զբեզ օգնութեան կանչովներուն փրկութիւնը, փրկե զիս, ամեն:

Գ Զ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Երանի թէ մարդիկ իրենց թշուա-
 ռութեանցն ու աղետից մէջ ամե-
 նասուրբ խորհրդոյն ընթանային՝ ի-
 րենց չարեացը գարմանը գանելու :
 Սառադիւ այն ժամանակ Հիմակուան
 պէս խեղճ չէին ըլլար: Կ'ողբար եր-
 բեմն երեսիա մարդարէն. ԱՌՆԵ,
 կ'ըսեր, բեւ ու քուշէ է զաւած-
 իւս բժիշկ ու իշշէ անդ: Գաղաադ
 լեռը բժշկական համեմերով ե-
 րեւելին, Քրիստոսի օրինակն է, կ'ըսե-
 մեծարոյն թեղա, որ ամեն չարեաց
 գարմանը՝ Ա. Հաղորդութեան խոր-
 հրդով հոգալու պատրաստէ: Կար-
 ծես թէ կը գոչէ Փրկիչը մեղի. Որ-
 դիք Աղամայ ինչո՞ւ կը տրտնջէք
 ձեր խեղճութեան վրայ: Այս խոր-
 հրդոյն մէջ ունիք ձեր ամեն չարեաց
 դէմ թէ բժիշկն ու թէ դեղը:

Եթիւ առ իս ամենեւեան, եւ եւ հան-
գուցեց շնչու: Աւրեմն Պազարու քերց
հետ կ'ըսեմ. Տէր, ահաւասիկ զոր
գուն կը սիրեիր՝ հիւանդացեր է:
Ես եմ այն ողորմելին՝ զոր գուն կը
սիրես, բայց մեղքերով շարաչար
վիրաւորուած՝ քեզի կը գիտեմ, որ-
պէս զի բժշկես: Բժշկե, բժշկե զիս,
որովհետեւ քեզի դէմ մեղանչեցի:

Ոիրայդ քաղցր կապանքովը բռ-
լորովին քեզի քաշէ զիս: Աւելի
կ'ուզեմ քեզի հետ կապուած մնալ,
քան թէ բոլոր աշխարհիս տերն
ըլլալ: Աս աշխարհիս վրայ զքեզ
միայն սիրել կ'ուզեմ: Քեզի նուի-
րելու քիչ բան ունիմ. բայց՝ եթէ
կարենայի կը բաղձայի աշխարհիս բռ-
լոր թագաւորութիւնները ստանալ,
անոր համար միայն՝ որ քու սիրոցդ
համար ամենէն հրաժարեի: Աւստի
կը հրաժարիմ ամէն ունեցածէս:

Ար թողում մերձաւ պիներս, հանգիստս, հաճաւթիւններս, նաեւ հոգեւորական միսիթարութիւններս։ Քեզի կը նուիրեմ ազատութիւննս, կամքս եւ բոլոր սէրս։ Ար սիրեմ զքեզ, ով անեղք բարութիւն, անձև ալ աւելի կը սիրեմ։ Եւ կը յուսամ որ յաւիտեան սիրեմ։ ամէն։

Յիսուս իմ, ինք զինքս բոլորովին բեզի կը մատոցանեմ։ ընդունե զիս։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ա. ԿՈՅԱՆ

Մի թագուհի իմ, զո՞ն անձամբ ըսիր Ա. Բրիգիդայի։ Արչափ ալ մե կը մեղանչած ըլլայ, եթէ ինք զինք ողղելու զիտու օրութեամբ ինծի զիմե, պատրաստ եմ զինք ընդունելու։ Չեմ նայիր թէ որչափ մեղանչած է, այլ թէ ինչ կամքով, ինչպիսի պատրաստութեամբ կռ զայ։ Կը վէրքերն օծելու, պատելու, նաեւ բժշկելու

զանց չեմ առներ, որովհետեւ կը
կոչուիմ եւ արդեամբ ալ եմ՝ Մայր
ովորմաթեան։ Ուրեմն եթէ կրնաս
զիս բժշկել եւ կ'ուզես, աւասիկ
քեզի կ'ապաւինիմ, երկնաւոր բժիշկ
եւ Մայր իմ, բժշկէ Հոգւոյս բաղ-
մապատիկ վերըերը, որովհետեւ եթէ
խօսք մը միայն զբուցես Որդւոյդ,
անմիջապէս կը բժշկուիմ։ ամէն։
Սիրելի Մայր, գթա վրաս։

ԺԷ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

Զիրար սիրող անձինք ամէն բանե
աւ ելի իրենց սիրելեաց տեսութեամբը
կ'ուրախանան։ Ուրեմն եթէ ճշմար-
տութեամբ զՅիսուս կը սիրենք,
պէտք ենք բաղձալ միշտ իրեն քովո
զանուիլ։ Տերն մեր Ա. Հաղորդու-
թեան մէջ զմեզ կը տեսնէ, մեր
ինզրուածքները կը լսէ։ Վնչո՞ւ Հա-

մար չենք խօսիր իրեն հետ : Կեր-
կայութեամբը մեզի շնորհած ըն-
կերակցութեանը համար պետք ենք
ուրախանալ : Ուրախանանք ուրեմն
իր փառացն եւ մեզի ցուցուցած սի-
րոյն վրայ, որով Հաղորդութեան
խորհրդոյն ձեռքով անհամար հո-
գիներ իրեն կը քաշէ : Բաղձանիք որ
ամեն մարդիկ սիրեն զՅիսուս, սրտեր-
նին իրեն նուիրեն եւ կամ գոնե-
ողենիք որ մեր ամեն յօժարութիւն-
ները, մեր իզներն՝ իրեն բոլորս-
նուեր ողջակեղ ըլլան : Բաղձանիք որ
ինքն ըլլայ մեր սերը, մեր ամեն ցան-
կութիւնն ու հաճութիւնը : Հայրն
Սալեղ շատ կ'ուրախանար՝ երբ կը
լսէր որ Ա . Հաղորդութեան վրայ
կը խօսին : Եւ որչափ ալ Ա . Խոր-
հրդոյն այցելութիւն ըներ, քիչ
կ'երեւար՝ իր բարբոքեալ սերը յա-
գեցընելու : Տեղ մը կանչուած, սե-

Նեակը դարձած, հու կամ հօն գա-
ցած եկած ատենն առիթ գտնելով՝
սիրելի Փրկչին գոնե քանի մը վայր-
կեան այցելութիւն կ'ընէր: Այնպէս
որ միտ դրուեցաւ թէ օրւան մէջ
եւ ոչ ժամ մը կ'անցնէր՝ որ Ա. Խոր-
հըրդոյն այցելութիւն չընէր: Ա-
սով արժանի եղաւ Հաղորդութեան
Խորհրդոյն ճշմարտութիւնը հերե-
տիկուոց դէմ պաշտպանած ատեն՝
սպանուելու:

Երանենի թէ, Յիշուս իմ, ևս ալ
այսպիսի գեղեցիկ մահուամբ մեռ-
նելու բախան ունենայի. այս ինքն՝
պաշտպանելով աս Ա. Խորհրդոյն
ճշմարտութիւնը, որով գուն, քաղցր
Փրկիչ իմ, սիրոյդ մեծութիւնը մեզի
ցոցոցիր: Ո՞չ սիրելի Աստուած,
գուն Ա. Խորհրդոյս ձեռքով մեծ
հրաշքներ կը գործես: Աս հրաշքն
ալ ըրէ՝ որ ես ինք զինքս բոլորովին

քեզի նուիրեմ: Դուն կը բաղձաս
որ քուկդ ըլլամ և իրաւամբ: Տուր
ուրեմն շնորհը՝ որ ամենայն զօրու-
թեամբ, զքեզ սիրեմ: Տուր աս աշ-
խարհիս բարութիւններն որուն կը
հաճիս, տուր քեզմէ խնդրողներուն:
Ես սիրոյդ միայն կը փափաքիմ, ան
միայն կ'ուզեմ, անկէ զատ ուրիշ
բան չեմ ուզեր: Այս սիրեմ զքեզ,
Յիսուս իմ, շնորհը տուր՝ որ աս բա-
նիս մէջ կարենամ յարատեւել: Աս
ինծի բաւական է, ամէն:

Յիսուս իմ, երբ գայ պիտ' որ ժա-
մանակ՝ որ ճշմարտապէս կարենամ
զքեզ սիրել:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՐ Ա. ԿԱՅԱՐ

Մ'կ Մայր սիրելի, ինչպէս քաղցր
է առ անունն անոնց՝ որ զքեզ կը
սիրեն: Ատուգիւ, Թագոհի իմ, ա-
մէն սիրոյ արժանի ես: զեղեցկու-

թիւնդ նոյն իսկ Աստուծոյ սիրելի
ըրաւ զքեզ : Անհնդ միայն՝ այնչափ
հաճոյական է, որ երբ արտաքերե-
լու կամ լսելու ըլլանք, սիրովդ կը
վառուինք : Ով քաղցր Մարիամ,
չկայ մեկն՝ որ անունդ կանչէ, եւ
զինք սիրովդ չբորբոքես : Կը վայրէ,
ուրեմն որ ևս ալ զքեզ սիրեմ : Բայց
չեմ շատանար զքեզ այնչափ միայն
սիրելով՝ որչափ ուրիշները կը սիրեն:
Ես զքեզ թէ հիմայ աս աշխարհիս
վրայ՝ եւ թէ յետոյ արքայութեան
մէջ, Աստուծմէ ետքը՝ ամեն մար-
դիկներէն աւելի սիրելու կը բաղ-
ձամ : Եթէ չափազանց է աս յօժա-
րութիւնս, ինծի ցուցուցած սէրդ է
տար պատճառը : Եթէ քիչ սիրուե-
լու արժանի ըլլայիր, զքեզ քիչ
կը սիրէի : Ընդունէ յօժարութիւնս,
եւ ասոր նշան՝ զքեզ սաստիկ սիրելու
շնորհքն ընդունէ Աստուծմէ, վասն

զի որչափ մեկն զքեզ աւելի սիրէ,
այնչափ աւելի զԱստուած կը սիրէ.
ամէն :

Ով սիրելի Մայր, զքեզ սիրել
կը բաղձամ :

ԺԵ. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Յիսուս օր մը Յավափատու ձորը
փառաց աթոռին վրայ պիտ' օր նստի :
Բայց հիմայ Հաղորդոթեան խոր-
հըրդոյն մեջ՝ իբրև սիրոյ գահին
վրայ կը կենայ : Եթէ թաղաւոր
մ'իր սէրը խաշնարածի մը ցուցընելու
համար՝ զար անոր մօտ բնակեր, ինչ-
պիսի մեծ ապերախտոթիւն կ'ընէր
գեղացին՝ եթէ շատ անգամ անոր
այցելութեան շերթար, մանաւանդ
երբ գիտնար օր թաղաւորն իրեն
համար ան գեղին եկած է : Ով սիրելի
Յիսուսիմ, զո՞ն ինծի համար Ուոր-

Հըրդեան մեջ կը կենաս։ Եթէ կա-
րելի ըլւար՝ ես ալ գիշեր ցորեկ կ'ու-
զեի առջեղ կենալ։ Տէր իմ, երկնից
հրեշտակները՝ սորբ տապանակդ
շրջապատած՝ մեզի ցոցոցած անչափ
սիրոյդ վրայ կը զարմանան։ որչափ
աւելի պատշաճ է՝ որ զքեզ՝ մեր
սիրոյն համար խորսներուն վրայ
տեսնելով՝ գոնե մեր մօտաւորու-
թեամբն զքեզ զոհ ընելու ջանակը,
եւ մեզի ցոցոցած սիրոյդ շնորհա-
կալ ըլլանք։

Այս սիրեմ զքեզ, ով Հազօրդու-
թեան խորհրդոյն մեջ ծածկուած
Աստուած, հաց հրեշտակաց, աս-
տուածային կերակուր։ Այս, կը սի-
րեմ զքեզ, սակայն ոչ ես եւ ոչ
զուն զոհ ենք աս սիրով, որովհետեւ
շատ նուազ է։ Շնորհք տուր, որ լաւ-
ճանչնամ թէ ինչպիսի անսպառ
զթութիւն է սիրածա։ Զօրութիւն

տուր որ ամեն երկրաւոր յօժարու-
թիւններէ ազատելով միայն քու սի-
րոյդ փափառքիմ։ Դուն երկինքէն ամեն
որ մեր խորաններուն վրայ կ'իջնաս,
որովէս զի զքեզ սիրենք և քեզի
հետ բոլորովին միանանք։ Ուրեմն կը
վայելէ, որ ես այ աս վայրկենէս ա-
մենեւին ուրիշ բան չմուածեմ, բայց
եթէ զքեզ սիրել, քեզի հաճոյ ըլ-
լալ։ Բոլոր զօրութեամբս, բոլոր
սրտէս կը սիրեմ զքեզ, Յիսուս իմ։
Եւ եթէ այս սիրոյս փոխարէն մը
կ'ուզեստալ բազմապատկէ այսսերը,
որ միշտ աւելի սիրեմ եւ քեզի աւ-
ելի հաճոյ ըլլալու ջանամ։ ամեն։

Յիսուս իմ, շնորհք տուր որ կա-
րող ըլլամ զքեզ կատարելապէս
սիրել։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՅՀ Ա. ԿՈՅԱՆ

Խնչպէս որ երեսէ ձգուած հիւ-
անդները՝ միայն հասարակաց հիւ-
անդանցին մէջ ապաստանարան կը
գտնեն, անանկ ալ թշուառ մեղաւ-
որները, թէպէտ ամենէն մերժուին՝
անօգնական չեն մնար, վասն զի Մա-
րիամ իրենց հոգ կը տանի: Աստուած
զի: Կոյսն աշխարհիս շնորհեց, որպէս
զի ամենուն՝ բայց մանաւանդ մեղաւ-
որաց ապաւէնն ըլլայ: Ուրեմն, եթէ
քեզի ապաւինիմ, չես կրնար զիս մե-
ղաց համար մերժել: Մանաւանդ
թէ որշափ աւելի թշուառ եւ ողոր-
մելի եմ, այնչափ աւելի պաշտպա-
նութեանդ ապաւինելու իրաւունք
ունիմ: Վասն զի Աստուած զքեզ
ասոր համար ստեղծած է: Ուստի
քեզի կ'ապաւինիմ, Մայր ողորմու-
թեան, ինք զինքս պաշտպանութեանդ

կը յանձնեմ։ Պուն ապաստան ևս
մեզաւորաց, եղիք ուրեմն իմ՝ ապա-
ւես ալ եւ յաւիտենական փրկու-
թեանս յօյսը։ Եթէ դուն զիս մերժես,
ուր երթամ, ի՞նչ ընեմ։

Իմ պատսպարանս Մարիամ, փրկէ
զիս։

ԺԹ. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

Ամեն մարդ կ'ուրախանայ իր սի-
րելի բարեկամին բնակակից ըլլա-
լուն։ Ուրեմն մեզի ալ մեծ ինչու-
թիւն չի պատճառեր առ արտասուաց
հովտին մեջ՝ մեր երկնաւոր բարե-
կամին քովն ըլլալը, որ զմեզ ամեն
բարիքներով կը լեցընէ, եւ զմեզ
սաստիկ սիրելուն՝ մեր մէջը կը բնա-
կի։ Յայտնի է թէ Ս. Հաղորդու-
թեան միջոցաւն որչափ բաղձանք՝
կրնակը Յիսուսի հետ խօսակցիլ, մեր
սիրան անոր բանալ, հարկաւոր ե-

զածն անոր յայտնել եւ մեր փրր-
կութեան կարեւոր շնորհքներն իր-
մէ ինդրել : Այնանք երկնից թագա-
որին հետ ամենայն վատահութեամբ
և առանց ակնածութեան խօսիլ :
Ըստ երջանիկ եղած պիտօր ըլլայ
Յովակի գեղեցիկ, երբ Աստուած
զինք միսիթարելու համար բանան
իջաւ : Բայց որչափ աւելի է մեր ե-
րանութիւնն, որ աս վշտալից աշխար-
հիս վրայ մարդացեալ Աստուած
մ'ունինք, որ իր ներկայութեամբը
մեր վշտացը մեջ մեզի օգնութեան
կը հասնի : Ինչչափ մեծ ուրախու-
թիւն է իւղձբանաւարկելոյ մը՝ եթէ
սիրելի բարեկամն իրեն գայ զինք
միսիթարէ, քաջալերէ եւ ամեն
հնարք գործածէ անոր վշտերը թե-
թեւցընելու : Այսպէս է մեր ամե-
նասիրելի բարեկամը Յիսուս, որ Ա-
նորհրդայն մշջեն զմեզ կը քաջալերէ.

Ահասպի է ընդ յեւ էս, կ'ըսէ, շ-
մենայն ուստք: Տեսէք, ես երկինքէն
անոր համար իջայ ձեր բանտերն՝ որ
զձեզ մխիթարեմ, ձեզի օգնեմ, զձեզ
փրկեմ: Ընդունեցէք զիս, քովս միա-
ցէք, միացէք ինձի հետ՝ այն ատեն
ձեր խեղճութիւնը չէք զգար, եւ
յետոյ զձեզ արքայութիւն կը տա-
նիմ, ուր կատարեալ երանութիւնը
կը վայելէք:

Ով Աստուած, ով անըմբռնելի
սէր, որովհետեւ դուն մեզի աւելի
մօտ գտնուելու համար մեր խորան-
ներուն վրայ կ'իջնաս, ես ալ կ'առա-
ջադրեմ քեզի ստէպ այցելութիւն
ընելու եւ որչափ կարելի է՝ սիրալիք
մօտաւորութիւնդ վայելելու, որ
զսորուերն երանելի կ'ընէ: Երանի
թէ կարող ըլլայի միշտ առջեւդ կե-
նալ, քեզի երկրպագութիւն ընել
եւ զքեզ սիրել: Կ'աղաշեմ, Տէր,

քեզի քաշե զիս՝ երբ կամ ծուլու-
թեամբ եւ կամ աշխարհիս զործքե-
րուն զրադած՝ քեզի այցելութիւն
ընելու անփոյթ ըլլամ՝ Երկնային
ցանկութիւն մը պատե սրտիս մէջ՝
Ա. Խորհրդեան միջոցաւ հետդ ըլ-
լալու։ Երանի թէ միշտ զքեզ սիրած՝
քու հաճցըք կատարած ըլլայի։
Այսու ամենայինս մ.ն միսիթ արու-
թիւն է ինձի մոտենել որ դեռ ժա-
մանակ կայ՝ չէ թէ միայն երկինքն
ոյլ նաև աշխարհիս վրայ՝ աս բազ-
ձանքս ի զործ զնելու։ Անոր համար
հաստատութեամբ կ'առաջադրեմ՝
այսօրւընէ զքեզ ճշմարտութեամբ
սիրելու, ով անձս եւ ամեն բանս
բազանդակ զօրութեամբս զքեզ սի-
րել կը բազձամ։ ամէն։

Օգնէ ինձի, Աստուած իմ, որ
կարող ըլլամ զքեզ սիրել։

Մի յուսահատիր, ով մեղաւոր,
Հաւատագլ եւ վատահովեամբ Մա-
րեմայ դիմէ, ինք քեզի կ'օգնէ: Կր-
մին ամէն ժամանակ շնորհք եւ ողոր-
մոթիւն կը գտնեա: Գիտցիր որ աւ-
ելի կը բաղձայ ինք քեզի շնորհք տա-
լո՞ քան թէ զո՞ն իրմէ ինդրելու:
Երբեք չեմ գագրիր Աստուծոյ շնոր-
հակալ ըլլալէն, որ ճանցցուց ինձի
զՄարիամ: Ո՞չ ինչպէս խեղճ կ'ըլլայի,
եթէ զքեզ չճանչնայի, եթէ ծա-
ռայութիւնդ մոռնայի: Այ զովեմ,
կը սիրեմ զքեզ, սիրելի Մայր, յոյս
մրադ կը զնեմ, եւ ինք զինքս քեզի
կը նուիրեմ. ամէն:

Ով Մարիամ, երանի անոր՝ որ
զքեզ կը ճանչնայ եւ յոյսը մրադ
կը զնէ:

Ի. ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ

Յաւոր յայնին եղեց աշխարհ բա-
շեալ քանա դաս-նի. և բն-իւցն ե-
րաստութիւն ի նոր-նիւն Առաջ: Մարզա-
րէին զուշակած աղքիւրը Ա. Հաղոր-
դութեան խորհրդեան մէջ զանքւ-
ող Յիսուսն է, որուն՝ ուզած ատեն-
իս կրնանք երթալ ու մեզօք աղ-
տեղած հոգինիս լուալ եւ մաքրել:
Եթէ պակսեցանք, եթէ մեղանչեցինք,
սրբություն լուազոյն միջոցն է՝ զղթա-
ցեալ սրախ. Ա. Խորհրդեան դիմելու
Այս, Յիսուսիմ, այս, այդպէս կ'ա-
ռաջադրեմ ընելու: Գիտեմ որ աս
աղքիւրին ջրերը չե թէ միայն աղ-
տեղութենէն կը մաքրեն, այլ նաեւ
կը լուսուորեն, ոյժ կու տան մեղաց
մէջ շիյնալու, դժբախտութեանց ու-
րախութեամբ տանելու, եւ մեր սրբ-
ամին մէջ սէրդ աւելի եւս բորբոքե-
լու: Գիտեմ, Տէր, որ աս պատճառաւ.

Ս. Խորհրդոյն մէջ իմ այցելութեանս
կը սպասես, եւ այցելուներդ շնորհք-
ներով կը վարձատրես: Ո՞վ Յիսուս,
մաքրե զիս այսօր ըրած ամեն պակ-
սութիւններէս: Ըստ կը ցաւիմ որ
զքեզ վշտացուցի, քեզի անհաճոյ
եղայ: Զօրութիւն տուր որ ասկէ
ետեւ մէյ մ'ալ շիյնամ: Տուր միան-
գամայն զքեզ սիրելու շնորհք: Ո՞հ,
ինչպէս երջանիկ կ'ըլլայի՝ եթէ միշտ
քովդ կարենայի կենալ, ինչպէս հաւ-
ատարիմ ծառաներէդ շատերը կ'ը-
նէին: Կարմեղեան կարգէն Եղ. Փրան-
կիսկոս Յիսուսի՝ երբ եկեղեցւոյ
մ'առջեւէն կ'անցնէր, ուր Ս. Խոր-
հրդութը գանուէր, քանի մը վայր-
կեան իր սիրելի Պահլին այցելութիւն
չըրած՝ յառաջ չէր կրնար երթալ:
Եւ սովորութիւն ոները ըսելու՝ թէ
“Բարեկամի մը չի վայելեր՝ որ իր սի-
րելոյն տան առջեւէն անցած առեն”

ներս շմանել, բարեւ շտայ եւ հետք
քանի մը խոսք շխօսի՞՞ : Բայց ինք
քանի մը խոսքով չէր շատանար,
հասկա իք Տիրոջն առջեւ այնշափ
ժամանակ կ'անցընելը, որչափ որ
կընար :

Միակ եւ անշափ բարովթիւն իմ
Յիսուս, կը տեսնեմ որ զուն անոր
Համար աս Խորհուրդը Հաստատեցիք
եւ մեր խորաններուն վրայ կը կենաս,
որ զքեզ սիրենք : Անոր Համար
տուիր սիրու մը, որ զքեզ ճշմարտիւ
սիրենք : Բայց ուսկից կ'ըլլայ որ ևս
անշնորհակալուս՝ չեմ սիրեր զքեզ
եւ կամ այնշափ քիչ կը սիրեմ : Չէ,
չէ, չի վայելեր որ անսպաս սիրոյ ար-
ժանի Աստուածս քիչ սիրեմ : Ինձի
ցոցոցած ուրդ վոխագարձ սիրոյ
արժանի է : Դուն Աստուած ես, իսկ
ես՝ շնչեն որդ : Եթէ քեզի Համար
մեռնիմ, եթէ քեզի Համար սպառիմ,

ունին է համեմատով թեամբ մեզի
ցուցուցած սիրոյդ, որ խաչի մա-
հուամբ մեռաբ եւ ամեն որ շատ
անգամ մեր խորանաց վրայ՝ ինք
զինքդ ողբակեզ կը մատացանես։
Օգնէ ինձի որ զքեզ սիրում, եւ ա-
մենէն աւելի բաղձացածդ եւ քեզի
ամենէն աւելի հաճոյ եղածն ընեմ.
ամեն։

Սիրելին իմն է եւ ես իրենն եմ։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ա. ԿՈՅՉՈՒ

Մի զժած թագուհի իմ, զուն
չես նայիր ոզորմով թեանդ ապահ-
նողին արժ անեացը, հապա սուանց
բացառութեան զժութեանդ դիմող-
ներուն օգնելու պատրաստ ես։ Գի-
տեմ, Մայր սուրբ, որ եթէ քեզի
ապահնիմ մարդասիրութեամբ կը
լսես ու զիս կ'ընդունիս։ Ասէ ուրեմն
աղաչանաց։ Ստուգիւ մեծ մեղաւոր

եմ, բիւր գժոխոց արժանի, բայց
ինք զինքս ուղղելու կը բաղձամ:
Առողեմ զԱստուծս սիրել, զոր այն-
չափ անգամ զայրացուցի: Փրկէ եղ-
կելի հոգիս, որ քուկդ է եւ ոչ իմա-
լսեցիր աղաչանքս Մայր իմ: Ար յու-
սամ որ կը կատարես ալ, ամեն:
Քուկդ եմ, Մարիամ, փրկէ զիս:

ԵԱՀԱՅԱՏՈՒԹՅՈՒՆ

Ուր գելն իցե՝ անդը ժակովեցին
-ը ծոսէտ։ Աս խօսքավ՝ Ս. Հարք
ընդհանրապէս Ս. Հաղորդութիւնը
կ'իմանան։ Իսկ արծիւ ըսելով՝ ան
հոգիներն, որ աշխարհիս ամեն
բանն ոսքի տակ առ ած՝ արծիւներու
պէս երկրէս հեռանալով՝ երկինք կը
բարձրանան, ուր է իրենց բոլոր
սերն ու բաղձանիքը։ Ասոնց բնակա-
րանն՝ երկրիս վրայ տաղանակն է,

ուր Քրիստոս՝ կը գտնուի, եւ հոն
կենացէն երբեք չեն ձանձր սնար:
Եթէ արծիւք, կ'ըսէ Ա. Յերևիմոս,
դիականց հոսն առնելուն պէս՝ հոն
կը սրանան, որչափ աւելի հարկ է
որ մենք Ա. Խորհրդոյն մէջ գտնուող
Յիսոսին ընթանանք, որ մեր հո-
գւոյն սննդարար կերակուրն է։ Ասոր
համար է՝ որ սուրբերն այս արտա-
սուաց հովիտը՝ ծարաւի եղբերուաց
պէս առ երկնային աղբիւրին կ'ըն-
թանային։ Հ. Թաղասար Այուարէզ՝
ամենասուրբ Հաղորդութեան յա-
ճախ այցելութիւն ընելէն շեր գա-
զրեր, այնպէս որ երբեմն ամբողջ
գիշերներ անոր առջեւը կ'անցըներ։
Կու լոր, երբ մեծաւանց պարաւ-
ները փառասէր մարդիկներով լե-
ցուն կը տեսներ, որ պարզ մարդէ
մը չնշին բարիք կամ պատիւ մ'ըն-
դունելու յուսով, կը ջանան անոր

Հաճոյ ըլլալու : Իսկ ասոր հակառակ
գատարկ կը թողուն եկեղեցիներն՝
ուր երկնից և երկրի Տէրը կը
բնակի, որ անշամբ հարուստ է և
յափառենական զանձերով իի : Ե-
րանի կա տար վանականաց՝ որ ամեն
ժամանակ՝ Յիսուսի այցելու թեսն
կրթան ելլել, զոր աշխարհականիք չեն
կրթար ընել :

Տէր իմ, թեեւ տեսար որ ան-
շամբ սիրոյդ ապերախտ պիտի ըլլամ,
սակայն չդարշեցար անսպառ մար-
դասիրութեամբոդ զիս քեզի կանչե-
լու եւ Ա. Հաղորդութեամբ քեզի
մերձեցրնելու : Ա հաւասիկ կու գամ,
կը մերձենամ, զուն փոխե զիս:
Հանե սրտես ան սէրն՝ որ քեզի
հետ յարաբերութիւն չունի, ան
ցանկութիւններն որոնք քեզի հա-
ճոյ չեն, ան խորհուրդներն՝ որ քեզի
համար չեն: Յիսուս իմ, սէր իմ

քեզի միայն կ'ուզեմ հաճոյ ըլլալ
քեզի միայն ուրախութիւն պատ-
ճառել: Դուն միայն արժանի ես
ամէն սիրոյ, զքեզ միայն կ'ուզեմ
բոլոր սրտես սիրել: Ծնորհը տուր,
որ ամէն բանեն հրաժարելով, բոլոր
անձս քեզի ողջակեզ ընեմ, անձուկ
կազով քեզի հետ միանամ, բայց
այնպէս՝ որ այսուհետեւ երբեք
քեզմէ բաժնուիլ կարող չըլլամ,
ոչ առ աշխարհիս մէջ եւ ոչ ալ
անդիի աշխարհ. ամէն:

Ամենաքաղցր Յիսուս իմ, թող
մի տար որ երբեք քեզմէ բաժնուիմ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ. Ը. Ա. ԿՈՅԱՆ

Դիմումախոս կարդուսեան զամենա-
սուրբ Առյօն՝ իր մայրական սոստին
ապաւինող մեղաւորներուն փաս-
տաբանը կը կուել: Արդ որովհետեւ,
պաշտօնող է պաշտպանել ու ոզորմիլ

Նաև ամենամեծ մեղաւորներուն, ա-
չա ես ալ քեզի կու գամ, սիրելի
մաստաբաննեւ: Կատարէ պաշտօնդ,
պաշտպանէ զիս: Գիտեմ որ շատ
անգամ վշտացոցի զԱստուած, իր
բարութեանցին ապերախտ եղայ:
Բայց կը ցաւիմ մեծապէս, եւ ուրիշ
բան չեմ կրնար ընել՝ եթէ ոչ
սրտանց զղջալ: Դռն օգնէ ինձի:
Բաւական է որ Որդոյդ ըսես՝ թէ
պաշտպանս ես՝ անով մեղքերուս
թողութիւն կ'ընդունիմ եւ կը
փրկուիմ. ամէն:

Սիրելի Մայր, քեզի կ'իյնայ զիս
միրկութեան հասցընել:

Ի Բ. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ

Երդոց երդոյն Հարսն իր Փեսան
կը վինտուէր, եւ չգտնելով՝ կը հար-
ցընէր. Ունեւ ըստ մէրեց այն իւ ուեւէ:

Դեկու ան ժամանակ Յիսուս աշխարհը
եկած չէր: Բայց Հիմայ զՅիսուս
սիրող հոգին՝ ամեն ժամանակ շա-
զորդութեան խորհրդոյն մէջ զինք
կրնայ գտնել: Հ. Աւելա սովորու-
թիւն ուներ բաելու, թէ չկայ սրբա-
գոյն եւ ազնուագոյն տեղ քան ե-
կեղեցիներն՝ որ Քրիստոս ներկայ է
Ո. Խորհրդոյն մէջ:

Ո՞վ անսահման սիրոյ արժանի
Աստուած, ի՞նչպէս կրցար ան աս-
տիճանի խոնարհիլ, որ մարդիկնե-
րուն մէջ մնալու եւ իրենց սրտին
Հետ միանալու համար: Հացի կեր-
պարանաց տակ ծածկուեցար: Ո՞չ
մարմնացեալ Բան, անսպառ է խո-
նարհութիւնը, ինչու որ անսահման
է նաև սէրդ: Ի՞նչպէս կրնամ բոլոր
սրտէս չսիրել զքեզ, երբ կը տես-
նեմ թէ ինչեր ըրիր՝ ուրս քեզի
քաշելու համար: Բոլոր սրտէս կը

սիրեմ զքեզ, Յիսուս իմ, եւ աւելի
կ'ուզեմ հաճովթիւնդ, քան իմ
կամացս կատարոմը: Բոլոր բաղ-
ձանիքսը լլայ սցուշեաւ, Աստուած
իմ, հաճոյք կատարել: Առեւ
սրտիս մեջ եռանդ մը՝ անգագար
առջեւդ կենալու, քեզի հետ խօ-
սակցելու եւ զքեզ սիրաս ընդու-
նելու: Ասուզիւ մեծ ապերախտու-
թիւն էրնեկի, եթէ սիրալիր հրա-
երդ չընդունեկի: Քնքէ Տէր իմ,
սրտէս, արարածական իրաց սերն,
ինչու որ գուն միայն արժանի ես որ
բոլոր սերս ու բաղձանքներս քոկդ
ըլլան: Կը սիրեմ զքեզ, ամենա-
սիրելի Աստուած, եւ քեզմէ զատ
րանի չեմ բաղձար: Չեմ ուզեր
հաճովթիւններս կատարել, սուրբ
կամքդ ընելու կը բաղձամ, եւ ա-
սիկայ ինձի բաւական է: Ընդունէ,
Յիսուս իմ, մեզաւ որի մը բարի բաղ-

ձանքը, որ ճշմարտիւ զքեզ սիրելու
կը փափաքի: Ընօրհքովդ օգնու-
թեան հասիր ինծի, որպէս զի ևս
որ մինչեւ հիմայ դժոխոց եղկելի
զերին եղած էի, ասկից ետքը սի-
րոյդ երջանիկ ծառան ըլլամ: ամէն:

Կը սիրեմ զքեզ, Յիսուս իմ,
բարութիւն իմ. ամէն բանե աւելի
կը սիրեմ զքեզ:

ԱՅՑԵԼԱՒԹ-ԴԻՆ ԱՌ Ա. ԿՈՅՉԻ

Մի սիրելի Մայր, թէպէս Որ-
դիեզ ապստամբեցայ, բայց հիմայ
զզօնցեալ սրտիւ քեզի կը դիմեմ,
որպէս զի մեղացս թօղութիւն ըն-
դունիս: Մի բաեր որ չես կրնար,
վասն զի հաշտութեան միջնորդ ես
և պաշտօնդ է՝ օգնել անոնց՝ որոնց
փրկութիւնը վասնգի մէջ է: Հզօր
թագուհի, դուն օգնական ես վասն-
գելոց: Եւ ով ինծի շատի վասնգի

մէջ է: ԶԱՍՏՈՒԱԾ եւ իր շնորհքը
կորսնցուցի եւ գժօխոց արժանի
եղայ. չեմ գիտեր թէ թողու-
թիւն ընդունեցայ: Մանաւանդ թէ
կրնամ զինք նորէն կորսնցընել: Իսկ
դուն առ ամէն չարեաց գարմանը
կրնաս գտնել: Ամէն բարիք ընդու-
նելու յոյսս վրագ գրած եմ: Թողու-
թիւն, յարաւեւութիւն եւ ար-
քայութիւնը ձեռքդ են: Կը յուսամ
որ բարեխօսութեամբդ օր մը փրբ-
կութեան հանելով՝ անշանք ողօր-
մութիւններուդ շնորհակալ պիտի
ըլլամ. ամէն:

Ով Մարիամ, ամենազօր բարե-
խօսութեամբդ օգնէ ինձի:

Ի Գ. Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Շ Ի Ւ

Այնչափ քրիստոնեայք տեսակ
տեսակ նեղութիւն յանձն առնելով,
եւ իրենք զիրենք մեծ վասնացներու-

մէջ գնելով, սուրբ Երկրին այն տեղերուն այցելութեան կ'երթան, ուր մեր սիրելի Փրկիչը ծնաւ, չարշարուեցաւ և մեռաւ: Բայց մենք պէտք չունինք այսպիսի երկայն ճամբորդութիւններ ընելու և ինք զինքնիս մէծ վտանգներու մէջ գնելու, ինչու որ մեր Տէրը մեղմէ քիչ մը հեռու՝ մեր եկեղեցիներուն մէջ զրած է իր բնակութիւնը: « Պահպատճանները, կ'ըսէ Ա. Պաւղինոս, երանելի կը համարին իրեն զիրենք՝ եթէ սուրբ աեղերէն, Քրիստոսի ծնած այրէն, թաղուած գերեզմանէն քիչ մը հող բերեն. իսկ մենք պէտք չենք այցելութեան երթալ Հաղորդութեան խորհրդոյն, որուն մէջ Քրիստոս անձամբ կը գտնուի: Աս ընելու՝ ոչ աշխատութիւն պէտք է, եւ ոչ վտանգ կայ: » Կուսան մը՝ որ Ա. Խորհրդոյն սաստիկ սիրով բոր-

բոքած էր, նամակի մը մէջ աս
խօսքերը գրեց. «Տեսոյ որ Աստուծմէ
գտած ամեն բարովթիւններս Ս.
Հաղորդովթեան ձեռքովն ընդունած
եմ: Բոլոր անձս Յիսուսի նոիրեցի:
Անթիւ շնորհքներ կան՝ որոնց մար-
դիկ մասնակից չեն ըլլար, վասն զի
չեն երթար ամենասուրբ Հաղոր-
դովթեան: Իմացայ, տեսայ թէ
Փրկիչը շատ կը բաղձայ այս Խոր-
հըրդոյն մէջէն անհամար շնորհքներ
բաշխել: Ո՞չ սուրբ Խորհուրդ,
ով սրբազան հաց: Ո՞ւր կը ցուցընէ
Աստուծ՝ իր մեծազօր զօրովթիւնն
աս հացէն աւելի: Այս նշխարքին
տակ ան ամեն բան կը գտնենք՝ զոր
Աստուծ մեզի համար ըստծ է:
Երանելեաց վիճակին նախանձելու
պատճառ շունինք, ինչու որ նոյն
Աստուծը մենք այ երկրիս վռայ
ունինք, որ մեզի ունեցած սերը զար-

մանալի եղանակաւ կը ցուցընէ : Առ-
տոծոյ սիրովը վառուած հոգիներ,
չանացէք՝ որ ձեզի հետ ծանօթու-
թիւն ունեցողները յորդորէք Ս. Խոր-
հը բայցն ստեայ այցելութիւն ընելու-
և անոր մեծ ջերմուանդութիւնու-
նենալու : Այսոցէս կը խօսիմ, վասն
զի սուրբ Խորհրդոյն վրայ մասնելով
ինք իրմէս կ'ելլեմ : Եւ շեմ ալ
կրնար ամենասուրբ Հաղորդութեան
վրայ շխօսիլ, որ անշանի սիրոյ ար-
ժանի է : Աս սքանչելի Խորհրդոյն
մեջ ծածկուած Յիսուսին Համար
ինչ ընելիքս շեմ գիտեմ :

Ո՞՛չ սերովրէք, դոք Աստուծոյ
սիրովը բորբոքած՝ հոս, իմ եւ ձեր
Աստուծոյն բոլորտիքը կը կենաք:
Սակայն Երկնից Թագաւորը չէ թէ
ձեր՝ Հապա իմ սիրոյս Համար մեր
Խորաններուն վրայ գրած է իր քնա-
կութիւնը : Ազէ, ով սուրբ Հրեշ-

տակք, սիրոս ալ ձեր սիրովը բոր-
քոքեցէք ու լեցուցէք ձեր եռան-
գեամբը:

Յիսոս իմ, շնորհք տուր, որ
մարդկան ունեցած սիրոյդ մեծու-
թիւնը ճանչնամ. զայս տեսնե-
լով, սրտիս եռանգը բորբոքի՝ զքեզ
սիրելու, քեզի աւելի եւս հաճոյ
ըլլալու: Կը սիրեմ զքեզ, սիրելի
Փրկիչ իմ, եւ միայն քեզի հաճոյ
ըլլալու համար կ'ուզեմ զքեզ սի-
րել, ամեն:

Յիսոս իմ, կը հաւատամ քեզի,
յոյսս վրադ կը գնեմ. կը սիրեմ
զքեզ, եւ ինք զինքս բոլորովին
քեզի կը նուիրեմ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ա. ԿՈՅԱՆ

Ով զթած Մայր ու խնամակալ
որբոց: Այն ողորմելի որբերը՝ մենք,
մեղաւորքս ենք, որ Աստծոյ դէմ

մեղանէնլով՝ զինք կորսնցուցինք։
Սուրբ կոյս Մարիամ, քեզի կ'ա-
պաւինիմ։ ԶԱռառուած՝ իմ հայրս
կորսնցուցի, բայց գուն իմ Մայրս
ես։ Դուն պէտք է որ վրաս դժաս,
ինձի օգնեսա որ զինք զարձեալ
գանեմ։ Աս մեծ խեղճութեանս մէջ՝
զքեզ ինձի օգնութեան կը կան-
չեմ, զժա վրաս։ Առանց օգնու-
թեան եւ անմիսիթա՞ր պիտի թողու
զիս։ Ո՛չ չէ, չէ, չի կրնար ըլլալ։
Ո՞վ քեզի աղաչած է, եւ դոն
օգնած չես։ Ո՞վ պաշտպանութեանդ
դիմած ու կորսուած է։ Միայն ողոր-
մութեանդ չապաւնողը կրնայ դա-
տապարտուիլ։ Ուրեմն Մայր իմ,
եթէ միրկութիւնս կ'ուզես, շնորհը
առ որ միշտ քեզի դիմեմ, մորձու-
թեանց մէջ զքեզ օգնութեան
կանչեմ եւ քեզի ջերմեռանդ ըլլամ-
ամէն։

Սուրբ Աստուածածին, օգնել ինձի
որ միադ մեծ վատահութիւն ունե-
նամ։

Ի Դ. Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ

Արքունիւն գու է Աստուած Ճաշ-
իւն։ Աստուածային սիրոյ զործքե-
րէն ամեննեւին մէկուն այնչափ չի
յարմարիր Մարդարէին առ խօսքն,
որչափ ամենասուրբ Հաղորդութեան
խորհրդոցն, որուն մէջ Աստուած
բոլորովին ծածկուած է։ Բանն յաւի-
տենական մարմին առնելով՝ ծածկեց
միայն աստուածութիւնը, եւ իրրեւ
լոկ մարդ երեւցաւ։ Իսկ հիմայ
ս. Հաղորդութեան մէջ իր մարդ-
կութիւնն ալ ծածկելով՝ հացի կեր-
պարանաց տակ մասմ է, որպէս զի
իր սիրոյն առաւելութիւնն յայտնի
ցուցընէ։ “Ծածկեալ է աստուա-

ծութիւնը կ'ըսէ Ա. Ռեռնարդոս,
ծածկեալ է մարդկութիւնը. կը
տեսնուի միայն՝ իբ սիրոյն մեծու-
թիւնը։ Երբ մարդիկներուն ունե-
ցած մեծ սէրդ կը յիշեմ, Փրկիչ
իմ, ինչ ըսելիքս չեմ գիտեր։ Այն-
պէս սաստիկ էր առ սէրդ՝ որ նաև
մեծվայելլութիւնդ ծածկեցիր, մա-
ռացդ շքեղութիւնը մեկդի զրիր,
եւ կարծես թէ Ա. Խորհրդոյս մէջ
գտնուած ժամանակդ՝ ուրիշ բան
չես ըներ՝ բայց եթէ զմարդիկ սի-
րել եւ իրենց ունեցած սէրդ յայտ-
նել։ Բայց ո՞չ, անոնք այնչափ սի-
րոյդ ի՞նչ հատոցում կ'ընեն։

Ո՞վ Յիսուս, զո՞ն ան աստիճանի
կը բաղձաս մարդիկներէն սիրուիլ՝
որ իրենց օգուտը փառքէդ ալ մեծ
կը համարիս Տէր իմ, (Ներէ համար-
ձակութեանս,) չէիր գիտեր թէ առ
սիրոյ ցոյցդ որչափ անարդութիւն-

ներու եւ թշնամանքներու պատճառ
պիտի ըլլար: Կը տեսնեմ՝ զոր գուն
շատոնց տեսած էիր, թէ մարդիկ-
ներուն մեծ մասը՝ քեզի բաւական
պատիւ պիտի չընէ, պիտի չուզէ
ճանչնալ թէ ճշմարիտ Աստուած՝
ներկայ ես ամենասուրբ Հաղորդու-
թեան մէջ: Պիտեմ որ այն մարդիկը
սրբագ ործեալ նշխարքները գետինը
նետելով՝ ոտքի տակ առին: Կը
տեսնեմ որ նաև քեզի հաւատա-
ցովներէն շատերն՝ իրենց երկրպա-
գութեամբն այնչափ անօրէնութեանց
հատոցում ընելու տեղ՝ կամ իրենց
անվայել կեցուածքովն զքեզ աւելի
եւս կը վշտացրնեն եկեղեցեաց մէջ,
եւ կամ խօրաններու վրայ մինակ կը
թողուն զքեզ, երբեմն կանթեզզ
ալ հոգալու փոյթ չեն ըներ: Երանի
թէ արցունքներովն՝ նաև արեամբս
կարենայի մաքրել ան տեղերն ուր

սիրալիք սիրագ եւ անչափ սէրդ
անպատռուեցաւ: Բայց՝ եթէ աս կա-
րելի չէ, գոնե կը բաղձամ եւ հա-
տառութեամբ կ'առաջազրինմ այս
օրւընէ սկսեալ՝ մարդիկներէն կրած
այնչափ անպատռութեանցդ մախու-
րէն ընելու համար՝ քեզի ստեպ
սցցելութեան զալ եւ երկրոպագու-
թիւն ընել, ինչպէս որ այսօր կ'եր-
կրոպագանեմ: Ընդունէ, և այր յաւի-
տենական, աս տկար մեծարանքը՝ զոր
հիմոյ աշխարհիս ամենէն մեծ մե-
զաւորս՝ քեզի կը մատուցանեմ ի
հատուցումն այնչափ անիրաւու-
թեանց՝ որ սիրելի Արդւոյդ դէմ
զործուեցան եւ կը զործուին: Ըն-
դունէ, ան անսահման պատռոյն
հետ միացընելով՝ զոր Քրիստոսի խո-
չափայտնի վրայ քեզի մատոյց եւ
ամեն որ Հաղորդութեան խորհրդոյն
մէջ կը մատուցանէ: Տէր իմ, երա-

նելի կը համարէի ինք զինքս՝ եթէ
կարող ըլլայի զամէնքը Ա. Խոր-
հըրդոյն ջերմեա անգութեան բորբո-
քել. ամեն:

Ո՞վ ամենասիրելի Յիսուս, շարժէ
շնորհքովդ մարդկան սիրուն՝ որ
զքեզ ճանշան ու սիրեն:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ, ԱՌ Ա. ԿՈՅՄԱՆ

Մուծոցոր թագուհի, որչափ
քաջալերութիւն կը զգամ, երբ
յաւիտենական վիրկութեան հանե-
լու երկիւղին մէջ՝ ինք զինքս պաշտ-
պանութեանց կը յանձնեմ, մոտ-
ծելով որ գո՞ն, այնչափ հարուստ
եռ շնորհքներով՝ որ իրաւամբք
“Աղբիւր շնորհաց ու մխիթարու-
թեանց եւ լրումն ամենայն բարու-
թեանց, կը կոչուիս: Արագ ունե-
ցած վստահութիւնս անհամեմատ
կ'առաւելու, մոտծելով թէ որչափ

կ'աշխատիս ուրիշներուն բարիք ը-
նելու, այնպէս որ շատ կը վշտանաս՝
երբ մէկը քեզմէ շնորհք չի ինդրեր։
Անիրաւութիւն կ'ընէ քեզի, ով
սիրելի Մայր, զքեզ օգնութեան
չկանչողը։ Ո՞չ զթած թագուհի,
զիտեմ որ զուն հոգւցոս հարկաւորն
իզմէ աւելի կը ճանչնաս, եւ զիս
աւելի կը սիրես՝ քան թէ ևս ինք
զինքս։ Ընդունէ Աստուծմէ ան
շնորհքը, զոր հոգւցոս օգտակար կը
համարիս։ Առ միայն ինդրէ ինծի
համար եւ ասով կը շատանամ։
ամէն։

Աստուծ իմ, առը ան շնորհքը,
զոր սիրելի Մայրդ ինծի համար կը
ինդրէ։

Ի Ե. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ

Պաւղոս առաքեալ կը զովէ Քրիս-
տոսի հնազանգութիւնն, ըսելով թէ

Հնազանդ եղաւ յաւիտենական Հօր՝
մինչեւ ցմահ։ Բայց ասկէ անհամե-
մատ աւելին ըրաւ։ Հաղորդովեմ եան
խորհրդոյն մէջ։ Հու շէ թէ միայն
յաւիտենական Հօր, այլ նաեւ ամէն
մարդու հնազանդ կ'ըլլայ, ոչ միայն
մինչեւ ցմահ այլ մինչեւ ցեատա-
րած աշխարհիս։ Առ երկնից թա-
գաւորը մարդու մը խօսքին հնա-
զանդելով՝ երկինքէն աշխարհը կ'իջ-
նայ, Եւ Եւ ու ընդուեմ դառնամ։
Տապանակին մէջ հանդարս կը կե-
նայ, ինք իրմէն չի շարժիր։ Թող
կու տայ, որ ուր կ'ուզեն՝ գնեն.
թէ ամենուն առջեւ՝ ճանանչին մէջ,
թէ տապանակին մէջ փակուած։
Ուր որ զինք տանիլ կ'ուզեն՝ յօժա-
րութեամի՛ յանձն կ'առնու երթալ։
Թոյլ կու տայ որ բաշխեն որուն որ
կ'ուզեն, արդարներուն ու մզաւոր-
ներուն։ Աշխարհիս վրայ ապրած

Ժամանակը՝ կը հնազանդեք ամենա-
սուրբ Կոսմին եւ Ա. Յովսենիսյ,
կ'ըսէ Պատկաս: Բայց Երկինք համ-
բառնալէն եաքը՝ այնչափ արարածոց
կը հնազանդի, որչափ են քահա-
նայք:

Ո՞չ սիրալիք սիրու Յիսուսի իմոյ,
որ ամեն առաքինութեանց՝ բայց
մանաւանդ սիրոյ աղբիւրն ես, թոյլ
տուր որ սիրուս քեզի բանամ: Կը
բաղձայի քեզի այնչափ պատիւ եւ
միաոք տալ՝ որչափ դուն աս Խոր-
Նըրդոյն մեջ յաւիտենական Հօրդ
կու տաս: Գիտեմ որ զիս աս սե-
ղանցն վրայ միշտ նոյն սիրով կը
սիրես, որով սիրեցիր երբ դառն
իւաչափայտին վրայ մեզի համար
տառուածային կեանքդ սպառեցիր:
Ով աստուածային սիրու, լուսաւորէ
Դքեզ շնանչցողները: Չարչարանացդ
արժանեօքն ազատէ կամ գոնէ միսի-

թարեւ քաւարանի հոգիները, որ
իբրեւ ընտրեալ՝ արդէն քոկող են:
Երկնից երանեալներուն եւ երկրիս
արդար հոգիներուն հետ քեզի կեր-
կըրպագանեմ, զքեզ կը սիրեմ ու
քեզի շնորհակալութիւն կը մատու-
ցանեմ: Մաքրեւ, ով սուրբ սիրու
Յիսուսի, սիրու ամեն արարածական
յօժարութիւններէն, եւ լեցուրսուրը
սիրովդ: Ով քաղցր սիրու Յիսուսի,
գրաւեւ սիրոս, որպէս զի աս օրւընէ՝
բոլորովին քուկող ըլլայ եւ ճշմար-
տապէս կարող ըլլամ ըսել Առա-
քելցդ հետ. Ու Թինեցէ չու է սէրոյն
Քէտուսէ: Ով ամենասուրբ սիրու,
գրոշմէ սրտիս մէջ գտոն չարչա-
րանիքներդ ու վշտերդ, որոնց աս աշ-
խարհիս վրայ այնպէս սիրով համ-
բերեցիր իմ սիրոյս համար: Ընորհը
տուր որ զանոնք մտածելով՝ ես ալ
բաղձանք ունենամ աս կենաց ամեն

վշտացն եւ նեղութեանցը համբեր-
րութեամբ տանելու: Ով խոնարհ
սիրու Յիսուսի, խոնարհութենեղ ին-
ծի մաս մը տուր: Ոիրու հեղ, հեղու-
թենեղ ինծի բաժին հանե: ջնջէ
սրտէսան ամէն ցանկութիւններն՝ որ
քեզի անհաջոյ են: Ընորհէ, որ ինք
զինքս բոլորովին քեզի նուիրելով՝
որիշ բանի շրաղձամ, բայց եթէ
ան բանին զոր դուն կ'ուզես: Զօրու-
թիւն տուր, որ միայն քեզի հնա-
զանգելու, զքեզ սիրելու եւ քեզի
հաջոյ ըլլալու համար ապրիմ: Գի-
տեմ որ քեզի շատ պարտականու-
թիւն ունիմ, վասն զի ինծի շատ սէր
ցուցուցիր: Ընոր համար մէծ բան
չէ եթէ ես ալ սիրոյդ համար ինք
զինքս քեզի բոլորանուեր ողջակեզ
ընեմ: ամէն:

Ոիրու Յիսուսի իմայ, դուն եղիր
իմ սրտիս մի միայն տէրը:

ԱՅՑԵԼԱՌԹԻՆԻ ԱՅ Ս. ԿՈՅԱՆ

*Մարիամ ան երկնաւոր տա-
պանն է, կ'ըսէ Ա. Բեռնարդոս, որուն
մէջ եթէ յարմար ժամանակին մտնե-
լով՝ ամբանանք, յաւիտենական դա-
տապարսութեան նաւարեկութենեն
կը պրծինք: Տաղանն՝ որուն մէջ
նց համաշխարհական ջրհեղեղէն
ազատեցաւ, Մարեմայ օրինակն էր:
Սակայն Մարիամ անկէ աւելի մեծ
տապանն է, վասն զի՞ նոյն տապանին
մէջ քանի մը հոգի եւ քիչ անա-
սուն կրցան ազատիլ: Իսկ մեր ա-
զատիչը Մարիամ, ամեն իր պաշտ-
պանութեան աղաւինովները վերար-
կուին տակը կ'առնու, եւ ապա հովա-
պէս փրկութեան կը հասցընէ: Ըստ
իսղճ կ'ըլլայինք, եթէ զՄարիամ
չունենայինք: Ե վերայ այսր ամե-
նայնի որշափներ կան, Տիկին իմ, որ

յաւիտեան կը կորսուին։ Եւ ինչու,
վասն զի զթութեանց չեն ապաւի-
նիր։ Ո՞վ երբեք անոնցմէ որ յոյ-
սերնին վրադ պրած էին կորսուեցաւ։

Ամենասուրբ Կոյս Մարիամ, օգնե
մեզի՝ որ միշտ քեզի ապաւինինիք։

Ի Զ. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ծննդեւ եւ մարդկան լուսու + բնակչու
Ամենի, զ բարձրաց Սուրբն Խորոյէլի
է մշակուած։ Ո՞վ Աստուած, քանի
ուրախութեամբ, որչափ յուսով
պէտք էինք լեցուիլ՝ մտածելով որ
առ աշխարհիս վրայ, մեր եկեղե-
ցիներուն մէջ, մեր բնակութեանը
մօտ՝ Հաղորդութեան խորհրդոյն մէջ
կը բնակի Սուրբն սրբոց, ճշմարիոնն
Աստուած։ որ իր ներկայութեամբն
երկնից սուրբերն երանելի կ'ընէ։

Աս խորհուրդը՝ սիրոյ խորհուրդ չէ
միայն, այլ նոյն խոկ սէր է, նոյն Առ-
առածն է, որ իր արարածոցը ցու-
ցուցած անշափ սիրոյն համար՝ ամե-
նայն իրաւամբ սէր կը կոչուի. Ա-
պա սէր է: Սակայն կը լսեմ, Յի-
սոս իմ, որ կը գանգատիս թէ.
Օրոք էի, է- ու ժողովունէ+ զի+ Սացզ
է լսած զ, զանգատելու իրաւոնք
ունիս: Ես ալ ան ապերախտներէն
մէկն եմ, որ զքեզ թող տալով՝
քիչ անգամ քեզի այցելու թեան
կա: զան: պատժէ զիս, բայց յան-
ցանացս արժանի պատժով մի պատ-
ժեր: Առջեւէդ մի մերժեր զիս,
վասն զի ինք զինքս ուզողել կ'ուզեմ:
Աս օրւընէ սկսեալ՝ չէ թէ միայն
քեզի այցելու թիւն ընել, այլ նաև ւ-
ձեռքէս եկածին չափ միշտ քովդ
մնալ կը բաղձամ:

Ով բազմազութ Փրկիչ իմ,

շնորհք տուր որ աս խոստմանս
հաւատարիմ մեամ և օրինակաւո
ուրիշներն ալ յորդորեմ Ո. Հաղոր-
դոթեան խորհրդայն մէջ՝ քեզի
յաճախ այցելութիւն ընելու։ Կը
լոեմ որ յաւիտենական Հայրդ
կ'ըսէ. Դա է ուռի իւ ուսեւ՛ ընդ ու
հաճեցայ։ Արդ՝ եթէ Աստուած բոլոր
հաճութիւնն ի քեզ կը գտնէ, ևս
չնչին որդս՝ աս արտաստաց հովտին
մէջ իմ բերկրութիւնս չգտնեմ ի
քեզ։ Ով հոր սպասիչ, այրէ
սրտէս ամէն արարածական իրաց
ցանկութիւնը, վասն զի անձնք են՝
որ զիս քեզմէ կը հեռացընեն։ Եթէ
ուզես՝ կրնաս ընել. Տե՛, ե՞ն իւ-
ժո՞ իւռող է ոչ ոքել։ Դուն իմ
սիրոյս համար շատ բան ըսիր. աս
շնորհքն ալ ըսէ, հանէ սրտէս ամէն
սէր՝ որ քեզի համար չէ։ Աւ ասիկ,
Աստուած իմ, բոլոր անձս քեզի կը

Նուիրեմ, կենացս սակաւօրեայ ժամանակն ամենասուրբ խորհրդայն կը մասսացանեմ։ Յիսուս իմ, կ'ողեմ որ գուն՝ թէ առ կենացս մէջ իմ միակ միսիթարութիւնս՝ եւ թէ ժաշուանս ժամանակն՝ իրքեւ վերջին թռչակ՝ ինծի արքայութեան առաջնորդ ըլլաս։ Այսպէս կը յուսամ, այսպէս ալ ըլլայ. ամէն։

Յիսուս իմ, երբ գայ ովհափ ժամանակն որ տեսութեամբ զմայլիմ։

ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ, ԱՅ Ա. ԿՈՅՉԻ,

Մ'եր ամէն շարեաց դարմանն ու հիւանդութեանց բժշկութիւնը. քեզմավ կը գտնենք, ով սիրելի Մայր։ Քեզմէ է մեր ակարութենենէն կանգնելու զօրութիւնը։ Դռն ես այն գուռն որ մեզի բացուած է՝ մեզաց ծառայութենենեն ելլելու շամար։ Քեզմէ դիմելով կը գտնենք մեր սրտին

Հանգարտութիւնն, ինչու որ զուն
եւ մարդկան անկառկած խաղաղու-
թիւնը: Ի քեզ կը դանենք առ կե-
նաց տառապահացը մեջ՝ մեր միսի-
թարութիւնը: Ա երջապէս ի քեզ
կը դանենք Աստուծոյ ամեն շնորհը-
ներին եւ զնոյն ինքն Աստուծու:
Դուն ես շնորհաց աթոռը, զուն ես
սին կամուրջն՝ որուն վրայէն Աս-
տուծու անցու: Երջանիկ կամուրջ,
որուն վրայէն անցնելով՝ մեզի եկաւ
մեզմէ հեռացող Աստուծուն եւ իր
անսպաս շնորհքով մեր որտին մեջ
բնակեցաւ: ամեն:

Ո՞վ Մարիամ, զուն ես զօրու-
թիւնս, խաղաղութիւնս ու փրկու-
թիւնս:

Ի Ե. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Սուրբ Եկեղեցին ամենասուրբ
Հաղորդութեան տօնին այսպէս կ'եր-
գէ . Ո՞ւ իշե ազգ մէջ՝ որոյ իշե Ա-
պուած օքա ի նոս, որպէս Տէր Ա-
պուած մէջ յամենայն որով ի-բուզուա-
ռա նա: Հեթանոր լուլով թէ Աս-
տաւած՝ մեր սիրոյն համար ինչը ը-
բած է, զարմանալով ըսին. Ո՞հ,
որչափ բարերար է քրիստոնէից
Աստաւածը: Եւ իրաւացի է ըստ-
նին, ինչու որ թէեւ Հեթանոր
իրենց քմաց համաձայն աստաւածներ
Հնարեցին, սակայն այնչափ առա-
պելաց մէջ՝ մէկու մը համար չկրցան
ըսել՝ թէ մարդկան այնչափ ուր ու-
նեցած ըլլայ՝ ինչպէս մեր ճշմարիս
Աստաւածն, որ իր ուրը ցուցընելու-
եւ մարդիկները շնորհրով լեցընե-
լու համար՝ ասանկ մէծ հրաշք
գործեց, որ միշտ մէզի հետ է ըլլայ

և անդադար մեր խորսնայ վրայ
ծածկուած կը մնայ, իբրև թէ եւ
ոչ բռպէ մը մեզմէ կարենայ բաժ-
նուիլ: Յէլուսուի ոքոք ստուչւոց է-ը-ց:

Արդ՝ սիրելի Յիսուս իմ, զուն
ամենամեծ հրաշքն ուղեցիր գործել,
որպէս զի միշտ մեր քովո մնալու
բազձանքու լեցլնես: Ե՞նչ է ուրիշն
պատճառն՝ որ մարդիկ քեզմէ
մասինչն: Ե՞նչպէս կրնան այնչափ
ժամանակ քեզմէ հեռու ապրիլ:
Ենչու համար այնպէս քիչ անգամ
քեզի այցելութիւն կ'ընեն, եւ եթէ
քառորդ մասն զեւդ կենան՝ իրենց
հազար տարի կ'երեւայ: Ո՞հ, Յի-
սուս, որչափ մեծ է համբերութիւնդ.
զիտեմ, Տէր իմ, որ շատ մեծ է,
վասն զի մեզի ունեցած սերդ ալ
արտաքոյ կարգի մեծ է: Եւ ան է որ
կը ստիպէ զքեզ միշտ մեզի պէս
ապերախտներու մէջ մնալու:

Ո՞վ Աստուած, որովհետեւ ան-
շափի ես կատարելութեամբ, նաեւ
անշափի ես սիրովդ: Մի ժմողոք որ
ես ալ ան ապերախաներէն ըլլամ,
որոնց մեջ մինչեւ Հիմայ գտնուե-
ցայ: Տուր ինձի այնպիսի սէր՝ որ
արժանեացդ եւ իմ պարտուցա հա-
մեմատ ըլլայ: Կը խռատովանիմ, որ
ես ալ երբեմն առջեւզ կենալէն
ձանձրացայ, վասն զի զքեզ չէի
սիրեր եւ կամ քիչ կը սիրեի: Աա-
կայն եթէ շնորհքովդ այնշափիի հա-
նիմ՝ որ զքեզ ճշմարտապէս սիրեմ,
ալ անկէ ետքը զիշեր ցորեկ Սիրե-
լոցդ առջեւը կենալն ինձի ծանր չէ
զար: Յաւխտենական Հայր, քեզի
կը նուիրեմ միանձին Որդիդ, ընդունե-
զինքն իմ անձինս տեղ, եւ իր ար-
ժանեացը համար ինձի Ա. Հաղոր-
դութեան այնպիսի վառեալ սէր մը
պարզ եւէ, որ ամեն Ժամանակ՝ մոքով

ու ցանկութեամբ ան եկեղեցիներն
ըլլամ, ուր ամենասուրբ Խորհուրդը
կը գտնուի, անգաղաք իրեն վրայ
խորհիմ, ինքը ըլլայ բազմանքս, իրեն
այցելութիւն ընելու ժամանակին
սպասեմ եւ իր մօտաւորութեամբն
զմայլիմ. ամէն:

Աստուած իմ, Յիսուսի արքա-
նեացք Համար ինձի շնորհը տուր՝
որ Ա. Հազորդութեան սաստիկ սէր
ունենամ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՅ Ա. ԿԱՅԱՆ

Մարիամ Պատթին այն աշտարակն
է, որուն Համար Ա. Հոգին կ'ըսէ-
թէ ոլորշոց + + իբրև շշուրչուն
գունդի. հազոր վահանչի ախել էն զնունք,
առնոյն ներ + առաջազնոց: Այսինքն՝
աշտարակ մը, Հազար վահանով եւ
սպասազինութեան ամէն զէնքերութիւն
զարդարուած, որպէս զի իրեն ա-

պաւինողները պաշտպանեւ։ Ուրեմն
ամենասուրբ Կոյս, զուն աշխարհակ
ևս պատերազմի մէջ գտնուողներուն
համար։ Ով սիրելի Թագուհի, որ-
շափ յարձակում կը կրեմ թշնա-
միներէս, որոնք զիս ամեն կազմանեւ
պաշտպանծ Աստուծոյ շնորհքէն եւ
պաշտպանութինէզ մերկացընել կ'ո-
ղեն։ Բայց զու ես իմ զօրութիւնս։
Չես քաշուիր՝ պատերազմիու ա-
նոնց համար, որոնք վստահութիւն-
նին վրադ կը զնեն, ինչու որ անոնց
պաշտպանն ես։ Ուրեմն քովս կեցիր
և պաշտպանե զիս, բոլոր յօյսս
վրադ հաստատած եմ։ ամէն։

Մարիամ, Մարիամ, անոնց է
իմ զէնքս։

Ի Ե. Ա Յ Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Խնչ բան կրնայ մեզի պահաւ
Աստուծու, կ'ըսէ պաւ զու առաքեալ՝

իր միածին Որդին մեզի պարզեւելէն
ետքը . Զետք , “Ն նովու հոնդեք
շամայն շնորհից եւ : Գիտենք որ
Հայրն յաւիտենական ամեն իշխա-
նութիւն տուաւ Յիսուսի . Զեմուն
ին եւ Հոյք ի յեւ նոր : Ուրեմն
անգաղար շնորհակալ ըլլանք Աս-
տուծոյ բարութեան , ողորմութեան ,
առատաձեռնութեան , որ զմեզ ամեն
շնորհըներով Հարստացընելու Հա-
մար՝ իր սիրելի Որդին մեզի շնորհեց
Հաղորդութեան խորհրդոյն մեջ : Յա-
մեայն մեծացործ + դու+ նովու+ զ
դու+ մենուշից+ եւ մեիւշ+ շնորհէ+ :
Ուրեմն ով Փրկիչ աշխարհի , մար-
մացեալ Բանգ Աստուծ , կրնամ
ամենայն Համարձակութեամբ ըսել ,
թե զու իմա ես , բոլորովին իմա՝ եթե
ուզեմ : Բայց կրնամ յանդոնիլ ը-
սելու թե ես ալ բոլորովին քո կո-
հման ինչպէս որ զուն կ'ուզես : Թող

միտաք, որ աշխարհիս վրայ այս-
պիսի ապերախտութիւն գործուի, որ
զուն, բաղձացած ժամանեակա՝ իմս
ըլլաս, իսկ ես՝ զեմ զնեմ բաղ-
ձաներիդ՝ եւ չուզեմ քուկդ ըլլալ:
Առոյգ է, յառաջագոյն աս բանս
պատահեցաւ, բայց մի թողոր որ
այսուհետեւ ալ ըլլայ: Հաստատոն
առաջադրութիւն կը զնեմ՝ այսօրը ը-
նէ ինք զինքս քեզի բոլորանուեր
ողակեղ ընելու: Քեզի կը նուիրեմ
այսօր եւ ընդ միշտ իմ կեանքս,
կամքս, խորհուրդներս, զործքերս
եւ ամեն վշտերս: Աւասիկ Տէր, այ-
սուհետեւ քուկդ եմ. քեզի նուի-
րեալ պատարագի մը պես՝ ամեն
արարածական իրերէն կը հրաժա-
րիմ եւ բոլոր անձս քեզի կ'ըն-
ծայեմ: Աստուածային սիրոյդ բո-
ցովը մաշէ, սպառէ զիս: Չեմ ուզեր
որ այսուհետեւ արարածները սրտիս

մէջ մաս ունենան։ Այս սէրբ՝ զոր
ինծի ցուցուցիր նաև զքեզ չսիրած՝
մանաւանդ թէ առած ժամանակս՝
կը յուստոցինէ զիս՝ թէ հիմակ ալ
որ զքեզ կը սիրեմ՝ աղաչանքս կ'ըն-
դունիս։

Հայր յաւիտենական, քեզի կը
նուիրեմ այսօր, սիրելի Ուդոցդ
ամեն առաքինութիւնները, հառա-
շանքներն եւ սրտին իղձերը։ Ընդունե-
զանոնք իմ ձեռքեւ, եւ իր արժա-
նեաց համար — որ իմն ալ են՝ վասն
զի ամենն ալ ինծի պարզեւած է, —
այն շնորհքները առոր ինծի՝ զոր
Միածինդ քեզմէ կը խնդրէ։ Յիսու-
սին աս արժանեօքը շնորհակալ
կ'ըլլամ մինչեւ հիմակ ինծի ըրած
ողորմութեանդ եւ բարերարու-
թեանցդ։ Կոյն արժանեօք հատո-
ցում՝ կ'ընեմ մեղացս պարտոցը։
Այս արժանեօք կը յուստոցին՝ քեզմէ

ամենայն ինչ . թողութիւն , յարա-
տեւութիւն , արքայութիւն եւ ա-
մենէն մեծ պարզեւը՝ քու սուրբ
սերգ : Գիտեմ , Տէր , որ աս շնորհք-
ներուն ես եմ արդելք զնողը ,
բայց գուն ասոր ալ գարման տար :
Աս շնորհքները կը խնդրեմ Յիսուսի
անուամբն որ խոստացաւ թէ . Զոր
թւ եւ ինդրէցեւ է Հօրեւ իմաւ յանուն
իւ , ուղեւ յեւ : Ուրեմն իր անուամբը
ինդրածու չես կրնար զլանալ : Տէր ,
որիշ բանի չեմ բաղձար , բայց
եթէ քու սիրոյդ : Ենք զինքս բոլո-
րովին քեզի կը նուիրեմ : Հայրական
աչքովդ ինձի նայէ եւ լու աղաւա-
նացաւ : Ծնորհէ որ այսօր՝ ճշմար-
տապէս քեզի գառնալուս նշանաւոր
օրն ըլլայ : Ծնորհէ որ այսուհետեւ
ըդքեզ սիրելէ չդադրիմ : Կը սի-
րեմ զքեզ , ով Աստուած իմ , կը
սիրեմ զքեզ , անսահման բարու-

թիւն իմ, արքայութիւն իմ, կեանց
իմ, կը սիրեմ զքեղ. ամէն:

Յիսուս իմ եւ ամենայն ինչ,
զուն կը բաղձաս որ քուկդ ըլլամ,
ես ալ ուրիշ բան չեմ ու զեր:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՅ Ս. ԿՈՅԱՆ

Ով ամենաստ բբ Կոյս, որչափ
օգնութիւն կը գտնեմ տառապա-
նացս մէջ, որչափ մխիթարութիւն
փորձութեան ժամանակ, ինչւափ
զօրութիւն նեղութեանցս մէջ, երբ
անունդ կը յիշեմ եւ զքեղ օգնու-
թեան կը կանչեմ: Կրաւոնք ունիք,
ով սուրբք Աստոծոյ, երբ զՄա-
րիամ "Կաւահանգիստ վտանգ ելոց,
տառապանաց մէջ սիմոխութիւն, ար-
տաստաց փարատիչ եւ մխիթարու-
թիւն, կ'անուանեք: Մայր իմ Մա-
րիամ, օգնէ ինձի, վասն զի լի եմ
ամէն աևսակ մեղքերով, թշնամի-

Ներէն պաշարուած, առ աքինու թիւն-
ներէ զորկ, Աստուծոյ սէրէն պա-
ղած: Օգնէ, կ'աղաւեմ, օգնէ ինձի,
որ նոր կեանք սկսիմ. ամեն:

Փոխէ զիս, Մայր իմ, փոխէ սիրոս.
զիտեմ որ առ բանս ընելը ձեռքդ է:

Ի Թ. Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ

Ա-ս-է-ի ի-մ է-ս ո-ս դ-ո-ր-ս է-ս-
է-է-ս: Ո՞վ մարդասէր հովիւ, որ սի-
րելի խաշանցդ համար ինք զինքդ
խաշին՝ վրայ զոհ մատուցանելով՝
մեզի համար մեռնիլը բաւական չհա-
մարեցար, հապա նաև մեր խորան-
ներուն վրայ առ աստուածային խոր-
հըրդեան մեջ մեր սիրոյն համար
ծածկուած մնալ ողեցիր, որպէս զի
մեր սրտին գուոր ստեղ եւ աւելի
մօտէն կարող ըլլաս բախել եւ
այսպէս մեր սրտերուն մօտենալ: Ոհ,

երանի թէ ևս ալ մօտաւոր թէ ամրդ
այնպէս կարենայի ուրախանալ, ինչ-
պէս Հարոդ կը ցնծար ու կ'ըսէր.
Ընդ հովանես՝ Նոր շանիսցոյ, Նորել
Ե- Նորոյ: Ով ցանկալի Խորհուրդ,
երանի էր ինծի՛ եթէ զքեզ ճշմար-
տապէս սիրէի: Այն ժամանակ քեզմէ
հեռանալու շէի բաղձար, բոլոր խրն-
դութիւնն ու երանութիւնն հացի
կերպարանց տակ ծածկուած փա-
ռացդ շքին մէջ կը զանեի: Աս սի-
րոյ Խորհրդեան մէջ պահուած շնոր-
հագդ բոլորովին քեզի քաշէ զիս:
Չէ՞ւ զիս. զնեա հորոյ իւզոց ուց ըն-
թացուած ժէ: Այն, սիրելի Փրկիչ,
այն ժամանակ ամեն բան թող կու-
այի, ամեն երկրաւոր հանճարին-
ներէ կը հրաժարէի եւ սուրբ Հա-
ղորդութեան մէջ ծածկուած Աս-
տուծոց եւուեւն կ'երթայի:

Ուղիւ Նորապահուած իւնիւնոյ, զուրջ

Համարելութեան որ-
շափ գեղեցիկ պառզեր կը բերեն՝
նորատոնկ ծառերու պէս ան երա-
նելի հոգիներն, որ սմենասուրբ
շաղորդութեան առջեւ կեցած՝ սի-
րովդ կը բորբոքին: Բայց ևս այսպէս
ամեն առաքինութիւններէ զուրկ,
առջեւդ ելլելու կ'ամչեամ: Դռն կը
հրամայես որ սեղանոյդ մերձեցողն՝
առանց ընծայի չդայ. ԱՆ ԵՐԵՒՆԻ-
ՌՈՎՆՅԱՆ ՏԵՐԵՆԴԱՅ ՀԱՆԱՅԻՆ-
ՅԵՆ: Աւրեմն ինչ ընեմ, չելլում
առջեւդ, քեզի այցելու թիւն չընեմ:
Ահ, չէ, զուն աս չես ուզեր: Թէեւ
աղքատ եւ խեղճ՝ քեզի կը ներ-
կայանամ. զուն շնորհէ ինծի ան
պարզեւները՝ զօր կը բազձաս որ ես
քեզի նուիրեմ: Այ տեսնեմ որ զուն
Ս. Խորհրդոյն մէջ կը սպասես՝ ու
միայն սիրելիներուդ վարձք տալու,
հապա նաև աղքատները շնորհացդ

առուրբերովն Հարստացընելու հա-
մար:

Ասու ած իմ, կատարէ սիրալիք
դիտաւորութիւններդ իմ վրաս: Ով
իմ սրտիս թագաւորը, հօտիդ սի-
րովը վառուած խանգակաթ Հովիւ-
սիրոյ աթուիդ կը մերձենամ և
երկրապագութիւն կ'ընեմ: Եւ որով-
հետեւ մատուցանելու որիշ բան
չունիմ, ողորմելի սիրտս՝ իրրեւ ըն-
ծայ առջեւդ կը գնեմ, որ սիրոյդ եւ
հաճայիցդ ողջակէզ ըլլայ: Չեռքէս
եկածին չափ կ'ուզեմ սիրել զքեզ:
Քեզի ձգէ զիս, անքակ կապէ զիս
սուրբ կամացդ հետ՝ որպէս զի կա-
րող ըլլամ Առաքելոյդ հետ ըսիլ՝
թէ Եւ իւղեւլ Յիսուսէ Քրիստոսէ:
Զիս քեզի հետ միացոր: Ընորհը
տուր որ ամեն բան կորանցընեմ եւ
զքեզ միայն գտնեմ, զքեզ միայն
սիրեմ: Այս սիրեմ զքեզ, Ա. Խոր-

Հըրդոյն մէջ ծածկուած Առողուած,
քեզի հետ սերտիւ կը կապուիմ,
կ'ուզեմ քեզի հետ միաւորիլ: Ընորհե
որ զքեզ միայն զանեմ, զքեզ միայն
սիրեմ. ամեն:

Յիսուս իմ, զուն միայն ինձի
բաւական ես:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՌ Ա. ԿՈՅՉԻՆ

Սուրբն թիոնարդոս զՄարիամ՝
կ'անուանէ ։ Արքունի ճանապարհ,
որուն վրայէն ապահովութեամբ մեր
սիրելի Փրկչին և փրկութեան կը
հանինք: Ուրեմն, թագուհի իմ,
որովհեածեւ Հզօր պաշտպանու-
թեամբ մեր հոգիներուն առ Առ-
առած կ'առաջնորդես, կ'ազաշեմ
առ զիս մայրենի բազկացդ մէջ և
Առածոց հասցուր: Տար, տար զիս,
ու եթէ գէմ կենամ, բանութեամբ
տար: Կապէ Հոգիս և անսառու

կամքս սիրոյդ քաղցր կապանքովն,
որպէս զի բոլոր արարածները թող
տալով՝ զԱստուած եւ իր աստուա-
ծային կամաց կատարումը փնտուե:
Ո՞վ Մարիամ, ցոցոր երկնից թէ
որչափ մեծ է զօրութիւնդ: Այնչափ
սքանչելիքներուդ վրայ՝ առ հրաշքն
ալ ըրեւ, եւ զիս Աստուծոյ մօռե-
ցոր, որ Աստուծու բոլորովին հե-
ռացած եմ:

Մարիամ, դուն կրնաս զիս սուրբ
ընել, կը յուսամ որ իրօք ալ կ'ը-
նես:

L. ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Ընդէր Ռաւուցանեւ չէրես ու յի-
նէն: Կը վախնար Յովիր՝ տեսնելով
որ Աստուած երեսն իրմէ կը ծածկէ:
Բայց մենք վախնալու պատճառ չո-
նինք՝ երբ կը տեսնենք թէ Յիսուս

Ա. Հաղորդութեան մէջ իր մեծ վայել-
չութիւնը մեզմէ կը ծածկէ : Մանաւ-
անդ թէ՝ պէտք է որ մեր վստահու-
թիւնն ու սերն առելայ, վասն զի
մեր սեղաններուն վրայ անոր համար
հացի կերպարանաց տակ ծածկուած
է, որ իր սերն առելի յայտնի ընէ եւ
զմեզ քաջալերէ իրեն վստահելու :
Աստուած՝ կ'ըսէ Կովաբրինոս, Ա. Խոր-
հըրդոյն մէջ երեսը մեզմէ ծածկե-
լով իր մեծ սերը յայտնի կ'ընէ :
Աւան զի եթէ իր շքեզութիւնը
յայտնապէս ցուցիներ՝ ով կը հա-
մարձակէր իրեն մերձենալու եւ
իդձերն իրեն յայտնելու :

Ով Յիսուս իմ, ինչպիսի գեղե-
ցիկ հնարք է մասնածք, որ ամե-
նասուրբ Հաղորդութեան մէջ ինք
զինքդ հացի կերպարանաց տակ ծած-
կեցիր, որպէս զի տեսութեանդ բազ-
ացովն՝ զքեզ հաւերկրիս վրայ կա-

րենայ միշտ գտնելու սիրել։ Կրտ-
ունք ուներ Մարդարեն գունը՝ թէ
երթան մարդիկ, բոյոր աշխարհ հըս-
չակեն Աստուծոյ՝ մեզի ցուցուցած
սիրոյն մեծութիւնը։ Ո՞չ սիրալիր սիրա
Յիսուսի, ամէն արարածոց սրաերը
գրաւելու արժանի ես։ Ո՞վ աս-
տուծային սիրա, որ մեզի ունեցած
սիրով կը բորբոքիս, մաշե զիս բո-
լորովին եւ շնորհաց նոր կեանք մը
տուր։ Այնպէս միացուր զիս քեզի
հետ, որ այսուհետեւ քեզմէ երբեք
կարող չըլամ հեռանալ։ Ո՞վ սիրա
Յիսուսի, որ միշտ պատրաստես քեզի
զիմովներուն օգնութեան համելու,
ընդունե զիս։ Ո՞վ սիրա Յիսուսի իմոյ,
որ աշխարհիս մեզացը համար խաշին
պայ մեռար, շնորհե ինձի մեզացս
պայ ճշմարիս ցաւ։

Գիտեմ, Տէր իմ, որ Ա. Խորհր-

դոյս մէջ այն բօրբոքեալ սէրը կը
պահես, զոր մահուանդ տառենը գող-
զոթայ լեռան վրայ ունեիր։ Անոր
համար շատ կը բաղձաս որ զիս քեզի
հետ բոլորովին միացընես։ Կարելի
բան է որ դէմ կենամ, եւ շողեմ
ինք զինքս կամացդ ու բաղձանացդ
յանձնել։ Ոչ Յիսուսիմ, արժ անեացդ
համար՝ վերաւորէ սիրտս եւ միացուր
սուրբ սրտիդ հետ։ Կ'առաջազրեմ
շնորհքովդ ամեն հաճոյքդ կատարել,
ուրի առկ առնելով ամեն մարդ-
կային ակնածութիւն, հրաժարելով
ամեն հաճոյքներէ՝ որ արգելք կ'ըլ-
լան սուրբ կամացդ կատարմանը։
Ընդհէ, որ հաստատ պահեմ առա-
ջազրութիւնս, այնպէս որ՝ առկէ եալին
ամենխոլիհորդներս, խօսքերս, զ ործ-
քերս, բաղձանացդ համեմատ ըլլան։
Ո՛վ սէր Աստուծոյ իմոյ, հեռացուր
սրտէս ամեն օտար սէր։ Յոյս իմ

Մարիամ՝ որով Աստուծոյ առջեւն ա-
մենազօր ես, ընդունե ինձի շնորհք՝
որ Յիսուսի սիրոյն մէջ մինչեւ ցմահ
յարատեւեմ։ Այսպէս կը յուսամ,
այսպէս ալ ըստ հիմայ եւ յար-
տեանս, ամեն։

Ո՞վ կրնայ զիս բաժնել Յիսուսի
աէրթէն։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԸՆ Ս. ԿԱՅԱՐ

Սուրբն Բեռնարդոս կը հաստատէ-
թէ, Մարիամ չի կրնար զմեղ աւելի
սիրել, քան որչափ իրօք կը սիրէ։
Անոր համար մեր վրայ մէծ զութ անի,
մեր վշտացը ցաւակից է եւ կարո-
ղութեամբ մեղիւ միշտ օգնութեան
կը հասնի։ Արդ, ո՞վ հզօր Թագուհի,
որովհեանեւ կատարեալ ես զօրու-
թեամբ եւ լի զթութեամբ, ա-
նոր համար կը պաղատիմ քեզի այսօր
եւ միշտ ըսելով։ Ո՞վ հզօր Թագու-

Հի, պատերազմելու ժամանակ քովս
կեցիր, զօրացուր զիս որ չէյնամ:
Օգնել ինձի գծոխոց գեմ պատե-
րազմելու առենս: Եւ եթե տեսնես որ
իյնալու մըս եմ, երկնցուր բազուկդ
եւ կանգնել զիս: Գիտես թէ մինչեւ
կենաց յետին շունչը՝ որչափ մոր-
ձոթեանց գեմ զնելու կը հարկա-
գրիմ: Ո՞վ յօյս իմ, ապաւեն իմ
եւ զօրութիւն իմ Մարիամ, թզի
մի տար որ Ըստուծոյ շնորհքը կոր-
սրնցընեմ: Ես իմ կողմանէս կ'առա-
ջազրեմ միշտ քեզի զիմելու ամեն
մորձութեան առեն՝ շուտ մը օգնու-
թեանց ապաւինելու՝ ըսելով.

Օգնել ինձի, Մարիամ, օգնել ընձի
ամիեն:

ԼԱ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Խեցիսի գեղեցիկ տեսարան կը
մատոցանէր քաղցր Փրկիչն, երբ

Ճամբորոցոթենէ յագնած՝ լի զթու-
թեամբ ջրհորի մը քով Սամարացի
կնոջ կը սպասեր, որ զինք ուղղու-
թեան բերէ եւ փրկութեան հաս-
ցընէ. Եւ Յիսուս Հոռել է Աբրամ ա-
բերն: Այսպիսի քաղցրոթեամբ ալ
երկինքէն իշնալով՝ մեր սեղաննե-
րուն վրայ մեղի կը սպասե, իբրև
շնորհաց աղբիւրներու քով, եւ կը
հրաւիրէ որ երթանք՝ զոնէ քիչ մը
ժամանակ հետք խօսակցինք, որպես
զի իր սիրովի զմեղ բորբոքէ: Կար-
ծես թէ Փրկիչը մեր սեղաններուն
վրայէն ամենուն կը զաշէ: Ով մար-
դիկ, ինչո՞ւ կը փախչիք իդմէ, ինչո՞ւ
չէք մերձենար ինծի, որ սրտանց կը
սիրեմ զձեղ, եւ միոյն ձեր բա-
րոյն համար կը կենամ հոս: Ի՞նչ
բանէ կը վախնաք: Աշխարհք եկած
եմ, չէ թէ զձեղ դատելու, հասպա
սիրոյ խորհրդեան մէջ ծածկուելով՝

ամենուն բարիք ընելու եւ ամեն ին-
ձի դիմովները փրկելու համար։ Ու
Են վ գոյացոյց շախութ, ոյւ վ թըր-
իւթ շախութ։

Ուրեմն մոտած ենք՝ թէ ինչպէս որ
Երկինքն Յիսուս Առաջ կենտանի է՝ Ա-
ռեւ բարեխօս քան մը, անանկ ալ Ա-
խորհրդեան մը ներկայ է, եւ ան-
գագար իր բարեխօսութեան պաշ-
տոնն ի զործ կը զնէ, միշտ ինք զինք
յաւիտենական Հօր պատարագ մա-
տոցանելով՝ որպէս զի մեզի համար
ողորմութիւն եւ շնորհր ընդունի։ Ա-
սոր համար կ'ըսէ թուվմաս Աեմոլացին.
ոյւաք է որ ստեղ Հաղորդութեան
խորհրդոյն ձեռքովք Յիսուսի մեր-
ձենանք եւ հետը խօսակցինք, ա-
ռանց վախուի եւ ակնածութեան իրրեւ
սիրելի բարեկամի հետ։

Արդ որովհետեւ հրաման կո-
տաս որ քեզի մերձենամ, թէ ոյլ տուր

միանգ ամայն, ով ծածկեալ թագաւոր
որ եւ Տէր փառաց, որ վստահու-
թեամբ բանամ առջեւդ սիրոս եւ
ըսեմ. Ով Յիսուս, Հոգւոյս միակ
սէրը, կը ճանշամ մարդիկներուն
անիրաւովիւնք: Դուն զանոնք կը
սիրես, իսկ անոնք զքեզ չեն սիրեր:
Դուն անոնց բարիք կ'ընեա, եւ առ
ամէն բարեաց մոխարէն իրենցմէ
թշնամանք կ'ընդունիս: Դուն անոնց
կը մերձենաս, իրենց հետ բարեկա-
մանալ կ'ուզես, իսկ անոնք քեզի միա
չեն զներ: Դուն շնորհացդ զ անձն
անոնց առջեւը բացած՝ կը հրաւիրես
որ դան, առնուն, իսկ անոնք շնորհը-
ներդ կը մերժեն.

Ո՞չ Յիսուս իմ, ի՞նչպէս եղաւ
որ ես ալ այնչափ երկայն ժամանակ
այս ապերախտներուն հետ միաբա-
նեցայ, եւ ոչ միայն շնորհըդ մեր-
ժեցի, այլ նաև զքեզ վշտացոցի:

Ամյ ինծի, կը ցաւիմ ապերախտու-
թեանս վրայ: Այսուհետեւ կը բաղ-
ձամ ինք զինքս ողղել: Կառաջա-
զրեմ կենացս մնացած օրերը չանալու՝
որ քեզի հասցոցած անչափ դառ-
նութեանցու՝ ձեռքեւ եկածին չափ
հասցոցամ ընեմ, կամքդ միայն կա-
տարելով:

Եսէ Տէր իմ, իզմէ ինչ կ'ուզես,
որ ես ալ առանց ընդդիմութեան
ամենայն յօժարութեամբ կատարեմ:
Սուրբ Հնազանգութեան ձեռքովու
ճանչցուր միայն կամքդ եւ կը խո-
տանամ ամեն ակնարկութեանցդ
կատարեալ հպատակութիւն մասու-
ցանել: Ով Աստուած իմ, հաստա-
տութեամի, կ'առաջազդրեմ ասկէ-
ետքն այն միայն ընել՝ ինչ որ կը
աերնեմ թէ քեզի հաճոյ է, թէ պէտ
հարկ ըլլայ ամեն բան կորսնցընել,
ծնողքս, ազդ ականներս, բարեկամ-

ներս, պատիւս, առողջութիւնս եւ
նոյն խել կեանքըս: Ամէն բան կրտսուի,
հաճոյքդ միայն կատարուի: Երջանիկ
է մարդ՝ երբ ամէն բան կը կորորն-
ցընէ, որպէս զի սիրադ վաստրկի: Աը
սիրեմ զքեզ, ով անեզը բարու-
թիւն, վասն զի ամէն բարութիւն-
ներէն աւելի սիրելի ես: Աը միաւո-
րեմ խեղճ սիրաս սերուզէից սիրա-
ցան սրտին հետ, կը միացընեմ
Մարեմայ եւ քու սրտիդ հետ: Բոլոր
սրտես ու ամէն զօրութեամբս կը
սիրեմ զքեզ, զքեզ միայն սիրել
կը բաղձամ, միայն զքեզ սիրել
կը ցանկամ. ամէն:

Աստուածիմ, Աստուածիմ, քու կո
կմ, զոն ալ իմս ես: ամէն:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՅ Ա. ԿՈՅԱՆ

Մ'եր ամէնասուրը մայրը միշտ
Աստուածոյ առջին կենալով՝ անդա-

զար մեղի համար կը բարեխօսէ, եւ
զմեղ կը պաշտպանէ իր աղօթիւքն,
որ Աստուծոյ առջև շատ զօրաւոր
են: Իր գթած աչուրները միշտ բաց
են եւ կը դիմեն ամենուն եւ մա-
նաւանդ իր ջերմեռանդներուն կա-
րօսութիւնները: Աւրեմն, ով ամե-
նասիրելի Մայր, կը աեսեն նաեւ
իմ խեղճութիւնս, կը աեսեն թէ
արշափի վասնեցներու մէջ կը պարտիմ,
եւ արդեօք կ'աղաչես բնձի համար:
Աղաչէ, աղաչէ, եւ աղաչելէն մի
զազրիր՝ մինչեւ որ զիս երկինքը քովդ
չուեսնես, ուր քեզի անդադար շնոր-
հակայութիւն մասուցանեմ: Գիտեմ
որ գուն, Յիսուսէն եռքը՝ հաւա-
տարիմ՝ ծառայիցդ ապահով փրկու-
թիւնն ես: Ընդունէ ուրեմն այս
շնորհը՝ զոր կը խեղճիմ քեզմէ
այսօր, այս ինքն՝ թէ մինչեւ ցմահ
քեզի հաւատարիմ մեամ, որովէս զի

մահուրնես ետքը դամ զքեղ եր-
կինքն օրհնեմ, բռլորովին ապահով
ըլլալով՝ որ ալ անկե ետեւ ամենա-
սուրբ ռոքեղ պիտի չհեռանամ
քանի որ Աստուած Աստուած է:

Ո՛վ Մարիամ, սիրելի Մայր, շնորհէ
որ միշտ քուկդ ըլլամ. ամեն:





ՑԱՆԿԱԼՈԹԻՑ

ԵՐԵՎԱՆ

ԱՌՏՈՒՄՆ ԱԴՕԲ-ՔՆԵՐ

Պատրաստութիւն	1
Ազօթք գոհութեան	3
Հայր մեր, Աղջոյն քեզ, Մարիամ	6
Ազօթք առ Ա. Ասուածածին	7
Ազօթք առ Ա. Յովակի Ասուածածին	10
Ազօթք առ պահապան հրեշտակն	11

ՊԱՏԵՐԵԴԻ ԱԴՕԲ-ՔՆԵՐ

Հաւատամբի ի մի Ասուածած	22
-------------------------	----

ԵՐԵՎԱՆ ԱԴՕԲ-ՔՆԵՐ

Պատրաստութիւն	40
Խրիկուան ազօթք չնորհակալութեան	42
Ազօթք զզիման և առաջացրութեան	44
Ազօթք ինք զինքնիս Ա. Ասուածածածին պաշտպանութեան, յանձնելու	45
Ազօթք առ Ա. Յովակի Ասուածածին	46
Ազօթք յանձնարծական մահուանէ ազատելու համար	48

ԱՂՋՄԱՆԻ ԱՅ ՍՈՒՐԲ ԸՆԹԱՎՈՐԻ
ԸՆԹԱՎՈՐԻ ՕՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Երես

Աւելի. Աղօթք մեզաց թողովթեան համար	51
Երեւ-բնի. Աղօթք յարաւուու- թիւն ընդունելու համար	53
Երեւ-բնի. Աղօթք երջանիկ մահ ինդրելու համար	55
Չորեւ-բնի. Աղօթք զժոխքէն ազա- տելու համար	58
Հիւ-լ-բնի. Աղօթք յաւիսենական երանութեան համար	61
Ու-բ-ն. Աղօթք Մարեմայ և Յի- ռուսի մէրն ընդունելու համար	63
Շ-բ-ն. Աղօթք Մարեմայ բարեխօ- սութիւնը ինդրելու համար	65

ՕՐՈՒԵՆ ՄԵԶ ԸՆԵԼՈՒ ԶԱԿԱԶԱԿՆ
ԱՂՋՄԱՆԻ

Աղօթք ծնողաց՝ իրենց զուակացը համար	69
Աղօթք ծնողաց համար	71
Աղօթք եղբարց ու քերց համար . .	74
Աղօթք ամէն հաւասարցերց համար	75
Աղօթք քաւարանի հոգւոց համար	77
Աղօթք մաղձայուղի և հիւանդու- թեան ժամանակ	79
Աղօթք նեզութեան կամ հիւանդու- թեան առեն	81

Աղօթք Եկեղեցւոյ վերահստ տառա-	
պանացն առջևին առնելու Համար . . .	83
Աղօթք Ա. Թուվմայի՝ առաքինու-	
թիւններին ստանալու Համար . . .	84
Աղօթք առ սիրտ Յիսուսի	87
Արբշ ազօթք առ սիրտ Յիսուսի	90
Աղօթք առառու, կեսոր ու իրիկուն	
ըսելու: (Հրեշտակ Տեսան)	92
Յիսուսց առեն: (Ուրախ լեր Թա-	
գուհի երկնից)	93
Լուրեստանեան Լիսունիւր	94
Մաղթաներներ առ Ա. Վասուածու-	
ծին: Ողջ լեր Թագուհի	97
Վասուած անհառելի:	98
Ընդ Հոգանեաւ	99
Ողջոյն Թագուհի Երկնաւ որաց . .	100
Վասն Արբուհւոյ. — Ա. զԱ. Վասուա-	
ծածինն. — Ընկալ աէր	100
Մայր սուրբ	101
Մհծացուացել	104
Ապաշխառութեան եօթն սազմանեարք	105
Տէր ամենակալ	122
Հաւ առողջ խոստովանիմ	127
Աղօթք Արքոյ Հօրն մերոյ Գ. քիզարի	
Լուսաւ որչին, երբ մէկը սառաւ-	
նային որոգայթին մէջ ինկած է .	136
 ԽՈՍՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԱՊՈՔՆԵՐ	
Պատրաստութիւն	140
Աղօթք Խղճի մասց քննութէ յառաջ	144

Աղօթք մտաց լուսաւորութեան համար	146
Խզմի մտաց քննութիւն	148
Աղօթք խզմի մտաց քննութենէն ետեւ .	154
Աղօթք առ Ծիսուս Փրկիչ	156
Աղօթք առ Հոգին ոռւրբ	157
Աղօթք զզիման ու առաջազրութեան .	159
Աղօթք առ Ա. Աստուածածին	161
Զօրաւոր աղօթք զզիման	162
Խոստովանիմ առաջի	163
Խոստովանութենէն ետեւ աղօթք շնորհակալութեան	163
Աղօթք խոստովանանիմին ընդունեւ- րութեանը համար	165
Աղօթք յարատեւութեան շնորհք ընդունելու համար	167
Աղօթք առ Ա. Աստուածածին	168
Ա. ՀԱՊՈՒԹՈՒԹԵԱՆ ԱԴՅԱԿՆԵՐ	
Պատրաստութիւն	173
Ա. ՀԱՊՈՒԹՈՒԹ ՀԱՅՐԴԻ-ԲԱՐԵ-ԼԻ	
Ա. ՀԱՊՈՒԹՈՒԹ ՀԱՅՐԴԻ-ԲԱՐԵ-ԼԻ յուղ.	
Ա. ՀԱՊՈՒԹՈՒԹ ՀԱՅՐԴԻ-ԲԱՐԵ-ԼԻ .	176
Ա. ՀԱՊՈՒԹՈՒԹ յուղ	178

Կերպործութիւն սիրոյ	179
Կերպործութիւն խռովարհութեան	180
Կերպործութիւն զղջման	182
Կերպործութիւն փափաքանաց	183
Ա ՀԵՆԻՆ-ՇԻ Հ-Ղ-ՐԴ-ԲՒ-Խ ՀԵՐԵՎԱՆԻ	
Կոբելք	184
Կերպործութիւն հաւատոյ	185
Կերպործութիւն ընդունելութեան .	186
Կերպործութիւն շնորհակալութեան .	188
Կերպործութիւն նութեան	189
Կերպործութիւն աղախանաց	192
Աղօթք առ Ա . Աստուածածին	196
Աւուրիւրագութեան	197
ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒ ՀԸՄԱՐ	
Ա Դ Օ Բ Ք Ա Ե Ր	
Քրիստոնի ծննդեան	199
Կոր տարւոյ	201
Աստուածայացանութեան	202
Տեսոնքառակարգին	204
Աւետման	205
Զատկին	207
Համբարձման	208
Հոգեգալարտեան	209
Աւերբ Երրորդութեան	211
Աերափոխման	213
Երևագեւան Ա . Աստուածածինի	215
Աւուրիւրագութեան	217
Անապատ լուսութեան	218

ԱՐՅՈՒԹԵՐ ԸՆ ՍԻԼԲՈՒՆ ԵՍԱԽԵՐՈՑ

Երես

Աղօթք առ ուսրբ Յովակի Աստուա-	
ծահայր	220
Աղօթք առ սրբուհի Աննա	222
Աղօթք առ Ա . Յովհաննես Մկրտիչ	223
Աղօթք առ Ա . Պետրոս և Պավո	224
Աղօթք առ Ա . Առաքանոսնախավկայ	226
Աղօթք առ Ա . Գրիգոր Լուսաւորիչ	227
Մազթանիք ի պատիւ սրբոյ Հօքն	
մերոյ Գրիգորի Լուսաւորչին . . .	229
Աղօթք առ սրբուհի Հռիփոսիմ . . .	234
Աղօթք առ Ա . Հայրն Անտոն Տրդ-	
նաւոր	236
Աղօթք անուանը սրբոյն	237
ՄԱՄՆԵՏՈՐ ԶԵՐՄԵՌԱՆԴԱՐԱՏԻՒՆԵՐ	
Ա . Ճանապարհ Երան	240
Բ . Պարքապատճեն Հանդեպահ Քահա-	
պահ	263
Գ . Ա . Վարդապահն Արքամանու-	
թան	266
Գ . Ա . Կառլի Երիւ շահոց Արքամանու-	
թան	272
Կայր առ Խաչին	281
Ե . Ինչէից պարքապատճեն մա-	
պատճեն Յշութեան Ա . Կառլի . . .	283
Լիուանիա անարատ Յշութեան .	286
Զ . Յիշեանդարքանիւն Ա . Աւ-	
արքան Յայր Յշութեան . Ա . Յովա-	
կայ յաւերին և ուրախութիւնները	302
Է . Քահապատճեն Ա . Կառլի . . .	309

ԶԱՆԱԳԱՆ ԱՂՈՔ-ՔՆԵՐ ԱՅ Ս-ԱՍՏԻԱ-
ԾԱԾԻՆ

Եղիսակ

Աղօթք ինք զինքը Ա- Առառու ածածնի յանձնելու	324
Աղօթք Ա- Առառու ածածնի առարի- նու թեանցը նմանելու	326
Աղօթք սղջախոհու թեան չնորհք խնդրելու համար	328
Աղօթք բարի մահ խնդրելու համար	329
Աղօթք փորձութիւններէն ազատելու համար	330
Աղօթք առ սիրան Մարիամնա	332
Աղօթք Ա- Առառու ածածնոյ սկըն ընդունելու համար	334
Աղօթք զզջացեալ անձի մը առ Մա- րիամ	336
Աղօթք զոր Մարիեմոյ ամէն որդին ընելու է	337

ՔԵՆԻ ՄԸ ՄՐՑՈՑ ԱՅ ՄԵՐԻԵՐ
ԱՂՈՔ-ՔՆԵՐԸ

Արբոյն Ալոյիզիոսի	339
Արբոյն Օդոսամինոսի	340
Արբոյն Հոգէ. Դամանակացւոյն . .	342
Արբոյն Բենանարդոսի	343
Աւրիշ Աղօթք	344
Արբոյն Բանաւ Ենոքու բայի	345
Արբոյն Եփրեմի	346

Ա. ԱՐԵՈՒՈՐԵԱՆ Ը ՅՅԵԼՈՒԹԻՒՆՆ
ԲԱՐԵՆԱԾՈՒՐԻ ՀԱՎԱՐԴԱՒԹԵԱՆ ԵՒ
Ս. ԿՈՒՄԻՆ

ԵՐԻՆ

Պատրաստութիւն	348
Հոգեւորական հաղորդութեան վրայ	357
Հոգեւորակեան հաղորդութեան եղանակ	359
Ամեն այցելութենէ յառաջ առ Յիւ առ ափրկիւ ազօթք	364
Ամեն այցելութեան վերջը առ Առա- տու աժածին ազօթք	373



0075075

Հ Յ ՝

«Ազգային գրադարան»



NL0015015

